ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **5**

Գնաճի զարգացումներ **7**

Գնաճի գործոններ **11**
Արտաքին միջավայր 11
Տոկոսադրույքներ և փոխարժեք 15
Վճարային հաշվեկշիռ 20
Դրամավարկային զարգացումներ 23
Համախառն պահանջարկ և առաջարկ 28
Աշխատանքի շուկա 32
Ներմուծման և տեղական արտադրանքի գներ 33

Մակրոտնտեսական կանխատեսումներ **36**
Արտաքին միջավայրի զարգացումներ 36
Ներքին տնտեսության զարգացումներ 37
Գնաճի կանխատեսումներ 38

ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրություններ ... **40**

ՀՀ ֆինանսական հանակարգը **50**

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ **61**

Մակրոտնտեսական ցուցանիշները 2006 թ. հունվար - սեպտեմբերին **68**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ **82**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչություն

ՀՀ և ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների և ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքը ըստ մարզերի (30.06.2006 թ. դրությամբ) **83**

Ներածություն

2006 թվականի անցած ինն ամիսների արդյունքներով՝ 12-ամսյա գնաճը (2006թ. սեպտեմբերը 2005-ի սեպտեմբերի նկատմամբ) գերազանցել է նպատակային ցուցանիշը, ինչը տեղի է ունեցել «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբի գների սեզոնային ավելի քիչ անկման և ներմուծման գների աճի հետևանքով. վերջիններս գնաճին նպաստել են համապատասխանաբար 1.8 և 1.2 տոկոսային կետով: Սեպտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 5.9%՝ կանխատեսված 3.0%-ի փոխարեն, որին համապատասխանում է սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, 2.3% գնաճի ցուցանիշը: Ընդ որում, սպառողական գների զամբյուղի երեք խոշոր բաղադրիչների՝ պարենային, ոչ պարենային ապրանքատեսակների և ծառայությունների գները բարձրացել են համապատասխանաբար 6.1%, 3.3% և 4.5%-ով:

2006 թվականի երրորդ եռամսյակում արձանագրված բարձր՝ 13.1% տնտեսական աճը, ինչպես և տարվա առաջին կիսամյակում, հիմնականում ապահովվել է շինարարության և ծառայությունների ավելացված արժեքների իրական աճի բարձր մակարդակների հաշվին: Այդ ոլորտների տարեկան աճը երրորդ եռամսյակում կազմել է համապատասխանաբար 32.8% և 19.2%: Նշված զարգացումները, մասնավորապես՝ զբոսաշրջության աճի տեմպի արագացումը, տնտեսությունում արտարժույթի ներհոսքի խթանման հետ մեկտեղ, նպաստել են նաև բնակչության եկամուտների աճին, որը մասնավոր սպառման աճի միջոցով որոշակի գնաճային ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում:

Տնտեսության իրական հատվածի մյուս երկու ճյուղերում՝ արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում, երրորդ եռամսյակում համապատասխանաբար արձանագրվել է տարեկան 0.8% աճ և 3.5% անկում: Վերջինս ամբողջապես պայմանավորվել է բուսաբուծության թողարկման ծավալների մոտ 10% անկմամբ, մասնավորապես՝ սովորականից շոգ եղանակի պատճառով նվազել են մրգի, բացառությամբ խաղողի, և բանջարեղենի որոշ արտադրատեսակների բերքի ծավալները: Սա անմիջականորեն ազդել է սպառողական շուկայի վրա՝ մոտ 1.8 տոկոսային կետով նպաստելով սեզոնայինից բարձր գնաճի արձանագրմանը, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է «Միրգ» և «Բանջարեղեն» ապրանքատեսակների գների բարձր աճ՝ համապատասխանաբար 21.4% և 25.2%:

Համախառն պահանջարկի երկնիշ աճի տեմպի արձանագրումը շարունակվել է նաև 2006 թվականի երրորդ եռամսյակում: Ներքին պահանջարկի աճը եռամսյակի ընթացքում ուղեկցվել է կառուցվածքային որոշակի տեղաշարժերով: Մասնավորապես, համախառն սպառման իրական աճի տեմպի մոտ 1 տոկոսային կետով նվազումը զուգակցվել է կապիտալ ներդրումների աճի՝ մոտ 5 տոկոսային կետով ավելացմամբ: Միևնույն ժամանակ, պետական ծախսերի աճի տեմպի կտրուկ նվազման պայմաններում, ավելացել է մասնավոր հատվածի ծախսերի իրական աճի տեմպը՝ կազմելով մոտ 15% (նախորդ տարվա երրորդ եռամսյակում՝ 10.1%):

Հաշվետու եռամսյակում մասնավոր ներդրումների աճը կազմել է 21.8%՝ նախորդ տարվա 15.2%-ի պարագայում, ինչը հիմնականում պայմանավորվել է արտաքին ֆինանսական մեծածավալ ներհոսքով:

Աշխատանքի շուկայում տարվա ութ ամիսներին տեղի ունեցած փոփոխությունները ուղեկցվել են գնաճային ճնշումներով, որոնք պայմանավորվել են այն հանգամանքով, որ տնտեսությունում արտադրողականության աճը, որը գնաճը մեղմող գործոն է, էապես զիջել է գնաճը խթանող կարևորագույն գործոնի՝ իրական աշխատավարձի աճի ցուցանիշին: Վերջինս էլ բացատրվում է այն հանգամանքով, որ ներկայիս ՀՆԱ աճը մեծամասամբ ցածր արտադրողական ճյուղերի՝ ծառայությունների և շինարարության աճի հաշվին է:

Տնտեսական աճի և գործազրկության կրճատման պայմաններում աշխատանքի արտադրողականության աճը տարվա ութ ամիսներին կազմել է 10.4%՝ գրեթե կրկնակի զիջելով իրական աշխատավարձի աճի ցուցանիշին:

Հաշվետու ժամանակահատվածում ներմուծման դոլարային գները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բարձրացել են 17.5%-ով՝ պահպանելով աճի բարձր տեմպերը: Սակայն դրամի արժևորումը և Կառավարության կողմից գազի գների բարձրացման սուբսիդավորումը հիմնականում չեզոքացրել են ներմուծման դոլարային գների աճի բացասական հետևանքները, և դրամային արտահայտությամբ դրանք աճել են 6.2%-ով: 2006թ. երրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի

պակասուրդը խորացել է (34.3 մլն ԱՄՆ դոլարով)՝ հիմնականում պայմանավորված առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով (80.2 մլն ԱՄՆ դոլարով): Չնայած ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է, այնուամենայնիվ, այն թուլացրել է ֆինանսական ներհոսքի արդյունքում պահանջարկի աճի ընդլայնող ազդեցությունը գնաճի վրա, քանի որ հանգեցրել է մի կողմից՝ եկամուտների արտահոսքի ավելացման, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկի:

2006 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.2 տոկոս զսպող ազդեցություն, որն ընդհանուր առմամբ համընկել է սպասումներին: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է 0.2 տոկոս ընդլայնող, իսկ ծախսերի ազդակը սպասվածի համեմատ ունեցել է ավելի մեծ՝ 0.4 տոկոս զսպող ազդեցություն:

Դրամավարկային հատվածի զարգացումները երրորդ եռամսյակում բնութագրվել են երկու հիմնական առանձնահատկությամբ: Նախ, ԿԲ գլխավոր խնդրի իրագործման հետ կապված հիմնական ռիսկերը, որոնք սպասվում էին տնտեսության մյուս հատվածներից, այդ ժամանակահատվածում դրսևորվել են, որի հետևանքով արձանագրվել է կանխատեսվածից բարձր գնաճ: Այդուհանդերձ, ԿԲ-ն չի փորձել զսպել փողի առաջարկը և վերանայել է գնաճի ծրագրային ցուցանիշը (տարեվերջին տարեկան մինչև 3%-ի փոխարեն 5% +, - 1.5%)՝ չխախտելու համար ֆինանսական շուկայի կայունությունը: Երկրորդ առանձնահատկությունը կապված է երրորդ եռամսյակում դրամայնացման գործընթացի աշխուժացման հետ, ինչը, համարվելով ոչ գնաճային երևույթ, ևս նպաստել է դրամի առաջարկի աճին: Արդյունքում՝ դրամային զանգվածը երրորդ եռամսյակի վերջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 50.1%-ով՝ նախատեսված 37%-ի փոխարեն, փողի բազան նույն ժամանակահատվածում ավելացել է 33%-ով՝ 23.3%-ի փոխարեն, իսկ փողի զանգվածը՝ 24.6%-ով՝ 20.5%-ի փոխարեն:

Գնաճի հաշվետվությունը եզրափակվում է 2007թ. երրորդ եռամսյակի գնաճի կանխատեսումների ներկայացմամբ (ներառյալ նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ԿԲ խորհրդի նիստերի արձանագրությունները): Ակնկալվում է, որ 2007 թվականին ևս շարունակվելու է կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտի զարգացումը՝ պայմանավորված բնակչության եկամուտների աճով և Հայաստանում զբոսաշրջության զարգացմամբ, որը խթանելու է համախառն պահանջարկը՝ շարունակելով գնաճային ճնշումներ ստեղծել հանրապետությունում:

Արտաքին միջավայրում հիմնական ռիսկերը կապված են հացահատիկի միջազգային գների փոփոխությունների հետ: Ռուսաստանում և Ուկրաինայում հացահատիկի բերքի, ինչպես նաև դրա հետևանքով արտահանման ծավալների նվազման ազդեցությունը գների վրա բարձրացման ուղղությամբ 2006թ. չորրորդ եռամսյակից արդեն կդրսևորվի նաև ՀՀ տնտեսությունում և կպահպանվի նաև 2007թ. ողջ ընթացքում:

Նշված պայմաններում ակնկալվում է, որ 2007թ. երրորդ եռամսյակի գնաճը կկազմի 3.3%, որը, ըստ վերանայված ցուցանիշի, գտնվում է տարեկան 4% +, - 1.5% ծրագրային միջակայքի սահմաններում: Ընդ որում, տնտեսության զարգացման վերոնշյալ ուղղությունների ապահովման և սպասվող գնաճային ռիսկերի դրսևորման պարագայում հնարավոր է՝ վերանայվեն ինչպես փողի ագրեգատների աճի տեմպերը, այնպես էլ տոկոսադրույքները:

ԳՆԱՆՇՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՆՇ

2006թ. սեպտեմբերին, 2005թ. սեպտեմբերի համեմատ, գրանցվել է 5.9% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) և ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունը համապատասխանաբար կազմել է 6.1%, 3.3% և 4.5%:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 6.1% գնաճը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն» (25.2%), «Միրգ» (21.4%), «Շաքարավազ» (28.5%), «Միս և մսամթերք» (4.1%), «Ձու» (15.5%) և «Ձկնամթերք» (43.3%) ենթաապրանքախմբերի գնաճով, որոնք նպաստել են գնաճին համապատասխանաբար 1.2, 0.6, 0.4, 0.4, 0.3 և 0.2 տոկոսային կետով:

Թեև նախորդ եռամսյակի համեմատ մի փոքր ավելի քիչ, բայց այնուամենայնիվ շարունակվել են «Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի «Լվացող ապրանքներ» (8.8%), «Շինանյութեր» (7.1%) և «Ոսկերչական ապրանքներ» (34.2%) ենթաապրանքախմբերի բարձր գնաճի տեմպերը: 2006թ. սեպտեմբերին, 2005թ. համեմատ, գրանցվել է «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» ենթաապրանքախմբի ընդամենը 1.5% գնաճ՝ նախորդ եռամսյակի 19%-ի փոխարեն, ինչը հիմնականում պայմանավորվել է սեպտեմբերին բենզինի գների 2.0% նվազմամբ:

«Ծառայություններ» ապրանքախմբի գների 4.5%-ով աճը 3-րդ եռամսյակում հիմնականում պայմանավորվել է նույն ենթաապրանքախմբերի գների աճով, ինչ որ՝ նախորդ եռամսյակում. «Կապի ծառայություններ» ենթաապրանքախմբում գրանցվել է գների 13.2%-ով բարձրացում (պայմանավորված հեռախոսի և հեռագրի ծառայությունների գների 13.3% աճով), «Կրթության համակարգի ծառայություններ» ենթաապրանքախմբում՝ 7.9%, 3.5% աճ է գրանցվել բնակկոմունալ ծառայությունների ոլորտում (նախորդ եռամսյակում՝ 1.5%), իսկ «Տրանսպորտի ծառայություններ» ենթաապրանքախմբի գները նվազել են 1.5%-ով (նախորդ եռամսյակում՝ 2.0% աճ)՝ հիմնականում պայմանավորված 2006թ. սեպտեմբերին, 2005թ. սեպտեմբերի համեմատ, միջքաղաքային տրանսպորտի ծառայության սակագների 5.6% նվազմամբ:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.3% անկման և ոչ պարենային ապրանքների գների 0.2% ու ծառայությունների սակագների 3.0% աճի հետևանքով 2006թ. 3-րդ եռամսյակի գնաճը նախորդ եռամսյակի վերջի համեմատ կազմել է -2.0%:

2006թ. 3-րդ եռամսյակում, 2005 թ. դեկտեմբերի համեմատ, գրանցվել է 2.3% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է «Ծառայություններ» ապրանքախմբի գների՝ 4.4%, «Պարենային ապրանքներ» ապրանքախմբի գների՝ 1.1% և «Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի գների 2.4% աճով՝ նպաստելով գնաճի ցուցանիշի ձևավորմանը համապատասխանաբար 1.3, 0.6 և 0.4 տոկոսային կետով:


2006թ. հունվար-սեպտեմբերի գնաճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել է 2.0%:

2006 թ. 3-րդ եռամսյակի գնաճը պայմանավորող հիմնական ապրանքախմբերը

Անվանում	Գնի ինդեքսը 2006թ. սեպտեմբերին՝ 2005թ. սեպտեմբերի համեմատ	Գնի ինդեքսը՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, %
ՍԳԻ	**105.9**	**102.3**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**106.1**	**101.1**
շաքարավազ	128.5	128.5
մսամթերք	104.1	102.7
բանջարեղեն և կարտոֆիլ	125.2	98.5
յուղ և ճարպ	98.6	98.1
ձու	115.5	95.2

Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**103.3**	**102.4**
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	101.5	107.3
լվացող միջոցներ	108.8	105.1
հագուստեղեն, գործվածք	103.7	102.3
կոշկեղեն	104.1	104.0
Ծառայություններ, որից՝	**104.5**	**104.4**
կապ	113.2	110.6
բնակարանային, կոմունալ	103.5	103.7
բուժսպասարկման	107.8	106.9

ՍԳԻ փոփոխությունները ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների (2005 թ. դեկտեմբերի համեմատ)



Գնաճի ծրագրված տարեկան ցուցանիշի մակարդակի ապահովման առումով կարևորվում է գների բնականոն փոփոխությունների գնահատումը, ինչն էական ազդեցություն է թողնում դրամավարկային քաղաքականության իրականացման վրա: 2004 թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը[1]:

Սեպտեմբերի գնաճը և բնականոն գնաճը ըստ տարիների


Տարի	Ցուցանիշ	Նախորդ ամսվա համեմատ	Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ	Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ
2004	Գնաճ	-0.7	6.1	-1.3	7.9
	Բնականոն գնաճ	-0.3	6.0	-0.3	5.9
2005	Գնաճ	0.9	-0.4	-3.6	0.9
	Բնականոն գնաճ	0.29	0.26	-0.40	0.38
2006	Գնաճ	-0.3	5.9	2.3	2.0
	Բնականոն գնաճ	0.02	2.67	0.93	2.22

2006թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բնականոն գնաճը կազմել է 2.22%՝ հիմնականում պայմանավորված «Տավարի միս» (8.0%), «Դիզելային

[1] *Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր, 2004 թ. 1-ին եռամսյակ» պարբերականում:*

վառելիք» (8.8%), «Ախտորոշման կենտրոնների ծառայություններ» (2.4%), «Հավի բուդ» (5.9%) և «Բնական գազ» (6.4%) ապրանքատեսակների գների աճով, որոնք բնականոն գնաճին նպաստել են համապատասխանաբար 0.4, 0.3, 0.2, 0.1 և 0.1 տոկոսային կետով:

Գնաճի և բնականոն գնաճի փոփոխությունները (2005թ. դեկտեմբերի համեմատ)



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2003 թվականի հոկտեմբերից մինչև 2006 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը:

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2003 թ. հոկտեմբեր - 2006թ. սեպտեմբեր) (%)

	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	3.4	72.0	24.7	100.0
1. Հացամթերք	9.2	25.8	65.1	100.0
2. Մսամթերք	3.1	61.8	35.1	100.0
3. Ձկնամթերք	3.8	45.8	50.4	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	6.7	43.2	50.0	100.0
5. Միրգ և բանջարեղեն	1.9	82.8	15.3	100.0
6. Այլ մթերք	0.1	75.7	24.2	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	6.7	39.5	53.8	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	3.3	23.9	72.7	100.0
9. Հագուստ և կոշկեղեն	6.1	38.8	55.1	100.0
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.0	34.7	65.3	100.0
11. Տնային գույք	16.4	18.2	65.4	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	7.1	31.4	61.4	100.0
13. Տրանսպորտ և կապ	0.7	5.9	93.4	100.0
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	9.9	51.6	38.5	100.0
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	2.1	41.9	56.0	100.0

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2002թ. հոկտեմբեր - 2005թ. սեպտեմբեր ժամանակահատվածի համեմատ, 2003թ. հոկտեմբեր - 2006թ. սեպտեմբեր ժամանակահատվածում գնաճի ամփոփ ցուցանիշի վրա մի փոքր մեծացել է տրենդի (4.4 տոկոսային կետ) ու սեզոնայնության բաղադրատարրերի (4.8 տոկոսային կետ) և նվազել պատահական տարրի (9.1 տոկոսային կետ) ազդեցությունը:

Ըստ ապրանքախմբերի երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարբեր կերպ: Տրենդի ազդեցությունը գրեթե բոլոր ապրանքախմբերի վրա ամենափոքր տեսակարար կշիռն ունի և շարունակում է նվազել, մասնավորապես՝ առավել ագույն նվազումը գրանցվել է «Տնային գույք» (14.5 տոկոսային կետ) ապրանքախմբում: Այնուամենայնիվ, որոշ ապրանքախմբերում գրանցվել է տրենդի բաղադրատարրի զգալի աճ. «Այլ ապրանքներ և ծառայություններ» ապրանքախմբի տրենդի տեսակարար կշիռը աճել է մոտ 5 տոկոսային կետով, իսկ «Ոգելից խմիչք և ծխախոտ» ապրանքախմբինը՝ մոտ 6 տոկոսային կետով:

Սեզոնայնության բաղադրատարրը շարունակում է ամենամեծ ազդեցությունն ունենալ ՍԳԻ ձևավորման վրա: Այս բաղադրատարրի ազդեցությունը ավելացել է այնպիսի կարևոր ապրանքախմբերի վրա, ինչպիսիք են՝ «Հացամթերք» (15.1 տոկոսային կետ), «Ոգելից խմիչք և ծխախոտ» (22.2 տոկոսային կետ), «Տրանսպորտ և կապ» (29.4 տոկոսային կետ) ապրանքախմբերը: Նվազում է գրանցվել «Բուժսպասարկում և դեղորայք» (11.7 տոկոսային կետ) և «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» (25.7 տոկոսային կետ) ապրանքախմբերում:

Պատահական տարրի ազդեցությունը առավելագույնս մեծացել է «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» (24.7 տոկոսային կետ) և «Բուժսպասարկում և դեղորայք» (17.8 տոկոսային կետ) ապրանքախմբերում:

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների վարիացիայի գործակիցների օգնությամբ:

Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2004, 2005 և 2006թթ. 3-րդ եռամսյակներում (%)


	2004 թ.	2005 թ.	2006 թ.
ՍԳԻ	1.66	2.64	1.34
1. Հացամթերք	0.84	0.38	0.13
2. Մսամթերք	0.80	2.25	0.71
3. Ձկնամթերք	27.69	20.49	16.00
3. Կաթնամթերք և յուղեր	2.03	0.72	0.31
4. Միրգ և բանջարեղեն	11.83	19.75	16.22
5. Այլ մթերքներ	1.11	2.01	0.64
6. Ոչ ոգելից խմիչք	0.79	0.56	0.32
7. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.28	0.06	0.04
8. Հագուստ և կոշիկ	0.28	0.52	0.49
9. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.83	0.76	0.74
10. Տնային գույք	0.14	0.26	0.21
11. Բուժսպասարկում և դեղորայք	0.48	0.38	2.09
12. Տրանսպորտ և կապ	1.09	2.09	1.93
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.29	1.07	1.17
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.17	0.21	0.21

Ըստ աղյուսակի տվյալների՝ 2006թ. գրեթե բոլոր ապրանքախմբերում տատանողականությունը նվազել է, ինչն էլ պայմանավորել է ՍԳԻ համանման վարքագիծը: Տատանողականության աճ (մոտ 5 անգամ) գրանցվել է միայն «Բուժսպասարկում և դեղորայք» ապրանքախմբում: ՍԳԻ տատանողականությունը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների տատանողականությամբ, որոնցից առավել տատանողական վարքագիծ են դրսևորել «Ձկնամթերք» ու «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբերը:

Արտաքին միջավայր


Չնայած ԱՄՆ և Եվրոմիության տնտեսություններում շարունակվել է հավասար և համեմատաբար բարձր աճի տեմպերի դրսևորումը, սակայն ԱՄՆ տնտեսությունը գտնվում է տնտեսական պարբերաշրջանի նվազման փուլում, իսկ Եվրոմիությունը՝ աճի: ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքը շարունակել է տատանվել 1.26-1.29 միջակայքում, իսկ եվրոյի փոխարժեքի տարեկան արժևորումը կազմել է 4.3 տոկոս:

2006 թվականի երրորդ եռամսյակում ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքը կայունացավ




Նավթի միջազգային գները հուլիսին մնալով շատ բարձր մակարդակի վրա՝ օգոստոսից նվազել են՝ հիմնականում պայմանավորված աշխարհաքաղաքական ռիսկերի գերագնահատման հետ կապված՝ գների աճի սպասումների վերացմամբ և սպեկուլյատիվ պահանջարկի՝ որոշ չափով չեզոքացմամբ:


Սեպտեմբերին տեղի ունեցավ նավթի գների՝ երկար սպասված ճշգրտումը



ԱՄՆ գնաճը դեռևս բարձր մակարդակի վրա է, իսկ տնտեսական աճը նվազման միտում ունի



Եվրոգոտու տնտեսական աճը բարձրացման, իսկ գնաճը՝ նվազման միտում ունի



Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսական աճը,[2] ըստ նախնական գնահատումների, 2006 թվականի երրորդ եռամսյակում նվազել է նույնիսկ երկրորդ եռամսյակի համեմատաբար ցածր ցուցանիշի համեմատ՝ կազմելով 2.2 տոկոս (առաջին եռամսյակի 5.6 տոկոսի և երկրորդ եռամսյակի 2.6 տոկոսի համեմատ): Ընդ որում՝ մասնավոր սպառումը ավելանալով 2.9 տոկոսով՝ ունեցել է ամենամեծ ազդեցությունը (2.0 տոկոսային կետ), մինչդեռ ներդրումների աճ ընդհանրապես չի գրանցվել:

ԱՄՆ առևտրային պակասուրդը պահպանել է առաջին կիսամյակի բարձր ցուցանիշը՝ երրորդ եռամսյակում կազմելով ՀՆԱ 6.0 տոկոսը, և բարելավման միտումներ չեն նկատվում: ԱՄՆ խնայողությունները դեռևս նույն ցածր մակարդակի վրա են, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում ֆինանսավորվում է արտաքին պարտավորությունների կուտակման հաշվին: Վերջիններս շարունակում են մնալ համաշխարհային շուկայում դոլարի դիրքերի թուլացման և դոլարային բարձր գնաճի նախահիմքը:

Տնտեսական աճի նվազմամբ պայմանավորված ներքին պահանջարկի թուլացումը հանգեցրել է նաև գնաճի ճնշումների որոշակի թուլացման, որին ավելացել է նաև էներգակիրների գների՝ եռամսյակի վերջին գրանցված նվազումը: Այս պայմաններում Ֆեդերալ պահուստային համակարգը ձեռնպահ է մնացել տոկոսադրույքների ավելացումից՝ դրանք պահելով 5.25 մակարդակի վրա:

Եվրոգոտում տնտեսական աճը[3] երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, պահպանել է առաջին կիսամյակում գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը՝ կազմելով 2.5 տոկոս: Տնտեսական աճը հիմնականում ապահովվել է ներդրումների (4.7 տոկոս) և պետական սպառման (2.5 տոկոս) բարձր աճի տեմպերի հաշվին: Այնուամենայնիվ, փոքր-ինչ ավելի երկար ժամանակահատվածում բյուջետային համախմբման անհրաժեշտությունը և պահպանվող կառուցվածքային խնդիրները խոչընդոտներ են առաջացնում տնտեսական շարունակական աճի առումով[4]:

Սպառողական գների ինդեքսի տասներկուամսյա աճը սեպտեմբերին նվազել է, և գրանցվել է Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած առավելագույն մակարդակից ցածր ցուցանիշ՝ 1.8 տոկոս: Նման իրավիճակը ԵԿԲ-ին թույլ է տալիս չբարձրացնել տոկոսադրույքները արագ տեմպերով, այլ ուշադրություն դարձնել նաև տնտեսական աճի հեռանկարներին: Արդյունքում՝ 2005 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ Եվրոբանկի նպատակային տոկոսադրույքը կազմել է 3.25 տոկոս, և ակնկալվում է ևս մեկ՝ 0.25 բազիսային կետով բարձրացում չորրորդ եռամսյակում:

Ռուսաստանի տնտեսությունում արդյունաբերության, մասնավորապես վերամշակող արդյունաբերության աճի տեմպերի՝ նախորդ եռամսյակից սկսված վերականգնման գործընթացը 2006թ. երրորդ եռամսյակում վերափոխվել է աճի տեմպերի դանդաղման: Արդյունաբերության աճը նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 3.8% (նախորդ տարի՝ 4.1% աճ), իսկ վերամշակող արդյունաբերության աճը կազմել է 4.3% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 6.0%): Չնայած դրան, ոչ

---

[2] Աղբյուրը՝ Bureau of Economic Analysis, US Department of Commerce:
[3] Աղբյուրը՝ Eurostat:
[4] Եվրոմիության կառուցվածքային խնդիրների շարքը կարելի է դասել աշխատուժի շուկաների կոշտությունը, ոչ լրիվ ինտեգրումն ու ներդաշնակեցումը, անդամ երկրների տնտեսությունների՝ տարբեր բիզնես-պարբերաշրջաններում գտնվելու խնդիրը, հարկաբյուջետային քաղաքականությունների ներդաշնակության բացակայությունը և այլն:

արտահանելի հատվածում[5] շարունակվել են աճի բարձր տեմպերը: Ավելին, շինարարությունում և մանրածախ առևտրի ոլորտներում երրորդ եռամսյակում աճի տեմպերն արագացել են: Նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ շինարարության աճը կազմել է 15.1%՝ (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 11.6%), իսկ մանրածախ առևտրի աճը՝ 13.6% (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 13.2%): ՀՆԱ աճի հիմնական շարժիչ ուժերը եղել են նշված ոլորտները: ՀՆԱ աճը երրորդ եռամսյակում կազմել է 6.8% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 6.6%), իսկ հունվար-սեպտեմբերին գրանցվել է ՀՆԱ 6.6% աճ:

2006թ. տարեսկզբից գրանցվող ընթացիկ հաշվի ավելցուկի բարձր ցուցանիշը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում: Ըստ գնահատումների՝ ընթացիկ հաշվի ավելցուկը երրորդ եռամսյակում կազմել է 23.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելանալով 23.2%-ով: Նավթի միջազգային գների շարունակական աճը հանգեցրել է արտարժութային միջոցների ներհոսքի ավելացման՝ նպաստելով համախառն պահուստների համալրմանը: Վերջինս սեպտեմբերի վերջի դրությամբ հասել է արդեն 266.197 մլրդ ԱՄՆ դոլարի: Նշված ցուցանիշով Ռուսաստանն արդեն առաջ է անցել Թայվանից (սեպտեմբերի վերջի դրությամբ՝ 261.55 մլրդ ԱՄՆ դոլար) և զիջում է միայն երկու առաջատարներին՝ Չինաստանին (սեպտեմբերի վերջի դրությամբ՝ 987.9 մլրդ ԱՄՆ դոլար) և Ճապոնիային (սեպտեմբերի վերջի դրությամբ՝ 881.273 մլրդ ԱՄՆ դոլար):

Երրորդ եռամսյակում արտարժույթի շուկան հիմնականում բնութագրվել է պահանջարկի նկատմամբ արտարժույթի առաջարկի առաջանցիկ աճով, ինչը ռուբլու փոխարժեքի արժևորման ճնշումներ է առաջացրել: Ընդ որում՝ ընթացիկ հաշվի ավելցուկի աննախադեպ աճից բացի, ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու արժևորման ճնշումներ է առաջացրել նաև միջազգային շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկումը: Բացի այդ, ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցության վրա ազդել է նաև ոչ ռեզիդենտների հետաքրքրությունը ռուբլով արտահայտված ակտիվների նկատմամբ: Արդյունքում՝ երրորդ եռամսյակում ռուբլու արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 5.9% (նախորդ տարի՝ 2.3%), իսկ առաջին երեք եռամսյակներում ռուբլին արժևորվել է 2.7%-ով:

Փոխարժեքի վարքագիծն իր արտացոլումն է գտել գնաճի ցուցանիշում, ինչը երրորդ եռամսյակում կազմել է 8.5% (նախորդ տարի՝ 12.7%), իսկ առաջին ինը ամիսներին գների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 9.3%: Այսինքն՝ կապիտալի ազատ շարժի պայմաններում փոխարժեքի արժևորման տեմպերի արագացումը թույլ է տալիս ունենալ ավելի ցածր գնաճ (գնաճ կամ փոխարժեք երկընտրանք):

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում

Թուրքիայի տնտեսությունում մայիսից սկսված ֆինանսական լարվածությունը հուլիսից արդեն թուլացել է, ինչն արտահայտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ թուրքական լիրայի արժևորմամբ մինչև սեպտեմբերի կեսերը: Այնուհետև, սեպտեմբերի կեսերից սկսած, թուրքական լիրան նախորդ ամսվա վերջի համեմատ նորից արժեզրկվել է (1.4%-ով), թեև այդ միտումը ժամանակավոր բնույթ է ունեցել:

Վերը նշված զարգացումները հիմնականում պայմանավորվել են այն հանգամանքով, որ հունիսից սկսված «տաք փողերի» արտահոսքն աստիճանաբար դանդաղել է, հուլիս-օգոստոսին արդեն պորտֆելային ներդրումների 3.35 մլրդ զուտ ներհոսք է արձանագրվել:

2006թ. երրորդ եռամսյակում սպառողական գները, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, բարձրացել են 10.8%-ով, մինչդեռ նախորդ տարվա նույն եռամսյակում արձանագրվել էր գների 7.9% աճ: Չնայած հուլիս-օգոստոսին թուրքական լիրան դրսևորել է արժևորման վարքագիծ, այն նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատությամբ դեռևս մնում է 12.1% -ով արժեզրկված:

Հակառակ վատատեսական սպասումներին, երկրորդ եռամսյակում էական կառուցվածքային տեղաշարժեր չեն արձանագրվել: Ավելին, տարեսկզբից նկատվող ՀՆԱ բարձր իրական աճը պահպանվել է նաև երկրորդ եռամսյակում: Վերջինիս աճը երկրորդ եռամսյակում կազմել է 7.5%՝ նախորդ տարվա նույն եռամսյակում գրանցված 5.5%-ի փոխարեն, իսկ կիսամյակային ցուցանիշը կազմել է 7.0%: Տնտեսական բարձր աճը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության, շինարարության և առևտրի ճյուղերի համապատասխանաբար 10.5%, 13.7%, 7.3% աճով: Ընդ որում՝ նախորդ եռամսյակի համեմատ շինարարության աճի տեմպերի դանդաղումը որոշ չափով պայմանավորվել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման շինարարական աշխատանքների ավարտով:

[5] Նավթային եկամուտների մեծածավալ ներհոսքի հետևանքով ոչ արտահանելի հատվածի հարաբերական գները բարձրանում են, հետևաբար իրական փոխարժեքը արժևորվում է, ինչն էլ նպաստում է ռեսուրսների տեղափոխությանը դեպի ոչ արտահանելի ճյուղեր՝ հանգեցնելով արտահանելի հատվածի աճի տեմպերի դանդաղմանը: Առաջին ինը ամիսներին ռուբլու իրական արդյունավետ փոխարժեքն արժևորվել է 9.9%-ով:

Չնայած գնաճային սպասումների թուլացմանը (օգոստոսին, նախորդ ամսվա համեմատ, 0.4%-ով գների անկում է արձանագրվել, ինչն էլ թուլացրել է գնաճային սպասումները[6]) և անվանական փոխարժեքի կայունացմանը, այնուամենայնիվ անվանական տոկոսադրույքները դեռևս մնում են բարձր՝ նախանշելով բարձր իրական տոկոսադրույքներ: Վերջինս չնայած անհամատեղելի է գնաճային սպասումների թուլացման հետ, այնուամենայնիվ մասնագետների կարծիքով սա տնտեսությունում առկա ռիսկերի ապահովագրման արդյունք է: Ամենամեծ ռիսկը մնում է ընթացիկ հաշվի շարունակվող մեծ պակասուրդը, և դեռևս վերջինիս կրճատման էական միտումներ չեն ակնկալվում: 2006թ. հունվար-օգոստոսին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 22.4 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 15.5 մլրդ ԱՄՆ դոլար): Միևնույն ժամանակ, սեպտեմբերի վերջի դրությամբ անվանական տոկոսադրույքները 20%-ից բարձր են եղել:

Ադրբեջանի տնտեսության աճի տեմպերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ԱՊՀ երկրների թվում շարունակում են մնալ ամենաբարձրը: 2006թ. հունվար-սեպտեմբերին ՀՆԱ աճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել է 34.0%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում ՀՆԱ աճը կազմել է շուրջ 9.0%: Ինչպես 2004-2005թթ., այնպես էլ 2006թ. առաջին ինը ամիսներին տնտեսական աճի այսպիսի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորվել են վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանմամբ և դրա հետ կապված՝ շինարարության և տրանսպորտի հատվածների աճով: Տնտեսության արտադրական ճյուղերում աճը կազմել է 71.4%, իսկ սպասարկման ոլորտում՝ 21.7%: Արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՀՆԱ 6.9%-ը: Արդյունաբերությանը բաժին է ընկել ՀՆԱ 58.5%-ը, գյուղատնտեսությանը՝ 5.3%-ը, տրանսպորտին՝ 4.9%-ը, կապին՝ 2.3%-ը, առևտրին՝ 5.5%-ը, սոցիալական և այլ ծառայություններին՝ 8.3%-ը: 2006թ. արդյունքներով՝ սպասվում է ՀՆԱ շուրջ 30% իրական աճ:

2006թ. հունվար-սեպտեմբերին Ադրբեջանում տարեկան գնաճը կազմել է 7.3%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 6.2%: Ընդ որում, գնաճին հիմնականում նպաստել են պարենային ապրանքների գների աճը: Այսպես, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների գնաճը կազմել է 8.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 3.8%, ծառայություններինը՝ 2.2%:

2006թ. հունվար-սեպտեմբերին իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Ադրբեջանում ձևավորվել է դրական մնացորդ՝ 1069.0 մլն դոլարի չափով[7]: Օտարերկրյա ներդրումների ծավալները 2006թ. առաջին ինը ամիսներին կազմել են շուրջ 2561.9 մլն դոլար: Կապիտալի ներհոսքի նման ծավալների պարագայում ստեղծվել է որոշակի ճնշում գների մակարդակի և մանաթի փոխարժեքի վրա: Գնաճի տեմպերը զսպելու նպատակով Ազգային բանկը վարում է մանաթի հանդարտ արժևորման քաղաքականություն: Այսպես, 2006թ. առաջին ինը ամիսների ընթացքում մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 4.9%-ով, իսկ հունվար-սեպտեմբերի միջին փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միջինի համեմատ արժևորվել է 6.0%-ով:

Վրաստանում տնտեսական աճի ցուցանիշը 2006թ. առաջին կիսամյակում կազմել է 7.8%[8]: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ զգալի նվազել է գյուղատնտեսության աճի տեմպը: Այսպես, 2006թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, գյուղատնտեսական արտադրանքի ծավալը նվազել է 8.3%-ով, իսկ երկրորդ եռամսյակում՝ 11.9%-ով: Եթե առաջին եռամսյակում ամենաբարձր աճի տեմպեր գրանցվել էին ֆինանսական ծառայությունների՝ 56.4%, տրանսպորտի ծառայությունների՝ 37.7% և շինարարության՝ 25.9% ոլորտներում, ապա երկրորդ եռամսյակի ընթացքում դրանց աճի տեմպերը զգալիորեն դանդաղել են և կազմել են համապատասխանաբար 31.9%, 16.1% և 14.3%: Ի տարբերություն դրա, ակտիվացել են արդյունաբերության և հանքարդյունահանման ոլորտները, որոնց աճի տեմպերը 2006թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել են համապատասխանաբար 2.5% և 1.6%, իսկ երկրորդ եռամսյակում՝ 23.8% և 9.8%:

Ինչ վերաբերում է 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գնաճի զարգացումներին, ապա պետք է նշել, որ ինչպես և Ադրբեջանում, այստեղ նույնպես շարունակվում է գրանցվել բարձր գնաճ: 2006թ. առաջին ինը ամիսներին տարեկան գնաճը Վրաստանում կազմել է 8.7%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 6.0%: Ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ գնաճի վարքագծի վրա շարունակում են հիմնական ազդեցություն թողնել պարենային ապրանքների գները, Վրաստանում հունվար-սեպտեմբերին գնաճի վարքագծի վրա մեծապես ազդել են ոչ պարենային ապրանքների գները: Այսպես, պարենային ապրանքների գնաճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կազմել է 4.4%, ոչ պարենային ապրանքներինը՝ 9.8%, ծառայություններինը՝ 5.8%:

2006թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, վրացական լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 3.28%-ով, իսկ հունվար-սեպտեմբերի միջին փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միջինի համեմատ արժևորվել է 1.6%-ով: Վրացական լարիի արժևորումը կարող էր լինել ավելի բարձր, եթե Վրաստանի ազգային բանկը Թբիլիսիի միջբանկային արժութային բորսայում հունվար-օգոստոսին չիրականացներ շուրջ 108 մլն դոլարի զուտ առք (112 մլն արտարժույթի առքը կատարվել է մայիս-օգոստոս ամիսներին):

---

[6] Թուրքիայի տնտեսությունում նախորդ տարիներին օգոստոսին, հուլիս համեմատ, մշտապես գնաճ է արձանագրվել, օրինակ՝ 2005թ. այն կազմել է 0.85%, 2004թ.՝ 0.77% և այլն:

[7] Ապրանքների արտահանման ծավալներն ավելացել են 1.7 անգամ և կազմել 3658 մլն դոլար, իսկ ներմուծման ծավալները՝ 14.5%-ով և կազմել 3346 մլն դոլար:


[8] Վրաստանում վիճակագրության նոր համակարգի անցնելու կապակցությամբ ՀՆԱ-ի և նրա տարրերի դինամիկային վերաբերող ցուցանիշները հրապարակվել են միայն 2006թ. առաջին կիսամյակի դրությամբ: Նշենք նաև, որ 2005թ. տնտեսական աճի տարեկան ցուցանիշը Վրաստանում կազմել է 9.3%:

Տոկոսադրույքներ և փոխարժեք

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ելնելով միջբանկային ռեպո շուկայի միտումներից, ինչպես նաև հաշվի առնելով հետագա մեկ տարվա ընթացքում գնաճային ռիսկերի պահպանումը, ՀՀ ԿԲ խորհուրդը հիմնական գործիքի՝ ռեպո գործառնության տոկոսադրույքը օգոստոս-սեպտեմբեր ժամանակահատվածում բարձրացրել է 0.25-ական տոկոսային կետով՝ սեպտեմբերին հասցնելով 4.5%-ի: Միևնույն ժամանակ, պահպանելով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները ռեպո գործառնության տոկոսադրույքից հավասարաչափ հեռացված լինելու դրույթը, դրանք սահմանվել են. լոմբարդային վարկերինը՝ 7.5%, իսկ ավանդներինը՝ 1.5%: 2006թ. ապրիլից ՀՀ ԿԲ նոր գործիքակազմի ներդրմամբ պայմանավորված, համաձայն որի՝ շաբաթական մեկ անգամ ԿԲ-ն հանդես է գալիս հիմնական գործիքի՝ ռեպո գործառնությունների իրականացման հայտարարությամբ, այս եռամսյակի ընթացքում ևս շարունակվել է ֆինանսական շուկայում Կենտրոնական բանկի ակտիվ մասնակցությունը, որի արդյունքում ԿԲ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 22.4 մլրդ դրամ:

ԿԲ ռեպո և շուկայական ռեպո տոկոսադրույքների շեղումը փոքր-ինչ նվազել է




2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում ևս շարունակել են ավելանալ միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործառնությունների ծավալները՝ կազմելով 42 մլրդ դրամ, որի պարագայում սեպտեմբերին շուկայական ռեպո տոկոսադրույքը կայունացել է 5.25-ից 5.3%-ի միջակայքում:

Նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատությամբ ԿԲ ներքաշող գործառնությունների ծավալները զգալիորեն ավելացել են: Մասնավորապես, ԿԲ կողմից իրականացվել է պարտատոմսերի 30 թողարկում: Պարտատոմսերի նկատմամբ ձևավորված ընդհանուր պահանջարկը կազմել է 43.9 մլրդ դրամ: Տեղաբաշխված ԿԲ պարտատոմսերի ծավալը կազմել է 27.1 մլրդ դրամ՝ 5.37% միջին եկամտաբերությամբ (2005թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 1.1 տոկոսային կետով): Առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի համախառն ծավալը կազմել է 50.6 մլրդ դրամ, իսկ իրականացված հակադարձ ռեպո գործառնության ծավալը՝ ընդամենը 0.5 մլրդ դրամ: Իրականացվել է նաև 6 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթի ներգրավման սվոփ:

Պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում ևս, հատկապես կարճաժամկետ հատվածում, 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները բարձրացել են: ՊՊ առաջնային շուկայում 2006թ. սեպտեմբերին պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 1.15 տոկոսային կետով՝ կազմելով 4.96%:


Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորի ուսումնասիրությունը, եկամտաբերությունները ՊՊ երկրորդային շուկայում աճել են հիմնականում կորի կարճաժամկետ հատվածում: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 91.29%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը ի հաշիվ եկամտաբերությունների աճի, կազմել է 0.29 տոկոսային կետ: 27.13%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.056-ից՝ 0.041), ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են –18.42%:

Տոկոսադրույքների աճ՝ եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում




ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքների նվազումը շարունակվել է նաև 2006 թվականի երրորդ եռամսյակում, սակայն ավելի դանդաղ տեմպերով. 2006 թվականի սեպտեմբերին ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.55 տոկոսային կետով՝ կազմել են 5.92%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները նվազելով 0.29 տոկոսային կետով՝ կազմել են 4.48%: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.44 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.71-ի փոխարեն:

Բանկային համակարգում դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքները նվազել են



Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները նույնպես նվազել են. ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքները 2006թ. սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 1.17 տոկոսային կետով՝ կազմելով 16.49%, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները գրեթե չեն փոխվել և կազմել են 18.05%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունները համապատասխանաբար կազմել են 10.57 և 13.57 տոկոսային կետ:

Բանկային համակարգի կողմից դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները նվազել են



ՓՈԽԱՐԺԵՔ

Անվանական փոխարժեքը՝ որպես փոխանցման կարևոր ուղի, գների վրա իր ազդեցությունն է ունենում մի կողմից՝ ներմուծվող ապրանքների գների, մյուս կողմից՝ սպասումների ձևավորման միջոցով: Անվանական փոխարժեքն ազդում է նաև տրանսֆերտների դրամային մեծության, հետևաբար նաև՝ պահանջարկի վրա:

ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա դեկտեմբերի և երկրորդ եռամսյակի համեմատ, դրսևորել է արժևորման միտում: Փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորվել է ֆինանսական ներհոսքի և դրամի նկատմամբ սեզոնային պահանջարկի աճի արդյունքում ձևավորված վճարային հաշվեկշռի ավելցուկով: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին եռամսյակային փոխարժեքը երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արժևորվել է 12.5%-ով՝ 452.68 դրամից հասնելով 402.26 դրամի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դրամի արժևորումը կազմել էր 14.6%, որը, սակայն, ձևավորվել էր ավելի մեծ տատանումների պայմաններում:


ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2006թ. III եռամսյակում



Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 1,448 մլն ԱՄՆ դոլար[9], որը 82.8%-ով մեծ է նախորդ տարվա երրորդ եռամսյակի գործառնությունների ծավալի համեմատությամբ: Վերջինս արտացոլում է արտաքին առևտրաշրջանառության ծավալների, արտաքին ֆինանսական ներհոսքի և ներքին տնտեսության բարձր աճի միտումները:

[9] *Ներառված են նաև բորսայում իրականացված առք ու վաճառքի ծավալները՝ 139.28 մլն ԱՄՆ: Բորսայում իրականացված գործարքների ծավալները նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 217.3%-ով:*


ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները



Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես տեղի է ունեցել ծավալների աճ՝ 32.6%-ով: Համախառն ծավալը կազմել է 84.82 մլն եվրո (նախորդ տարվա երրորդ եռամսյակում՝ 63.95 մլն եվրո):

Դրամայնացման գործընթացի ակտիվացման, դրամի պահանջարկի աճի արդյունքում հնարավոր արժևորման տեմպերը մեղմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը երրորդ եռամսյակում ՀՀ բանկերից զուտ գնել է 106.735 մլն ԱՄՆ դոլար:


ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան 2004-2006թթ.



Երրորդ եռամսյակում արագացել են ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերը. տարեկան կազմել են 9.8 տոկոս: ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի 12.5 տոկոս արժևորումը միայն մասամբ է փոխհատուցվել գործընկեր երկրների փոխարժեքների միջին կշռված արժևորմամբ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.4 տոկոս: Գործընկեր երկրների փոխարժեքներից ամենամեծ ազդեցությունը անվանական արդյունավետ փոխարժեքի վրա ունեցել է Եվրոմիության և Ռուսաստանի արժույթների փոխարժեքների արժևորումը՝ համապատասխանաբար 1.4 և 1.3 տոկոսային կետով:

Անվանական արդյունավետ փոխարժեքի նման արժևորումը չէր կարող չանդրադառնալ իրական փոխարժեքի վրա, և վերջինս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժևորվել է 10.2 տոկոսով: Ընդ որում, Հայաստանի գնաճը փոքր-ինչ ավել է եղել գործընկեր երկրների գնաճից՝ 6.6 և 5.8 տոկոս համապատասխանաբար: Գործընկեր երկրների գնաճի վրա հիմնական ազդեցություն են ունեցել Ռուսաստանը (1.8 տոկոսային կետ) և Իրանը (1.4 տոկոսային կետ), չնայած ընդհանուր գնաճի մակարդակը որոշ չափով ավելացել է գրեթե բոլոր երկրներում: ՀՀ գնաճը հիմնականում պայմանավորվել է առաջարկի գործոններով, մասնավորապես՝ գյուղատնտեսական արտադրանքի թողարկման կրճատմամբ:


Երրորդ եռամսյակում իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերի ավելացումը պայմանավորված էր անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորմամբ



Ոչ արտահանելի հատվածի գները երրորդ եռամսյակում, նախորդի համեմատ, դրսևորել են նվազման շատ ցածր տեմպեր, որի հետևանքով ներքին իրական փոխարժեքը նորից սկսել է արժևորվել՝ նախորդ եռամսյակի արժեզրկման փոխարեն: Արդյունքում՝ ներքին իրական փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արժևորվել է 4.0 տոկոսով:

Ոչ արտահանելի ապրանքների գների տարեկան աճը կազմել է 8.4 տոկոս, մինչդեռ արտահանելի ապրանքների գներն աճել են ընդամենը 4.2 տոկոսով: Պատճառը, ինչպես արդեն նշվել է, հուլիս-օգոստոսին, նախորդ տարվա համեմատ, գյուղատնտեսության թողարկման անկումն էր, որի հետևանքով ոչ արտահանելի ապրանքների գնաճի բավականին բարձր մակարդակ է արձանագրվել: Դրան է ավելանում նաև ֆինանսական զգալի ներհոսքի արդյունքում պահանջարկի շարունակական աճը. այս պարագայում հարաբերական գները չեն ճշգրտվում, ինչն էլ հանգեցնում է ոչ արտահանելի հատվածի ապրանքների ընդհանուր գների մակարդակի բարձրացմանը:

Գյուղատնտեսական ցածր բերքի հետևանքով ոչ արտահանելի ապրանքների գները բարձրացան և կտրուկ արժևորվեց ներքին իրական փոխարժեքը



Վճարային հաշվեկշիռ[10]

2006 թվականի երրորդ եռամսյակում պահպանվել են արտաքին աշխարհից եկող՝ հումքային, սպառողական և միջանկյալ սպառման ապրանքների գների բարձր մակարդակները: Ընդ որում՝ թեև նավթի համաշխարհային գները մինչև հուլիսի վերջ հասել են տարվա համար գների ամենաբարձր մակարդակին (մինչև 78 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց), իսկ հետագա ժամանակահատվածում նվազել են, այնուամենայնիվ եռամսյակի համար նավթի գների միջին մակարդակը դեռևս մնում է բարձր: Վերը

[10] *2006թ. երրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ կանխատեսումներն են:*

նշվածի հետևանքով ներմուծման դոլարային գները եռամսյակի ընթացքում շարունակել են դրսևորել տարեկան կտրվածքով բարձր աճի տեմպեր: Երրորդ եռամսյակում հատկանշական էր նաև կապիտալ և ֆինանսական ներհոսքի տեմպերի արագացումը, ինչը մասամբ կապված էր զբոսաշրջության սեզոնային բնույթի հետ և իր արտացոլումն է գտել արտարժութային շուկայում՝ արժևորման ճնշումներ առաջացնելով ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի վրա:

Նշված արտաքին միջավայրը, ինչպես նաև ներքին տնտեսության զարգացումները հանգեցրել են նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի և՛ անվանական, և՛ ՀՆԱ-ում որպես կշիռ ցուցանիշի խորացմանը, ինչը առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացման արդյունք էր: Երրորդ եռամսյակում գրանցվել է արտահանման 1.8%-ով նվազում՝ ներմուծման 18.0% աճի պայմաններում:

2006թ. երրորդ եռամսյակում արտաքին աշխարհի ազդեցությունը գնաճի վրա, ըստ էության, ընդլայնող է եղել, թեև որոշ գործոններ մասամբ հակազդել և չեզոքացրել են արտաքին հատվածից եկող ընդլայնողական ազդեցությունները: Ներմուծման դոլարային գների շարունակվող աճը ընդլայնել է գնաճը, սակայն անվանական փոխարժեքի զգալի տարեկան արժևորումը[11] հիմնականում չեզոքացրել է վերջինիս բացասական ազդեցությունը: Մյուս կողմից՝ ֆինանսական և կապիտալ ներհոսքի տեմպերի արագացումը նպաստել է տնտեսության ներքին պահանջարկի աճին, որը ևս զգալի ճնշումներ է ունեցել գնաճի վրա: Այնուամենայնիվ, ֆինանսական ներհոսքի և դրա հետևանքով պահանջարկի զգալի աճի ճնշումները գնաճի վրա շատ ավելի ուժեղ կդրսևորվեին, եթե դրանք չթուլացվեին հետևյալ գործոնների միջոցով:

1. Նախ՝ աճող պահանջարկի մի մասը բավարարվել է ներմուծման հաշվին, ինչը մի կողմից՝ ներքին տնտեսությունում ապահովել է ապրանքների և ծառայությունների լրացուցիչ առաջարկ, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական միջոցների՝ ներմուծման միջոցով դուրս հոսման հնարավորություն է ընձեռել:
2. Փոխարժեքի արժևորումը նվազեցրել է երկիր ներհոսող ֆինանսական միջոցների, հետևաբար և դրանց հաշվին ստեղծվող պահանջարկի դրամային արժեքը:

Ընթացիկ հաշիվ. 2006թ. երրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, շարունակել է խորանալ, ինչը առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացման արդյունք էր: Ընդ որում՝ ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է ինչպես բացարձակ արժեքով, այնպես էլ ՀՆԱ-ում տեսակարար կշռով: Ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է 34.3 մլն ԱՄՆ դոլարով (մոտ 2.3 անգամ) և կազմել 61.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 2.7%՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 1.7%-ի փոխարեն:

2006թ. երրորդ եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդը խորացել է 80.1 մլն ԱՄՆ դոլարով (56.8%-ով) և կազմել 221.2 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման ծավալները (կրեդիտ), որոնք նախորդ եռամսյակում ավելացել էին, նվազել են 1.8%-ով (արտահանումը կազմել է 270.8 մլն ԱՄՆ դոլար): Արտահանման ծավալների նվազման պատճառը «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման համապատասխանաբար 23.0%, 4.4% նվազումն էր: Չնայած երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների չնչին՝ 1.0%, աճ է արձանագրվել, այնուամենայնիվ հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն դեռևս ցածր մակարդակի վրա է (հունվար-սեպտեմբերին վերջինիս նվազումը կազմել է 11.2%): «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների նվազումը պայմանավորվել է համաշխարհային շուկաներում նախասիրությունների կտրուկ փոփոխությամբ և պահանջարկի նվազմամբ, ինչը կառուցվածքային խնդիրներ է առաջացրել ադամանդագործության ճյուղում[12]: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների նվազումը հիմնական արտահանող ձեռնարկությունում դոմնային վառարանի չգործարկման հետևանք էր[13]: «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման (որի գերակշիռ մասը կոնյակն է)

---

[11] Քանի որ իրական տնտեսությունում, որտեղ կան գների կոշտություններ և ոչ մրցակցային շուկաներ, փոխարժեքի արժևորումը անմիջապես չի հանգեցնում ներքին գների նույնչափ նվազմանը, ապա կարելի է փաստել, որ ներմուծման դոլարային գների աճը, նույնիսկ նույնքան արժևորման պայմաններում, այնուամենայնիվ կընդլայնի գնաճը: Թվային վերլուծությունների մանրամասները տե՛ս «Ներմուծման գները» բաժնում:

[12] Ադամանդի նկատմամբ պահանջարկը զգալի նվազել է: Միևնույն ժամանակ, փոփոխվել են նաև սպառողների նախասիրությունները. պահանջարկում հիմնականում տեղի է ունեցել կառուցվածքային տեղաշարժ, այն է՝ միջին և խոշոր քարերի նկատմամբ պահանջարկը նվազել է, իսկ մանր քարերի պահանջարկը՝ աճել: ՀՀ-ում հիմնականում մասնագիտացված են միջին քարերի վերամշակման մեջ:


[13] Պղինձ արտահանող ACP ընկերության մեկ դոմնային վառարան չի գործում:

նվազումը պայմանավորվել է Ռուսաստան արտահանվող կոնյակի ակցիզների հետ կապված տեխնիկական խնդիրներով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 16.9%-ով ավելացել են «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի արտահանման անվանական ծավալները՝ պայմանավորված միջազգային շուկաներում հումքային ապրանքների գների աճով:

Երրորդ եռամսյակում ներմուծման (դեբետ) աճը, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, կազմել է 18.0% (ներմուծումը կազմել է 492.0 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ բոլոր ապրանքախմբերի, բացառությամբ փոքր կշիռ ունեցող երկու ապրանքախմբերի, ներմուծման ծավալներն ավելացել են: Ի տարբերություն նախորդ եռամսյակի, ներմուծման աճին բացի մեծ կշիռ կազմող ապրանքախմբերից՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», զգալի նպաստել են նաև հետևյալ ապրանքախմբերի՝ «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Պլաստմասսա և դրանից իրեր», համապատասխանաբար 21.6% և 57.3% աճը: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծումը երրորդ եռամսյակում, նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ, ավելացել է 0.7%-ով, իսկ հունվար-սեպտեմբերին վերջինիս ծավալները նվազել են 14.8%-ով:

Արտահանման ծավալների նվազումը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշի, նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 3.0%, մինչդեռ ներմուծման ծավալները, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ավելացել են 22.2%-ով: Արդյունքում՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց նշված հոդվածի, ավելացել է 80.5 մլն ԱՄՆ դոլարով (56.0%-ով) և կազմել 224.2 մլն ԱՄՆ դոլար:


2006թ. III եռամսյակում արտահանման հիմնական 2 ապրանքախմբերի ծավալները նվազել են



Արտաքին առևտրի աշխարհագրական առումով, ապրանքային հաշվեկշռի պակասուրդի խորացումը հիմնականում պայմանավորվել է ԱՊՀ, Եվրոմիության, Իրանի, Թուրքիայի և Չինաստանի հետ ապրանքային հաշվեկշռի պակասուրդների համապատասխանաբար 41.6%, 14.8 անգամ, 23.9%, 52.5%, 2.0 անգամ խորացմամբ[14] (Եվրոմիության հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդի նման խորացումը հիմնականում պայմանավորվել է Ավստրիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իտալիայի հետ ապրանքային հաշվեկշիռների պակասուրդների աճով):

[14] Ներմուծման վիճակագրությունն այժմ կատարվում է «ըստ ծագման վայրի» սկզբունքի՝ նախկինում գործող «ըստ առևտուր անող երկրի» սկզբունքի փոխարեն:

2006թ. III եռամսյակում ներմուծման գրեթե բոլոր հոդվածների ցուցանիշների աճ է արձանագրվել



2006թ. երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվել է ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազում 46.2%-ով (պակասուրդը կազմել է 6.7 մլն ԱՄՆ դոլար՝ 12.5 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն), ինչը նպաստել է ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը: Ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազումը պայմանավորվել է ծառայությունների ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճով, իսկ վերջինս էլ՝ զբոսաշրջության սեզոնային աճով: Ծառայությունների արտահանման աճը կազմել է 18.1%, իսկ ներմուծման աճը՝ 11.0%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է ապրանքային ներմուծման հետ կապված՝ ոչ ռեզիդենտների կողմից մատուցված տրանսպորտային ծառայությունների աճով:

Մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները նույնպես նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի նվազմանը: Մասնավոր տրանսֆերտների աճը նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 26.3%, իսկ եկամուտների աճը՝ 87.1%[15]: Պաշտոնական տրանսֆերտները նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ կրճատվել են 7.9%-ով:

Արդյունքում, թեև ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է, այնուամենայնիվ այն թուլացրել է ֆինանսական ներհոսքի արդյունքում պահանջարկի աճի ընդլայնող ազդեցությունը գնաճի վրա, քանի որ հանգեցրել է մի կողմից՝ եկամուտների դուրս հոսման չափի ավելացման, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկի[16]:

Ընթացիկ հաշվի վարքագիծը 2003 - 2006 թթ. երրորդ եռամսյակներում

մլն ԱՄՆ դոլար

	III եռ. 03	III եռ. 04	III եռ. 05	III եռ. 06
Ընթացիկ հաշիվ	-32.2	-27.7	-27.2	-61.5
Առևտրային հաշվեկշիռ	-103.2	-127.3	-141.1	-221.2
Ծառայություններ (զուտ)	-21.8	-15.2	-12.5	-6.7
Եկամուտներ (զուտ)	26.2	13.0	16.6	31.0
Մասնավոր տրանսֆերտներ (զուտ)	43.7	84.0	100.3	126.7
Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ)	23.0	17.8	9.5	8.7


[15] 2006թ. երրորդ եռամսյակում մասնավոր տրանսֆերտների և աշխատուժից եկամուտների (գործոնային եկամուտների մի մասի) տարեկան աճը կազմել է 25.6%:

[16] Չնայած ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալները նվազել են, այնուամենայնիվ գնաճի վրա ազդեցության տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել սպառողական ապրանքների ներմուծման իրական ծավալները, որոնք ավելացել են 4.1%-ով:

Կապիտալի և ֆինանսական հաշիվ. 2006թ. երրորդ եռամսյակում արտաքին աշխարհի խնայողությունների՝ կապիտալի և ֆինանսական հաշվի զուտ ներհոսքը կազմել է 114.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելանալով 39.5%-ով: Վերջինս զգալի՝ 53.1 մլն ԱՄՆ դոլարով գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, իսկ աճը հիմնականում պայմանավորվել է մասնավոր հատվածի այլ կապիտալի գծով զուտ ներհոսքի աճով[17]: Արձանագրվել է պետական հատվածի միջոցների զուտ ներհոսքի 8.9%-ով նվազում, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտների նվազում 46.2%-ով (ծավալները կազմել են համապատասխանաբար 14.5 մլն և 5.0 մլն ԱՄՆ դոլար):

Օտարերկրյա ուղղակի ներդրումները նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատությամբ գրեթե չեն փոփոխվել և կազմել են 75.0 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի պակասուրդի 122%-ը, այլ կապիտալի ներհոսքը՝ 32.6%-ը (20.0 մլն ԱՄՆ դոլար): Կապիտալ տրանսֆերտների մասնակցությունը ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորմանը կազմել է 8.1%[18], իսկ պետական հատվածի վարկերի զուտ տեղաբաշխման ֆինանսավորումը կազմել է 23.7%: Ընթացիկ հաշվի ու կապիտալ և ֆինանսական հաշվի վերը նշված հոսքերի պայմաններում, վճարային հաշվեկշիռը ավելցուկով է եղել, որի արդյունքում ԿԲ ՁԱԱ-ը աճել են 53.1 մլն ԱՄՆ դոլարով:

2006թ. III եռամսյակում կապիտալի ներհոսքը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը



Կապիտալի և ֆինանսական ներհոսքի զգալի աճը նպաստել է տնտեսությունում պահանջարկի աճին և ճնշումներ է առաջացրել գնաճի վրա: Սակայն, մյուս կողմից, փոխարժեքի լողացող ռեժիմը թույլ է տվել, որ ֆինանսական ներհոսքի պայմաններում արժևորվի փոխարժեքը, և թուլանան գնաճի վրա վերջինիս ճնշումները[19]:

Դրամավարկային զարգացումներ

2006 թվականի հուլիսի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստում վերաֆինանսավորման տոկոսադրույքի հարցի քննարկման ժամանակ թեև արձանագրվել էր, որ էապես մեղմվել են 2006 թվականի գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման՝ տարեսկզբից ձևավորված սպասումները, և իրատեսական էր համարվում 2006 թվականի վերջին մինչև 3% գնաճի ցուցանիշի ապահովումը, այնուամենայնիվ, ակնկալվում

[17] *Այլ կապիտալի մասնավոր հատվածում գրանցվում են հիմնականում մասնավոր հատվածի կողմից վերցված առևտրային վարկերը և կանխիկ արտարժույթը:*

[18] *Մեր տնտեսություն ուղարկվող մասնավոր տրանսֆերտների մի մասը հատկացվում է անշարժ գույքի ձեռքբերմանը, մի մասը՝ սպառմանը, մյուս մասը (որը գալիս է կանխիկ ճանապարհով և չի գրանցվում որևիցե տեղ)՝ հասարակության կանխիկ արտարժույթի պաշարների ավելացմանը: Ուստի իրատեսական կլիներ, որ մասնավոր տրանսֆերտների և մասնավոր հատվածի այլ կապիտալի միջոցների մի մասը ցույց տրվեր որպես կապիտալ տրանսֆերտներ:*

[19] *Երբ փոխարժեքն արժեքավորվում է, այն փոքրացնում է արտարժույթով արտահայտված ֆինանսական միջոցների դրամական համարժեքը, որն ավելի մեծ կլիներ, եթե փոխարժեքը հաստատագրվեր: Ուստի, երկրորդ դեպքում դրամով արտահայտված պահանջարկի անվանական մեծությունը շատ ավելի մեծ կլիներ և ճնշումները գների վրա՝ նույնպես:*

էին մի շարք գնաճային ռիսկեր: Մասնավորապես կարևորվում էին տնտեսության տարբեր հատվածներում սպասվող հետևյալ զարգացումները.

- իրական հատվածում ոչ բարենպաստ եղանակի հետևանքով բուսաբուծության համախառն բերքի նվազում,
- արտաքին հատվածում ցորենի միջազգային գների աճ,
- հարկաբյուջետային հատվածում ծախսերի հիմնական մասի կուտակում չորրորդ եռամսյակում,
- դրամայնացման գործընթացի արագացում:


Տարվա առաջին կիսամյակի փաստացի զարգացումներով պայմանավորված՝ որոշակիորեն ճշգրտվել են տարեսկզբին դրամավարկային հատվածի ցուցանիշների՝ երկրորդ կիսամյակի համար արված կանխատեսումները: Հաշվի առնելով հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև դրամայնացման գործընթացի տեմպերի դանդաղումը տարվա առաջին կեսին՝ երրորդ եռամսյակի համար կանխատեսվել են փողի, հատկապես դրամային բաղադրատարրերի ավելի փոքր, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ ավելի մեծ աճի տեմպեր, քան նախորդները:

Երրորդ եռամսյակի ընթացքում ձևավորված մակրոմիջավայրն ու հատկապես գնաճի վարքագիծը ցույց են տվել, որ սպասվող ռիսկերը հիմնականում դրսևորվել են: Արդյունքում՝ արձանագրվել են գնաճի կանխատեսված ցուցանիշից շեղումներ, որոնք պայմանավորվել են առավելապես իրական հատվածից սպասվող որոշակի գնաճային ռիսկերի դրսևորմամբ: Մասնավորապես, գյուղատնտեսության ճյուղում գրանցված անկումը զգալիորեն զսպել է գյուղմթերքների գների սեզոնային նվազումը, ինչի հետևանքով եռամսյակային գնանկումը ակնկալվող 5%-ի փոխարեն կազմել է 1.9%: Այդ պայմաններում սեպտեմբերին գնաճը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (12- ամսյա) կազմել է 5.9%՝ կանխատեսված 3.0%-ի փոխարեն (տե՛ս ԿԲ խորհրդի հոկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունը), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 2.3%:

Այսինքն՝ արդեն իսկ ակնհայտ էր, որ տարեվերջին կանխատեսված մինչև 3% մակարդակը գերազանցվելու էր՝ վերոնշյալ ոչ մոնետար գործոններով պայմանավորված, իսկ դրամավարկային առավել զսպողական քաղաքականություն իրականացնելը նպատակահարմար չէր ֆինանսական շուկայում ճնշումներ և անկայունություն չառաջացնելու տեսանկյունից: Այդ իսկ պատճառով սեպտեմբերին ԿԲ-ն առաջարկություն է ներկայացրել ՀՀ կառավարությանը՝ գնաճի տարեվերջի ծրագրային մակարդակը վերանայելու նախագծով հանդես գալ ՀՀ Ազգային ժողովում՝ այն սահմանելով 5% +, - 1.5%:

Հաջորդ առանձնահատկությունը, որն անդրադարձել է երրորդ եռամսյակում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության ընթացքի վրա, կրկին դրամայնացման գործընթացի ակտիվացումն է, որից էլ մասամբ ածանցվել է կիրառված դրամավարկային գործիքների ընտրությունը, ինչպես նաև դրամավարկային ցուցանիշների՝ կանխատեսված եռամսյակային մակարդակներից շեղումները: Այսպես, դրամային զանգվածը երրորդ եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 46.2%-ով և ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմել 276.9 մլրդ դրամ, որը գերազանցել է կանխատեսված աճի տեմպերը ավելի քան 9 տոկոսային կետով: Փողի զանգվածի 12-ամսյա աճը (2006թ. սեպտեմբերը 2005թ. սեպտեմբերի նկատմամբ) հիմնականում համընկել է սպասված աճի տեմպերին՝ 20.5%-ի փոխարեն 22.3%:


Փողի զանգվածի կառուցվածքում էական տեղաշարժեր չեն արձանագրվել



Դրամային զանգվածի բարձր աճի տեմպերը պայմանավորվել են երկու բաղադրատարրերի՝ շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների աճի բարձր տեմպերով՝ համապատասխանաբար 40.5% և 56.8% (կանխատեսված էր 31.3% և 43.3%):


Արտարժութային ավանդները երրորդ եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դրամային արտահայտությամբ նվազել են 9.6%-ով: Արտարժութային արտահայտությամբ դրանք աճել են ընդամենը 5.2%-ով, սակայն զգալիորեն զիջել են նախորդ տարվա նույն ցուցանիշը (28.3%)՝ կապված արտարժույթը դրամի փոխարկելուու երևույթի աշխուժացման հետ:

Դրամով և արտարժույթով ավանդների վարքագիծը՝ըստ ժամկետայնության



Նշվածով պայմանավորված՝ տնտեսության դոլարայնացման աստիճանը (արտարժութային ավանդներ/փողի զանգված) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 26.1%-ով, ինչը, նույն գործոնների ազդեցությամբ, նաև արտացոլվել է տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագծում: Այսպես, տնտեսության վարկավորման իրական աճը սեպտեմբերին, նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ, կազմել է 50%՝ կանխատեսված 47.8%-ի պարագայում: Դրամային արտահայտությամբ՝ նշված ցուցանիշը կրել է բացառապես դրամի արժեքավորման գործոնի ազդեցությունը, ինչի հետևանքով 2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, բանկերի կողմից տնտեսության վարկավորման աճը կազմել է 36.4%՝ երկրորդ եռամսյակի 43%-ի դիմաց, սակայն դա, ըստ էության, ոչ թե վարկավորման աճի տեմպերի դանդաղում է, այլ երկրորդ եռամսյակի համեմատ երրորդում դրամի արժեքավորման առաջանցիկ տեմպերի հետևանք:

2006 թ. ՀՀ դրամով վարկավորման աճը գերազանցել է արտարժույթով վարկավորման աճի տեմպերը




Երրորդ եռամսյակի ընթացքում տնտեսության վարկավորումն աճել է 6.5 մլրդ դրամով կամ 2.9%-ով, իսկ առանց փոխարժեքի արժեքավորման ազդեցության՝ 24.9 մլրդ դրամով կամ 12.6%-ով: Ընդ

որում, ինչպես և երկրորդում, այս եռամսյակում ևս արձանագրվել են դրամով վարկավորման ավելի արագ տեմպեր. դրամով վարկավորումն ավելացել է 10.2 մլրդ դրամով կամ 11.3%-ով, այն դեպքում, երբ արտարժութային ավանդները, առանց փոխարժեքի արժեքավորման ազդեցության, ավելացել են 6.7 մլրդ դրամով կամ 5.8%-ով:

Ֆինանսական միջնորդությունը բնութագրող՝ տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները երրորդ եռամսյակի ընթացքում դրսևորել են բնականոն աճի միտումներ՝ համապատասխանաբար 2% և 13.7% (12-ամսյա), որը դրամայնացման գործակցի գծով շատ ավելին է եղել՝ պայմանավորված դրամի նկատմամբ մեծածավալ պահանջարկով:

Տնտեսության փողայնացման մակարդակը




Փողի բազմարկիչը եռամսյակի ընթացքում նվազել է 4.5%-ով, իսկ դրամային բազմարկիչն ավելացել է 11%-ով: Այս ցուցանիշներն ավելի ցածր են սպասվածից՝ պայմանավորված կանխիկ դրամի առավել բարձր աճի տեմպերով:

ՓՈՂԻ ԲԱԶԱ: Ինչպես արդեն նշվել է, 2006թ. երրորդ եռամսյակում կրկին դիտվել է դրամայնացման ակտիվ գործընթաց, ինչի հետևանքով դրամի նկատմամբ տնտեսության ներկայացրած մեծածավալ պահանջարկը ԿԲ կողմից բավարարվել է փողի բազայի՝ նախատեսվածից ավելի արագ 12-ամսյա աճ ապահովելու միջոցով (փաստացի 33%՝ կանխատեսված 23%-ի փոխարեն): Միևնույն ժամանակ, երրորդ եռամսյակը սովորաբար աչքի է ընկնում ֆինանսական մեծածավալ ներհոսքով, որի մի որոշակի մասը, ելնելով նաև դրամի կտրուկ արժեքավորման ազդեցությունը մեղմելու նկատառումներից, ԿԲ-ն չեզոքացրել է արտարժույթի գնման գործառնություններ իրականացնելով: Սակայն, քանի որ դրամի նման մեծածավալ ներարկումը, գումարվելով տնտեսության մյուս հատվածներից եկող ռիսկերին՝ կուտակել էր գնաճային մեծ ներուժ ինչպես գնաճի տարեվերջին ցուցանիշի, այնպես էլ հետագա մեկ տարվա կտրվածքով եռամսյակային ցուցանիշների ապահովման առումով, ԿԲ-ն իր գլխավոր խնդրին հասնելու նպատակով կիրառել է նաև ներքաշող դրամային գործիքներ, մասնավորապես՝ սեփական արժեթղթերի տեղաբաշխում: Դա էր պատճառը, որ այս տարվա անցած իննն ամիսների արդյունքներով՝ փողի բազայի տարեկան աճը (նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ) զգալի զիջել է նախորդ տարվա համանման ցուցանիշը (52.3%), քանի որ նախորդ տարվա այդ ժամանակահատվածում առկա էին գնանկումային ռիսկեր, և փողի առաջարկը զսպելու անհրաժեշտություն չկար:

Փողի բազայի և դրա կառուցվածքային տարրերի եռամսյակային վարքագիծը նաև տարբերվում է նախորդ տարվա սեզոնայնությունից: Այսպես, եթե 2005թ. երկրորդ եռամսյակից սկսած արձանագրվել են փողի բազայի և ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի բարձր աճի տեմպեր, ապա այս տարի բարձր աճ գրանցվել է միայն երրորդում՝ համապատասխանաբար 16.1% և 18.5% (երկրորդ եռամսյակի 5.3% և 9.3% աճերի պարագայում):


Այսինքն՝ կանխիկ դրամի եռամսյակային վարքագծից ակնհայտ երևում է, որ տարվա առաջին երկու եռամսյակներում այն հիմնականում կրկնել է 2003-04 թթ. սեզոնայնությունը, իսկ երրորդում՝ դրսևորել 2005-ի առանձնահատկությունը, որը պայմանավորված է եղել դրամայնացման տեմպերի արագացման պարագայում դրամի նկատմամբ մեծ պահանջարկով:

Կանխիկի աճը վկայում է ՀՀ դրամի նկատմամբ պահանջարկի աճի մասին



Բազայի աճը եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել հիմնականում ԿԲ ՋԱԱ-ի աճի հաշվին՝ 23.2 մլրդ դրամ կամ 9.2%, ինչն ուղեկցվել է ԿԲ ՋՆԱ-ի 8.8 մլրդ դրամ կամ 16.8% աճով: Նշված ցուցանիշների 12-ամսյա միտումներն արտահայտվել են ԿԲ ՋԱԱ-ի 20.8% և ՋՆԱ-ի՝ 18.5% աճերով:


Երրորդ եռամսյակից դրսևորված դրամայնացման գործընթացի աշխուժացումն արտացոլվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագծում



Երրորդ եռամսյակում ԿԲ փոխհարաբերությունները բանկերի հետ ընթացել են դրամավարկային քաղաքականության վերոնշյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ: Այսինքն, ԿԲ-ն, ֆինանսական ներհոսքի և դրամայնացման երևույթի հետևանքով ձևավորված արտարժութային ավելցուկը կլանելու համար, մի կողմից արտարժույթի շուկայում իրականացրել է մեծածավալ գնման գործառնություններ (շուրջ 42.0 մլրդ դրամին համարժեք), իսկ մյուս կողմից՝ դրամային ներքաշող գործիքներով մասամբ ստերիլացրել է դրա արդյունքում առաջացած դրամով ավելցուկային իրացվելիությունը: Այդ նպատակին հիմնականում ծառայել է ԿԲ արժեթղթերի տեղաբաշխման գործիքը, որի օգնությամբ հաջողվել է ներքաշել զուտ 11.0 մլրդ դրամի իրացվելիություն: Այնուամենայնիվ, երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգը բնութագրվել է ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակով՝ նախորդ եռամսյակի 13.2 մլրդ դրամ միջին ցուցանիշի դիմաց՝ 14.2 մլրդ դրամ, ինչի պարագայում բանկերը ակտիվորեն օգտվել են նաև մշտական հնարավորության ավանդային ներքաշող գործիքից (համախառն 50.6 մլրդ դրամ):

Միաժամանակ, իրացվելիության կարճաժամկետ խնդիրների լուծման նպատակով բանկերն այս եռամսյակում ևս ակտիվորեն օգտվել են ռեպո գործիքից, որի համախառն ծավալը կազմել է ավելի քան 22.0 մլրդ դրամ:

Փողի բազայի վարքագիծը ըստ ՋԱԱ-ի և ՋՆԱ-ի



Համախառն պահանջարկ և առաջարկ

Մասնավոր սպառում և ներդրումներ. Համախառն պահանջարկի աճի երկնիշ ցուցանիշի արձանագրումը շարունակվել է նաև 2006 թվականի երրորդ եռամսյակում: Ներքին պահանջարկի աճի տեմպի արագացումը զուգակցվել է արտաքին հատվածի ճեղքվածքի խորացմամբ:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[20]
ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ներքին պահանջարկի աճը եռամսյակի ընթացքում ուղեկցվել է կառուցվածքային որոշակի տեղաշարժերով: Մասնավորապես, համախառն սպառման իրական աճի տեմպի մոտ 2 տոկոսային կետով նվազումը զուգակցվել է կապիտալ ներդրումների աճի տեմպի կրկնապատկմամբ: Միևնույն ժամանակ, պետական ծախսերի աճի տեմպի կտրուկ նվազման պայմաններում ավելացել է մասնավոր հատվածի ծախսերի իրական աճի տեմպը՝ կազմելով 17.6%՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի 10.1%-ի դիմաց:

Երրորդ եռամսյակում շարունակվել է մասնավոր սպառման իրական աճի բարձր տեմպի արձանագրումը՝ պայմանավորված ինչպես վերջին չորս տարիներին բնակչության եկամուտների շարունակական ավելացմամբ, այնպես էլ տարվա սկզբից մասնավոր տրանսֆերտների աճի տեմպի արագացմամբ: Արդյունքում՝ 2006 թվականի երրորդ եռամսյակի մասնավոր սպառման իրական աճը մոտ 4 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշը և կազմել է 12.3%:

Արտաքին ֆինանսական ներհոսքը խթանել է նաև մասնավոր հատվածի կապիտալ ներդրումները՝ հանգեցնելով դրանց աճի՝ տարվա սկզբից արձանագրված բարձր մակարդակի ձեռքբերմանը: Այս միտումը շարունակվել է նաև տարվա երրորդ եռամսյակում, երբ մասնավոր ներդրումների աճը կազմել է 36.0%՝ նախորդ տարվա համապատասխան 15.2%-ի պարագայում:

Պետական սպառում և ներդրումներ.[21] 2006 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.1 տոկոս զսպող ազդեցություն, այն դեպքում, երբ սպասվում էր չեզոք ազդեցություն: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է 0.2 տոկոս ընդլայնող, իսկ ծախսերի ազդակը կանխատեսվածի համեմատ ունեցել է ավելի մեծ՝ 0.3 տոկոս զսպող աղդեցություն: Այն պայմանավորվել է եռամսյակի համար ծրագրված ծախսերի համեմատ

[20] *Համախառն պահանջարկի բաղադրատարրերի իրական աճերը ՀՀ ԿԲ գնահատումներն են:*


[21] *Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է 2006թ. համախմբված բյուջեի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա, իսկ ցուցանիշների համեմատականը, ճշգրտված ծրագրերի բացակայության պատճառով, կատարվել է նախնական ծրագրերի նկատմամբ: Ազդակների հաշվարկներում նույնպես օգտագործվել են 2006թ. համախմբված բյուջեի նախնական ցուցանիշները, իսկ հաշվարկները կատարվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:*

փաստացի ծախսերի պակաս կատարմամբ: Չնայած բյուջեի եկամուտների՝ կանխատեսվածի համեմատ մոտ 5.4 մլրդ դրամ գերակատարմանը, եկամուտների ազդակը կազմել է ընդլայնող՝ պայմանավորված անվանական ՀՆԱ փաստացի բարձր ցուցանիշով: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատման տեսանկյունից նշենք, որ տարվա ինն ամիսներին պահպանվել է նախորդ տարվա բյուջեի կատարման գործընթացում դրսևորված սեզոնայնությունը, այն է՝ ինն ամիսներին ծախսերի չիրականացված մասը մեծամասամբ տեղափոխվել է տարվա վերջին եռամսյակ:

Անդրադառնալով չորրորդ եռամսյակին՝ նշենք, որ բյուջեի ծախսերի վերը նշված դրսևորումների, ինչպես նաև չորրորդ եռամսյակում Լինսի հիմնադրամի դրամաշնորհների ստացման և դրանից նախատեսված ծախսերի կատարման պարագայում ծախսերը կունենան 0.5 ընդլայնող ազդեցություն: Եկամուտների մասով չորրորդ եռամսյակում նույնպես ակնկալվում է ընդլայնող ազդեցություն, և տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա ընդլայնող ազդեցություն: Չնայած բյուջեի ծախսերի 32.3 տոկոսը բաժին է ընկնում չորրորդ եռամսյակին, սակայն ծախսերի ակնկալվող ընդլայնող ազդեցությունը այդքան էլ մեծ չի լինի, քանի որ ազդակի ցուցանիշը հաշվարկվում է նախորդ տարվա չորրորդ եռամսյակի նկատմամբ, երբ նույնպես իրականացվել են մեծածավալ ծախսումներ:

2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է ծախսերի 12.5 տոկոս աճ, իսկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 1.5 տոկոսային կետով: Ծախսերի մեջ ընթացիկ ծախսերն ավելացել են 13 տոկոսով, ընդ որում՝ պետական սպառումն ավելացել է 5.7 տոկոսով, տրանսֆերտները՝ 25.5 տոկոսով, իսկ սուբսիդիաները՝ 29 տոկոսով: Պետական սպառումը կազմել է ընթացիկ ծախսերի 55.2 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 3.8 տոկոսային կետով: Պետական սպառում/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 6.6 տոկոսը:


Հարկաբյուջետային ազդակի զսպողական ազդեցությունը 2006 թ. երրորդ եռամսյակում



2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կապիտալ ծախսերն ավելացել են 11.7 տոկոսով: Հատկանշական է, որ կապիտալ ծախսերի մեջ այս տարի նույնպես շարունակվել է նախորդ տարվանից դրսևորված՝ ներքին ֆինանսավորման հաշվին իրականացված ծախսերի աճի միտումը: Այսպես, երրորդ եռամսյակում կապիտալ ծախսերի 80.4 տոկոսն իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 19.6 տոկոսը՝ արտաքին աղբյուրների (նախորդ տարի՝ համապատասխանաբար 75.8 և 24.2 տոկոս): Չնայած երրորդ եռամսյակում, նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ, ՀՆԱ-ում պետական ներդրումները նվազել են 0.4 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 4.1 տոկոսը, այնուամենայնիվ կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը վերջին տարիներին ունի աճի միտում: Կապիտալ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորվել է արտաքին ֆինանսավորման հաշվին իրականացվող կապիտալ ծախսերի թերի ֆինանսավորմամբ: Ամփոփելով նշենք, որ ծախսերն ունեցել են զսպողական ազդեցություն՝ կապված ինչպես ընթացիկ ծախսերի տնտեսումների, այնպես էլ արտաքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի թերստացումների հետ:

Տարվա առաջին երկու եռամսյակներում համախմբված բյուջեի եկամուտներն ունեցել են զսպողական ազդեցություն՝ պայմանավորված հարկային և ոչ հարկային եկամուտների գերակատարումներով: Նշված միտումը պահպանվել է նաև երրորդ եռամսյակում, սակայն գրանցվել է փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն, քանի որ երրորդ եռամսյակում արձանագրվել է ՀՆԱ-ի՝ կանխատեսվածից ավելի բարձր մակարդակ: Այսպես, ինն ամիսների արդյունքում եկամուտների գերակատարումը կազմել է մոտ 27.6 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում արտաքին աղբյուրներից ֆինանսավորման նվազումը և ներքին աղբյուրներից ֆինանսավորման աճը




2006 թվականի երրորդ եռամսյակում բյուջեի եկամուտները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 12.8 տոկոսով: Ընդ որում՝ հարկային եկամուտների աճը կազմել է 17.3 տոկոս, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները նվազել են 22.4 տոկոսով: Բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.2 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 14.5 տոկոսը: Ընդ որում, ՀՆԱ առաջանցիկ աճի պայմաններում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.6 տոկոսային կետով: Բյուջեի եկամուտների ավել հավաքագրման միտումը կպահպանվի նաև չորրորդ եռամսյակում, և տարվա արդյունքում եկամուտները կունենան չեզոք ազդեցություն:

Հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի կշիռը նվազել է 1.4 տոկոսային կետով և կազմել հարկային եկամուտների 49.4 տոկոսը, իսկ ուղղակի հարկերի կշիռն ավելացել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով հարկերի 21.3 տոկոսը: Անուղղակի և ուղղակի հարկերի աճը նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 14.1 տոկոս և 22.8 տոկոս:

Ինը ամիսների ընթացքում արձանագրված հարկային և ոչ հարկային եկամուտների գերակատարումները չեն ուղեկցվել ծախսերի ծրագրված ցուցանիշի ապահովմամբ: Ավելին, ծախսային որոշ հոդվածների գծով արձանագրվել են տնտեսումներ:

Եռամսյակի արդյունքում բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 16.6 մլրդ դրամ: Ընդ որում՝ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը կազմել է 5.7 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է 10.9 մլրդ դրամ: Վերջինս ապահովվել է Կենտրոնական բանկում Կառավարության միջոցներից մոտ 9.6 մլրդ դրամ նվազման հաշվին:

Փողի բազայի փոփոխությունները 2006թ. երրորդ եռամսյակում մասամբ են պայմանավորված ՀՀ կենտրոնական բանկում կառավարության միջոցների փոփոխությունների ազդեցությամբ



Նշենք, որ փողի բազայի փոփոխությունները երրորդ եռամսյակի հատկապես հուլիս, օգոստոս ամիսներին հիմնականում պայմանավորվել է Կառավարության միջոցների փոփոխություններով:

Ջուտ արտաքին պահանջարկ. Ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների՝ տարվա սկզբից արձանագրված իրական նվազումը ու ներմուծման ծավալների աճը շարունակվել են նաև երրորդ եռամսյակում: Արտահանումը երրորդ եռամսյակում նվազել է 13.9%-ով, իսկ ներմուծումը՝ 1.6%-ով: Դա հիմնականում պայմանավորվել է ադամանդի միջազգային գների նվազման և պահանջարկի կառուցվածքի փոփոխության հետևանքով Հայաստանի արտաքին առևտրի գերակշիռ մասը կազմող թանկարժեք քարերի ներմուծման և արտահանման կրճատմամբ:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների իրական աճը
2003-2006 թվականների երրորդ եռամսյակներում

Ցուցանիշներ	2003	2004	2005	2006
Իրական ՀՆԱ	15.5	11.5	13.0	13.1
Ներքին պահանջարկ	13.8	12.4	11.0	11.0
Սպառում	8.9	10.5	9.6	8.3
Պետական	11.0	13.4	19.1	-4.8
Մասնավոր	8.7	10.3	8.7	12.8
Կապիտալ ներդրումներ	37.1	19.7	15.9	20.0
Պետական	44.4	-30.6	20.6	2.1
Մասնավոր	35.3	33.2	15.2	22.6
Արտահանում [22]	31.8	-6.6	27.3	-13.7
Ներմուծում	21.9	-8.7	28.2	-1.5

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ[23]

2006 թվականի երրորդ եռամսյակում արձանագրված բարձր՝ 13.1% տնտեսական աճը, ինչպես և տարվա առաջին կիսամյակում, հիմնականում ապահովվել է շինարարության և ծառայությունների ավելացված արժեքների իրական աճի բարձր մակարդակների հաշվին:

2006 թվականի երրորդ եռամսյակում կապիտալ շինարարության իրական աճը նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ կազմել է 37.9%՝ հանգեցնելով նախորդ տարվա ինն ամիսների համեմատ 2006 թվականի հունվար-սեպտեմբերին 37% իրական աճի ձևավորմանը: Շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում շարունակվել է արագացված աճի տեմպ արձանագրվել բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության գծով՝ պայմանավորված վերջին չորս տարիների տնտեսական աճի բարձր մակարդակի արդյունքում բնակչության եկամուտների զգալի ավելացմամբ, ինչպես նաև արտաքին ֆինանսական ներհոսքի զգալի աճով: Արդյունքում, 2006 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, բնակչության միջոցների հաշվին ֆինանսավորված շինարարության ծավալն ավելացել է մոտ 31%-ով՝ կազմելով ողջ շինարարության 63%-ը: Ընդ որում, ինչպես և նախկինում, բնակչության միջոցների հաշվին ֆինանսավորված կապիտալ շինարարությունն իրականացվել է բնակարանային շինարարության ոլորտում:

Զգալի (2006 թվականի հունվար-սեպտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 68%) ավելացել են նաև կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորված շինարարության ծավալները. միջոցներն ուղղվել են հիմնականում գազի մատակարարման, գունավոր մետաղագործության, կապի ոլորտ և բնակարանային շինարարությանը:

Երրորդ եռամսյակում ծառայությունների ոլորտում աճի տեմպերն արագացել են՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների աճով, այնպես էլ զբոսաշրջության ոլորտի զարգացմամբ, մասնավորապես՝ Հայաստանի անկախության 15-ամյակի կապակցությամբ սեպտեմբերին իրականացված միջոցառումներով: Բացի այդ, մոտ 15% իրական աճ է արձանագրվել տրանսպորտի և կապի ոլորտում՝ պայմանավորված դեռ տարվա սկզբից բջջային հեռախոսակապի օպերատորների կողմից իրականացված մեծածավալ ներդրումների արդյունքում ծառայությունների տեսականու և տարածվածության ընդլայն-

[22] *Վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանմանն ու ներմուծմանը:*
[23] *Երրորդ եռամսյակի համախառն առաջարկի բաղադրատարրերի իրական աճի բոլոր ցուցանիշները նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:*

մամբ: Արդյունքում՝ երրորդ եռամսյակում ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 17.2%՝ նախորդ տարվա 9.4%-ի փոխարեն: Նշված զարգացումները, մասնավորապես զբոսաշրջության աճի տեմպի արագացումը՝ տնտեսությունում արտարժույթի ներհոսքի խթանման հետ մեկտեղ, նպաստել են նաև բնակչության եկամուտների աճին, որը մասնավոր սպառման աճի միջոցով որոշակի գնաճային ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում:

2006 թվականի երրորդ եռամսյակում արձանագրվել է գյուղատնտեսական արտադրանքի 3.5% իրական անկում, որի հետևանքով հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գյուղատնտեսության արտադրության ծավալը մնացել է անփոփոխ: Արձանագրված նվազումը ամբողջապես պայմանավորվել է բուսաբուծության արտադրանքի թողարկման ծավալների մոտ 7% անկմամբ: Ընդ որում, սովորականից շոգ եղանակի պատճառով նվազել է մրգի (բացառությամբ խաղողի) և բանջարեղենի որոշ տեսակների բերքը:

Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 2.3% իրական նվազում, որի պարագայում հունվար-սեպտեմբերին ճյուղի արտադրության ծավալները նվազել են 1.6%-ով: Ընդ որում, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի անկումը պայմանավորվել է դեռ տարվա սկզբից ոսկերչական արտադրատեսակների և էլեկտրաէներգիայի արտադրության, ինչպես նաև քիմիական արդյունաբերության ծավալների զգալի նվազմամբ: Դրա հետ մեկտեղ, զգալիորեն արագացել է շինանյութերի արտադրության աճի տեմպը՝ պայմանավորված կապիտալ շինարարության ծավալների աճով: Աննշան աճ է արձանագրվել նաև գունավոր մետաղագործության ենթաճյուղում՝ պայմանավորված կոնվերտորային պղնձի արտադրության ծավալների նվազման հետ մեկտեղ մոլիբդենի արտադրության ծավալների զգալի ավելացմամբ: Ավելացել են նաև սննդամթերքի, մասնավորապես՝ մսամթերքի, կաթնամթերքի, գարեջրի և գինու, ոչ ալկոհոլային խմիչքների, բնական հյութերի և պահածոների արտադրության ծավալները:

Աշխատանքի շուկա

ՀՆԱ կառուցվածքի փոփոխությունը, որը տեղի է ունեցել վերջին երեք տարիներին շինարարության և ծառայությունների ճյուղերի՝ տնտեսության մյուս ճյուղերի համեմատ աճի ավելի բարձր մակարդակի արձանագրման հետևանքով, արտացոլվել է նաև աշխատանքի շուկայի ցուցանիշներում:

Տարվա իննն ամիսներին աշխատանքի շուկայում փոփոխություններն ուղեկցվել են գնաճային ճնշումներով, որոնք պայմանավորվել են այն հանգամանքով, որ տնտեսությունում արտադրողականության աճը, որը գնաճը մեղմող գործոն է, էապես զիջել է գնաճը խթանող կարևորագույն գործոնի՝ իրական աշխատավարձի աճի ցուցանիշին: Վերջինս էլ բացատրվում է այն հանգամանքով, որ ներկայիս ՀՆԱ աճը մեծամասամբ ցածր արտադրողական ճյուղերի՝ ծառայությունների և շինարարության աճի հաշվին է:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ սեպտեմբերին իրական աշխատավարձը 12-ամսյա գնաճի 5.9% ցուցանիշը խթանել է 2.7 տոկոսային կետով, մինչդեռ արտադրողականության աճը գնաճը մեղմել է 1.1 տոկոսային հետով, արդյունքում՝ աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը գնաճին 1.6 տոկոսային կետով խթանող է եղել:

Տնտեսության միջին անվանական աշխատավարձի աճը հունվար-օգոստոսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, կազմել է 22.6%, իսկ աշխատավարձի իրական աճը՝ 20.2%: Ընդ որում, տնտեսության միջին աշխատավարձի աճից բարձր է եղել կապի (38.6%), առևտրի և հանրային սննդի (102.7%), կենցաղսպասարկման (30.2%), առողջապահության (40.6%), կրթության (24.4%) և մշակույթի (48.7%) ոլորտի աշխատավարձերի աճը: Չնայած առաջանցիկ աճի տեմպերին, վերը նշված ճյուղերից մեծ մասում՝ մասնավորապես առևտրի, կրթության, առողջապահության և կենցաղսպասարկման ոլորտներում, աշխատավարձի մակարդակը դեռևս ցածր է տնտեսության միջինից՝ 61000 դրամից:

2006 թվականի իննն ամիսների ընթացքում գործազրկության մակարդակը կազմել է 7.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 1.0 տոկոսային կետով: Ընդ որում, տնտեսու-

թյունում 1 թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը դեռևս բավականին բարձր է և կազմել է 117 մարդ:

Հանրապետությունում արագ տեմպերով ավելացող շինարարական աշխատանքներին զուգընթաց՝ հաշվետու ժամանակահատվածում, ինչպես և վերջին երկու տարիներին, աշխատուժի նկատմամբ պահանջարկի մեծ մասը՝ 73%, կազմել է բանվորական մասնագիտության նկատմամբ պահանջարկը:

Տնտեսական աճի և գործազրկության կրճատման պայմաններում աշխատանքի արտադրողականության աճը տարվա ինն ամիսներին կազմել է 11.5%՝ գրեթե կրկնակի զիջելով իրական աշխատավարձի աճի ցուցանիշին:

Արտադրողականության նկատմամբ իրական աշխատավարձի առաջանցիկ աճի շարունակման պարագայում, հետագայում ևս աշխատանքի շուկայի կողմից կարելի է ակնկալել գնաճային ճնշումներ:

Ներմուծման և տեղական արտադրանքի գներ

Երրորդ եռամսյակում պահպանվել են ներմուծման գների աճի բարձր տեմպերը՝ հիմնականում կապված բնական գազի և այլ հումքային ապրանքատեսակների միջազգային գների բարձր մակարդակի պահպանման հետ: Սակայն դրամի փոխարժեքի արժևորումը և Կառավարության կողմից գազի գների բարձրացման սուբսիդավորումը մասամբ չեզոքացրել են ներմուծման գների աճի բացասական հետևանքները ներքին տնտեսության վրա: Արդյունքում՝ արձանագրվել են արդյունաբերողների գների աճի բավականին ցածր տեմպեր:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2006 թվականի երրորդ եռամսյակում, պահպանելով աճի բարձր տեմպերը, ներմուծման դոլարային գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 17.5 տոկոսով:

Ներմուծվող ապրանքների գների փոփոխությունը


Ցուցանիշներ	III եռ. 05	IV եռ. 05	I եռ. 06	II եռ. 06	III եռ. 06	Կշիռներ
Ներմուծում	6.5	6.0	12.2	21.9	16.8	
Կապիտալ ապրանքներ[24]	0.2	0.0	0.0	0.0	0.0	9.2%
Սպառողական ապրանքներ	8.0	3.4	2.4	5.2	7.8	26.7%
Հումքային ապրանքներ	0.0	9.7	26.6	42.4	34.1	34.7%
Ադամանդ[24]	0.0	0.0	0.0	0.0	0.0	15.4%
Նավթամթերք	48.0	28.9	30.0	35.3	13.1	8.9%
Բնական գազ	0.0	0.0	0.0	100.0	100.0	5.2%

Ամենամեծ ազդեցությունը ունեցել է Ռուսաստանի Դաշնության կողմից 2 անգամ բնական գազի արտահանման գների թանկացումը, որը 5.2 տոկոսային կետի չափով ավելացրել է ներմուծման գները: Մյուս հումքային ապրանքների, հատկապես նավթամթերքների գները դրսևորել են աճի դանդաղման միտումներ՝ հիմնականում օգոստոս-սեպտեմբերին գրանցված նվազման պատճառով: Նավթամթերքների գինը չնայած եռամսյակի ընթացքում միջին հաշվով կազմել է ավելի քան 70 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց, սակայն սեպտեմբերի միջին գինը արդեն կազմել է մոտ 61 ԱՄՆ դոլար:

Շաքարավազի գները չնայած եռամսյակի ընթացքում նվազել են, բայց դեռևս որոշ չափով բարձր են մնում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում գրանցված ցուցանիշից: Հացահատիկի միջազգային գները նույնպես որոշակիորեն նվազել են օգոստոսին, սակայն դեռ բավականին բարձր մակարդակ ունեն (երրորդ եռամսյակի գների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 28.1 տոկոս):


[24] Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով նշված ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:

Ներմուծված ապրանքների գների աճը փոքր-ինչ դանդաղել է, սակայն գների մակարդակը դեռևս շատ բարձր է



Երրորդ եռամսյակի վերջում հումքային ապրանքատեսակների գների որոշակի ճշգրտումը հիմնականում պայմանավորված էր ԱՄՆ դոլարի դիրքերի կայունացմամբ և աշխարհաքաղաքական ճնշումների բացակայությամբ: Նման պայմաններում վերացավ, այսպես կոչված՝ «անորոշության ռիսկի հավելավճարը», որը պահում էր գներն իրականից փոքր-ինչ բարձր մակարդակի վրա:

Նավթամթերքների դրամային գների աճը զսպվել է փոխարժեքի արժևորման արդյունքում



Ներմուծված ապրանքների սպառողական գների աճը, որը նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ կազմել է 7.8 տոկոս, պայմանավորվել է գործընկեր երկրների բարձր գնաճով և փոխարժեքների արժևորմամբ: Եվրոպական արժույթի արժևորման ազդեցությունը կազմել է 1.0 տոկոսային կետ, իսկ Ռուսաստանի Դաշնությանը՝ 1.4 տոկոսային կետ: Երրորդ եռամսյակում արտաքին գնաճը փոքր-ինչ արագացել է. ամենամեծ ազդեցությունը շարունակել է ունենալ Ռուսաստանը՝ 2.1 տոկոսային կետ: Բացի դրանից, Իրանի ազդեցությունը կազմել է 0.6 տոկոսային կետ, իսկ մնացած մի քանի երկրներինը՝ Եվրոմիություն, Թուրքիա, Ուկրաինա՝ 0.5-ական տոկոսային կետ:

Ինչպես նշել ենք, արտաքին աշխարհից եկող գնաճային ճնշումները մասամբ չեզոքացվել են Կառավարության կողմից բնական գազի գների բարձրացման սուբսիդավորմամբ և ՀՀ դրամի փոխարժեքի շարունակական արժևորմամբ, որն արագացել է երրորդ եռամսյակում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը կազմել է 12.5 տոկոս՝ էապես ավելանալով նախորդ եռամսյակում գրանցված 2.8 տոկոսի համեմատ: Շնորհիվ այս երկու գործոնների՝ ներմուծման դոլարային գների աճը մասամբ չեզոքացվել է, և ներմուծման դրամային գները բարձրացել են ընդամենը 6.2 տոկոսով:

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐ [25]


2006 թվականի երրորդ եռամսյակում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը մոտ 6 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը և կազմել է 108.4%: Երրորդ եռամսյակում դեֆլյատորի վրա առավել ընդլայնող ազդեցություն է ունեցել հիմնականում գյուղատնտեսական արտադրանքի գների և բեռնափոխադրումների սակագների զգալի աճը՝ արդյունաբերության և շինարարության գների ինդեքսների համեմատաբար ցածր աճի պարագայում:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները բարձրացել են 16.1%-ով՝ նախորդ տարվա համապատասխան 19.6% նվազման պարագայում: Գյուղատնտեսական մթերքների մեծածախ գների նման բարձր աճը հիմնականում պայմանավորվել է տարվա ընթացքում շոգ եղանակի հետևանքով բուսաբուծության համախառն բերքի, մասնավորապես՝ կերային մշակաբույսերի, բանջարեղենի և մրգի որոշ տեսակների զգալի նվազմամբ: Մյուս կողմից, գյուղատնտեսությունում գների աճին նպաստել է մշակող ձեռնարկությունների կողմից գյուղմթերքների նկատմամբ ներկայացված պահանջարկի աճը[26], ինչպես նաև գյուղմթերքների արտահանման ծավալների ավելացումը[27]: Արդյունքում՝ մրգի և բանջարեղենի առաջարկի նվազման հետևանքով դրանց գների աճը 1.7 տոկոսային կետով նպաստել է 2006 թվականի երրորդ եռամսյակի գնաճի ցուցանիշին:

Արդյունաբերության ոլորտում արտադրանքի գների աճը կազմել է 3.8%՝ զիջելով նախորդ երկու տարիների նույն եռամսյակի ցուցանիշներին: Ընդ որում, գների աճ է արձանագրվել շինանյութերի արտադրության ենթաճյուղում (հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գների մոտ 27% աճ), թեթև արդյունաբերությունում (հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գների մոտ 17% աճ), ինչպես նաև ոսկերչական արդյունաբերությունում (հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գների 12.4% աճ): Ընդ որում, շինանյութերի գների աճի հիմնական պատճառը կապիտալ շինարարության ճյուղում աճի տեմպի արագացման հետևանքով շինանյութերի նկատմամբ պահանջարկի ավելացումն է:

Շինարարության ոլորտում գների ինդեքսի աճի տեմպը դանդաղել է, ինչի արդյունքում 2006 թվականի երրորդ եռամսյակում ճյուղի գներն ավելացել են 5.5%-ով՝ 2005 թվականի համապատասխան 25% աճի դիմաց: Ճյուղում գների շարունակական բարձրացումը պայմանավորվել է կապիտալ շինարարության ծավալների պահպանվող բարձր աճով, որն ավելացնում է պահանջարկը շինմոնտաժային աշխատանքների և շինանյութերի շուկաներում՝ հանգեցնելով գների մշտական ավելացման: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության գների ինդեքսի կազմի մեջ մտնող շինմոնտաժային աշխատանքների և շինարարական ապրանքների գները սպառողական գների ինդեքսում չնչին կշիռ են կազմում (մոտ 0.3%), շինարարության գների ինդեքսն ուղղակի ազդեցություն չի թողնում գնաճի վրա:

2006 թ. երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, բոլոր ճյուղային գների ինդեքսները աճել են, որն առավելագույնն է գյուղատնտեսության և բեռնափոխադրումների ճյուղերում



[25] *Ներկայացված են 2006 թվականի երրորդ եռամսյակի գների ինդեքսները և դրանց փոփոխությունը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:*

[26] *2006 թվականի հունվար-սեպտեմբերին գյուղմթերքներ մշակող ձեռնարկությունների թողարկած արտադրատեսակների աճ է արձանագրվել, մասնավորապես՝ բնական հյութերի արտադրությունը ավելացել է 52.6%-ով, մսամթերքինը՝ 28.1%-ով, պահածոներինը՝ 23.4%-ով:*

[27] *Արտահանման կառուցվածքում 2006 թվականի հունվար-սեպտեմբերին գրանցվել է բուսական ծագման արտադրանքի 52.4% աճ:*

Արտաքին միջավայրի զարգացումներ

Արտաքին միջավայրի զարգացումների վերաբերյալ սպասումները տնտեսության իրավիճակի գնահատումից բխող հետևություններ են: Ըստ ԱՄՀ World Economic Outlook պարբերականի սեպտեմբեր ամսվա տվյալների՝ տնտեսական աճը հիմնականում կպահպանի իր բարձր մակարդակը 2006 և 2007 թվականներին:

Համաշխարհային տնտեսության զարգացումները

Ցուցանիշներ	2005	2006	2007
Համաշխարհային տնտեսություն			
Տնտեսական աճ	4.9	5.1	4.9
ԱՄՆ			
Տնտեսական աճ	3.2	3.4	2.9
Գնաճ	3.4	3.6	2.9
Եվրոգոտի			
Տնտեսական աճ	1.3	2.4	2.0
Գնաճ	2.2	2.3	2.4
Ռուսաստանի Դաշնություն			
Տնտեսական աճ	6.4	6.5	6.5
Գնաճ	12.6	9.7	8.5

Ապրիլյան կանխատեսումների նկատմամբ ևս 0.2 տոկոսային կետով ավելացման ուղղությամբ վերանայվել է Եվրոմիության տնտեսական աճը և կազմել 2.4 տոկոս, մինչդեռ ԱՄՆ տնտեսական աճի կանխատեսված մակարդակը չի փոփոխվել՝ 3.4 տոկոս: Ռուսաստանի տնտեսական աճը ավելացվել է 0.5 տոկոսային կետով՝ մինչև 6.5 տոկոս: Բացի դրանից, բարձր տնտեսական աճ է կանխատեսվել նաև Արևելյան Ասիայում և զարգացող երկրներում: Երրորդ եռամսյակը կանխորոշիչ էր հումքային ապրանքների գների առումով, քանի որ այդ եռամսյակի ընթացքում վերջիններս էապես կայունացան, իսկ նավթամթերքների գները եռամսյակի վերջում նույնիսկ նվազեցին: Արդյունքում՝ զարգացած երկրներում հուլիս-օգոստոս ամիսներին բարձրակետին հասած գնաճի ցուցանիշները սեպտեմբերին սկսեցին նվազել:

Միջազգային ֆինանսական և ապրանքահումքային շուկաների զարգացումները

	I-06	II-06	III-06	IV-06	I-07[28]	II-07[28]	III-07[28]
LIBOR 3-ամսյա տոկոսադրույք	4.8	5.3	5.4	5.4	5.3	5.2	5.1
USD/EUR փոխարժեք	1.20	1.26	1.27	1.28	1.32	1.33	1.34
RUR/USD փոխարժեք	28.2	27.2	26.8	26.7	26.5	26.3	26.2
Brent տեսակի նավթի գին (ԱՄՆ դոլար/բարել)	61.9	69.8	69.6	62.0	67.4	71.1	75.0
Ոսկու գին (ԱՄՆ դոլար/տրոյական ունցիա)	554.0	627.4	621.2	605.3	606.7	616.7	626.7
Պղնձի գին (ԱՄՆ դոլար/տոննա)	4947.5	7228.8	7582.2	7360.0	7180.0	7000.0	6820.0

Միջազգային ֆինանսական պայմանների խստացումը շարունակվեց նաև երրորդ եռամսյակում: Չնայած ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգը դադարեցրեց տոկոսադրույքների բարձրացման քաղաքականության իրականացումը, սակայն Եվրոպական կենտրոնական բանկը և Անգլիայի բանկը շարունակեցին տոկոսադրույքների քայլ առ քայլ ավելացումը, իսկ երրորդ եռամսյակի սկզբին Ճապոնիայի բանկը հրաժարվեց 0-ական տոկոսադրույքների իր քաղաքականությունից: Համաշխարհային անհաշվեկշռվածությունները, մասնավորապես՝ ԱՄՆ ընթացիկ հաշվի խորը պակասուրդը և Արևելյան Ասիայի խոշոր հավելուրդը դեռևս պահպանվեցին երրորդ եռամսյակում, և ակնկալվում է նույնիսկ անհաշվեկշռվածությունների որոշ խորացում 2007 թվականի ընթացքում:

[28] *Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների:*

Այս ամենը պահպանում է ԱՄՆ դոլարի հիմնարար թույլ դիրքերը, սակայն արժեզրկման սպասումներն արդեն այդքան էլ արտահայտված չեն (սեպտեմբերին նույնիսկ գրանցվել է որոշակի արժևորում): Այս փաստը զուգակցվելով աշխարհաքաղաքական հարաբերական կայունությամբ, հումքային ապրանքների գների աճի դանդաղեցման հիմքեր է ստեղծում, որը հատկապես արտահայտվում է նավթամթերքների և մետաղների գների կայունության սպասումներում: Այնուամենայնիվ, միջազգային գների բարձրացման և բնակլիմայական պայմանների պատճառով Ռուսաստանի և Ուկրաինայի հացահատիկի բերքի վատ լինելու փաստերը հավանական են դարձնում ներկրվող հացահատիկի գների որոշակի աճը արդեն իսկ ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակում:

Ներքին տնտեսության զարգացումներ

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

2006 թվականի առաջին ինն ամիսներին տնտեսության ճյուղային զարգացումները իրատեսական են դարձնում տարվա վերջի դրությամբ տարեկան երկնիշ տնտեսական աճի ապահովումը: Ընդ որում, տնտեսական աճին նպաստման առումով շարունակելու են առանձնանալ կապիտալ շինարարության և ծառայությունների ճյուղերը: Միևնույն ժամանակ, սպասվում է արդյունաբերության և գյուղատնտեսության աճի տեմպերի դանդաղ վերականգնում:

Կանխատեսվում է նաև տնտեսության զարգացման վերը նկարագրված միտումների պահպանում 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում, որի պարագայում հունվար - սեպտեմբերին ակնկալվում է տնտեսական աճի 8.6% մակարդակ: Նշված աճին առավելապես նպաստելու են շինարարության (մոտ 3.3 տոկոսային կետով) և ծառայությունների (մոտ 3.2 տոկոսային կետով) ճյուղերը:

Ընդ որում, նշված ժամանակահատվածում կանխատեսվում է արդյունաբերության աճի տեմպերի վերականգնում, որը կնկատվի 2006 թվականի չորրորդ եռամսյակից սկսած՝ պայմանավորված, մասնավորապես, գունավոր մետաղագործության ենթաճյուղում նոր արտադրական հզորությունների գործարկման համար իրականացվող ներդրումներով: Արդյունաբերության աճի միտումը կպահպանվի նաև 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում:

Գյուղատնտեսության ոլորտում, ըստ 2006 թվականի արդյունքների, ակնկալվում է մոտ 1.5% տարեկան աճի տեմպ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում՝ 4.7% իրական աճ: Վերջինս կպայմանավորվի անասնապահության ենթաճյուղում թողարկման ծավալների աճի և բուսաբուծությունում ակնկալվող բանջարեղենի որոշ տեսակների բերքի՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի մակարդակի պահպանմամբ: Այնուամենայնիվ, ճյուղի արտադրողականության աճի էական տեղաշարժեր չեն ակնկալվում: Վերջինիս հետևանքով 2007 թվականի առաջին երկու եռամսյակներում գյուղատնտեսությունում կանխատեսվում է ավելացված արժեքի աճի փոքր (մոտ 3%) ցուցանիշի պահպանում, իսկ երրորդ եռամսյակում՝ մոտ 4% իրական աճ՝ պայմանավորված 2006 թվականի երրորդ եռամսյակում արձանագրված մոտ 5% իրական անկմամբ:

Ինչպես 2006 թվականի տարեկան արդյունքներով, այնպես էլ 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է կապիտալ շինարարության աճի բարձր տեմպերի պահպանում, որը, մասնավորապես, կպայմանավորվի ընթացիկ շինարարական նախագծերի երկարաժամկետ բնույթով, ինչպես նաև նոր ներդրումային ծրագրերի իրագործմամբ:

Նշված ժամանակահատվածում ծառայությունների ոլորտում նույնպես պահպանվելու են աճի բարձր տեմպեր՝ պայմանավորված բնակչության եկամուտների շարունակվող աճով: Միևնույն ժամանակ, կապի ոլորտում սպասվում է զգալի աշխուժացում՝ կապված Հայաստանի հեռախոսակապի շուկայում ներդրումների իրականացման հետ, իսկ տրանսպորտի ոլորտում կանխատեսվող աճը կապված է երկաթգծի նոր ուղղության (Երևան-Բաթում) ակտիվ շահագործման, ինչպես նաև Իրան-Հայաստան նոր գազամուղի շահագործման հետ:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ինչպես 2006 թվականի ինն ամիսների ընթացքում, այնպես էլ մինչև տարեվերջ տնտեսական աճի սպասվող բարձր մակարդակը կապահովվի ներքին պահանջարկի աճի հաշվին: Ներքին պահանջարկի կառուցվածքում պահպանվելու են մասնավոր ներդրումների աճի բարձր տեմպերը, թեև ակնկալվում է մասնավոր սպառման աճի տեմպի որոշակի նվազում:

Համախառն պահանջարկի կառուցվածքում 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում կանխատեսվում է մասնավոր ծախսերի ավելի քան 9% աճ: Մասնավորապես՝ առաջին եռամսյակում այն ապահովվելու է հիմնականում 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ մասնավոր սպառման շուրջ 10% ավելացման, իսկ երկրորդ և երրորդ եռամսյակներում՝ նաև մասնավոր ներդրումների ակնկալվող աճի տեմպի ավելացման հաշվին (2007 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակներում, 2006 թվականի համապատասխան եռամսյակների համեմատ, ենթադրվում է մասնավոր ներդրումների ավելի քան 10% իրական աճ):

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ամփոփելով տարվա ինն ամիսների պետական բյուջեի կատարման ընթացքը, նշենք որ ծրագրված արտաքին հոսքերի՝ մասնավորապես Լինսի հիմնադրամից նախատեսված դրամաշնորհների չստացման, ինչպես նաև եկամուտների գերակատարմանը զուգահեռ ծախսերի ծրագրի չկատարման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ունեցել է գրեթե չեզոք ազդեցություն: 2006 թվականի պետական բյուջեի ճշտված ծախսերի ծրագրի ապահովման տեսանկյունից, չորրորդ եռամսյակին բաժին ընկնող ծախսերի (ներառյալ Լինսի դրամաշնորհի հաշվին նախատեսված միջոցները) կատարման պարագայում ակնկալվում է ծախսերի ընդլայնող ազդեցություն: Տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես կլինի ընդլայնող:

Ըստ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ցուցանիշների հիման վրա կատարված գնահատումների, ակնկալվում է, որ տարվա առաջին կեսին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն, իսկ երրորդ եռամսյակում՝ փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն:

Գնաճի կանխատեսումներ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Գնաճի կանխատեսումներում կատարվել են արտաքին հատվածի հետևյալ ենթադրությունները.

- Առաջիկա 12 ամսում ակնկալվում է նավթամթերքների գների դանդաղ և կայուն աճ:
- Ավելի իրատեսական է դարձել ներկրվող հացահատիկի գների թանկացումը, որը կարող է գրանցվել արդեն չորրորդ եռամսյակից սկսած:
- Դեռևս պահպանվում են հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի հետագա չափավոր արժեզրկման որոշակի սպասումները, որի դեպքում որոշ չափով կարող են թանկանալ գործընկեր երկրներից ներմուծվող ապրանքների դոլարային գները:
- ԱՄՆ դոլարի արժեզրկումը և նավթի գների բարձրացումը կարող են ավելացնել գնաճի ճնշումները նաև Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների ավելացման միջոցով:
- Համաշխարհային գնաճի տեմպերի որոշակի նվազման միտումներ են արձանագրվում, չնայած ընդհանուր աճի մակարդակը մնում է բավականին բարձր:

Ընդհանուր առմամբ, արտաքին հատվածից դեռևս սպասվում են գնաճային մեծ ճնշումներ, թեև դրանք որոշակիորեն նվազել են: Ինչ վերաբերում է ռիսկերին, ապա դրանք կարող են դրսևորվել երկկողմանի, և դժվար է դրանց ուղղվածության մասին միանշանակ գնահատական տալ:

ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ներքին տնտեսությանն առնչվող հիմնական ենթադրությունները հետևյալն են.

- Իրատեսական է մինչև 2006 թվականի վերջ և 2007-ին բարձր տնտեսական աճի արձանագրումը: Տնտեսական աճի ակնկալվող բարձր մակարդակի մասին են վկայում նաև տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները՝ ըստ ԿԲ բաղադրյալ ինդեքսների (գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության, սպառողների վստահության ինդեքսներ):
- Ակնկալվում է կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտների բարձր աճի տեմպերի պահպանում մինչև 2006 թվականի վերջ և 2007 թվականի ընթացքում՝ պայմանավորված բնակչության եկամուտների շարունակվող աճով և Հայաստանում զբոսաշրջության զարգացմամբ:

- Արդյունաբերության ոլորտում առաջիկա մեկ տարում աճը կշարունակվի՝ պայմանավորված նախորդ տարիներին կատարված ներդրումների արդյունքում նոր հզորությունների գործարկմամբ: Չնայած 2006 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում գյուղատնտեսության ճյուղում արձանագրված իրական անկմանը, 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է արտադրության իրական ծավալների վերականգնում և 2007 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում՝ արտադրության ծավալների կայուն աճ:
- Համախառն պահանջարկի մասով 2006 թվականի չորրորդ եռամսյակում և 2007 թվականի ընթացքում ակնկալվում է սպառման բարձր աճ, որը պայմանավորված կլինի բնակչության եկամուտների և մասնավոր տրանսֆերտների շարունակական ավելացմամբ: 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է համախառն ներդրումների աճի տեմպերի դանդաղում, այնուհետև, 2007 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում, դրանց կայունացում:
- 2006թ. չորրորդ և 2007թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում նաև կպահպանվի առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացումը՝ արտահանման ֆիզիկական ծավալների նվազման և ներմուծման ծավալների ավելացման հետևանքով:
- Չնայած տնտեսությունում ակնկալվող ներդրումների շարունակվող աճին, արտադրողականության ավելացման ցուցանիշը դեռ զիջելու է իրական աշխատավարձի աճի ցուցանիշին՝ որոշակի գնաճային ճնշումներ առաջացնելով սպառողական շուկայում:
- Տարվա արդյունքներով՝ 2006թ. ընթացքում ակնկալվում է հարկաբյուջետային քաղաքականության փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն, իսկ 2007թ. առաջին երեք եռամսյակներում, նախորդ տարիներին բյուջեի կատարման գործընթացում դրսևորված սեզոնայնության պահպանման հանգամանքը հաշվի առնելով, կարելի է ակնկալել զսպողական ազդեցություն առաջին կիսամյակում և փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն՝ երրորդ եռամսյակում:
- ՀՀ տնտեսությունում արագացող ապադոլարայնացման պայմաններում մինչև 2006թ. վերջ ԿԲ-ն կբավարարի դրամի նկատմամբ տնտեսության կողմից ներկայացվող մեծ պահանջարկը՝ ներքին արժութային շուկայում արտարժույթ գնելով: Դա էլ, զուգակցվելով բյուջեի մեծածավալ ծախսումների հետ, տնտեսությունում կառաջացնի իրացվելիության ավելցուկ, որի կրճատումը ԿԲ-ն կիրագործի ակտիվ ներքաշող գործառնությունների միջոցով: 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում կձևավորվեն փողի ագրեգատների 12-ամսյա բարձր աճի տեմպեր՝ պայմանավորված 2006 թվականի վերջին դրանց մեծածավալ աճով, սակայն այդ աճը 2006 թվականի համապատասխան ցուցանիշների համեմատությամբ ավելի զուսպ կլինի:

Ներքին և արտաքին միջավայրերի ներկայացված սցենարի պայմաններում ակնկալվում է, որ 2007թ. երրորդ եռամսյակի գնաճը կգտնվի ծրագրված 4% $\pm$1.5% միջակայքում: Սակայն հնարավոր է նաև բարձր գնաճային ռիսկերի դրսևորում՝ պայմանավորված և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոններով: Թեև արտաքին հատվածում վերջին շրջանում գրանցվել է նավթի միջազգային գների որոշակի նվազում, դեռևս պահպանվում են գնաճային ռիսկերը՝ հիմնականում կապված էներգակիրների և այլ ապրանքների (բազային մետաղներ, շաքարավազ)՝ տարվա ընթացքում արդեն իսկ ձևավորված միջազգային գների բարձր մակարդակով, ինչպես նաև Ռուսաստանում և Ուկրաինայում հացահատիկի բերքի սպասվող նվազմամբ:

Շինարարության և ծառայությունների ոլորտների աննախադեպ բարձր աճի արդյունքում եկամուտների ավելացումը, զուգորդվելով գյուղատնտեսական ապրանքների գների աճով պայմանավորված գյուղատնտեսության ոլորտի անկմամբ, շարունակում է ստեղծել գնաճային ճնշումներ:

Հարկաբյուջետային տեսանկյունից, մինչև տարեվերջ հնարավոր բյուջետային մեծածավալ ծախսերի՝ գնաճի վրա բարձրացման ուղղությամբ լագային ազդեցությունը կդրսևորվի արդեն 2007-ի առաջին կեսին:

Գնաճային ռիսկերը զսպելու նպատակով ԿԲ-ն ակտիվորեն կկրճատի ինչպես իր գործառնությունների, այնպես էլ բյուջեի ծախսումների հետևանքով գոյացած ավելցուկային իրացվելիությունը: Այնուամենայնիվ, գնաճային ճնշումների պահպանման պարագայում ԿԲ-ն կշարունակի դրանց աստիճանական չեզոքացումը՝ տոկոսադրույքների բարձրացման միջոցով:

Առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումներն առավել մանրամասն ներկայացված են «Մինչև 2006 թվականի ավարտը և 2007 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հոկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

(31.07.2006)

2006 թվականի օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2006 թվականի հուլիսի 31-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև հուլիսն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ու ցուցանիշների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ. 2006 թվականի հուլիսին 12-ամսյա գնաճը, ըստ Ազգային վիճակագրական ծառայության վերջնական տվյալների, կազմել է 6.8%: Գնաճը ձևավորվել է պարենային ապրանքների՝ 7.6%, ոչ պարենային ապրանքների գների՝ 5.2% և ծառայությունների սակագների 5.2% աճի արդյունքում: 2005 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 2006 թ. հուլիսին գնաճը կազմել է 3.6%, իսկ վերը թվարկված ապրանքախմբերի գնաճը՝ համապատասխանաբար 3.9%, 2.2% և 4%:

2006 թվականի երրորդ եռամսյակի ավարտին 12-ամսյա գնաճը, ըստ Կենտրոնական բանկի ճշգրտված կանխատեսումների, կգերազանցի առավելագույնը 3% նպատակային ցուցանիշը:

Արտաքին միջավայր. Հուլիսի վերջի դրությամբ արտաքին հատվածից եկող ճնշումները գնաճի վրա հիմնականում արտահայտվել են նավթի միջազգային գների և հումքային ապրանքատեսակների գների շարունակվող աճով՝ պայմանավորված աշխարհաքաղաքական խնդիրներով: Ինչ վերաբերում է եվրո/ԱՄՆ դոլար փոխարժեքի վարքագծին, ապա վերջինս գրեթե չի շեղվել ակնկալվող մակարդակից, և 2006 թ. հուլիսին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, եվրոյի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 5.3%:

Իրական հատված: Երկրորդ եռամսյակում գրանցված տնտեսական աճը, գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, կազմել է 14.1%, ինչն իրատեսական է դարձնում տարվա արդյունքում երկնիշ ցուցանիշի արձանագրումը: Ընդ որում, կանխատեսված իրական աճի գերազանցում է արձանագրվել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում:

Մասնավորապես, բավականին բարձր աճի տեմպ է արձանագրվել շինարարության (38.1%) և ծառայությունների (11.0%) ոլորտներում: Վերջինս պայմանավորված է ինչպես բնակչության եկամուտների աճի արդյունքում ներքին պահանջարկի, այնպես էլ զբոսաշրջության ավելացմամբ:

Կանխատեսվածից բարձր աճ է գրանցվել գյուղատնտեսության ոլորտում (8.5%)՝ հիմնականում պայմանավորված ավելի վաղ վեգետացիոն շրջանի շնորհիվ բուսաբուծության իրական ծավալների աճով:

Արդյունաբերության ճյուղում տարվա երկրորդ եռամսյակում արձանագրվել է 1.1% աճ, որը ավելի ցածր էր սպասվածից: Ոսկերչական ապրանքատեսակների արտադրության շարունակվող անկման պարագայում նշված շեղումը հիմնականում պայմանավորվել է գունավոր մետաղագործության աճի տեմպի որոշակի նվազմամբ, ինչպես նաև քիմիական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության ենթաճյուղերում շարունակվող անկմամբ:

Երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, արձանագրվել է իրական արտահանման նվազում (5.7%) և ներմուծման ցածր աճ (0.9%): Ընդ որում, արտահանման նման վարքագիծը պայմանավորված է արդյունաբերության ճյուղում գրանցված ցածր աճով, ինչպես նաև ադամանդագործության ճյուղում հումքի ներկրման և վերամշակված ապրանքի արտահանման ծավալների նվազմամբ:

Հարկաբյուջետային հատված. 2006 թվականի երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա ունեցել է ավելի քիչ ընդլայնող ազդեցություն, քան սպասվում էր: Երրորդ եռամսյակում այդ ազդեցությունը կարող է լինել քիչ ընդլայնող՝ նախկինում կանխատեսված չեզոք ազդեցության համեմատ:

Փող և վարկ. 2006 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ձևավորված դրամավարկային ցուցանիշները մոտ են եղել կանխատեսումներին: Այնուհանդերձ, արձանագրվել են որոշ ցուցանիշների՝ սպասվածից ցածր աճի տեմպեր, մասնավորապես, ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդների աճի տեմպերը դանդաղել են: Տնտեսության փողայնացման փաստացի աճը ցածր էր՝ պայմանավորված տնտեսական աճի տեմպերի արագացմամբ: Եռամսյակի դրամավարկային վիճակագրությունը հետևյալն է. փողի զանգվածը, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, ավելացել է 26.2%-ով, դրամային զանգվածը՝ 40.6%-ով, փողի բազան՝ 38.9%-ով: Շարունակվել է վարկավորման աճը՝ ի հաշիվ առևտրային բանկերի ավելցուկային միջոցների, ինչպես նաև արտաքին ակտիվների նվազման:

Արծանագրեցին. ԿԲ խորհուրդը իրատեսական է համարում տնտեսության զարգացման միտումների շարունակման պարագայում երկնիշ տնտեսական աճի արձանագրումը, սակայն գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու գործընթացում ռիսկերը պահպանվում են, և դրանց դրսևորումը դառնում է ավելի հավանական:

Դեռևս առկա են հումքային ապրանքների՝ մասնավորապես նավթամթերքի և մետաղների միջազգային գների՝ սպասվածից բարձր աճի ռիսկեր, որոնք հիմնականում պայմանավորված են ԱՄՆ դոլարի հնարավոր արժեզրկմամբ և աշխարհաքաղաքական իրադրության սրմամբ: Հավանական է նաև ՀՀ ներմուծվող հացահատիկի գների աճ՝ պայմանավորված Ռուսաստանում և Ուկրաինայում բերքի սպասվող նվազմամբ:

Բացի արտաքին միջավայրի ռիսկերից, գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկեր կարող է առաջացնել նախատեսվածից բարձր աճ արձանագրած՝ շինարարության և ծառայությունների ոլորտներին բնորոշ եկամուտների առավել հավասարաչափ ավելացումը:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարևորում է այն հանգամանքը, որ մինչև տարեվերջ սպասվող բյուջետային մեծածավալ ծախսերը գնաճի վրա ունենալու են բարձրացման ուղղությամբ լագային ազդեցություն, ինչը կդրսևորվի 2007-ի առաջին կեսին: Վերջինս, զուգակցվելով վերը նշված գործոններին, կհանգեցնի գնաճային զգալի ճնշումների:

ԿԲ խորհուրդը հայտարարում է, որ առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի համար վերոնշյալ գործոնները գնաճի տարեկան առավելագույնը 3% նպատակային ցուցանիշի գերազանցման էական ռիսկեր են: Բարձր գնաճային միջավայրի ձևավորմանը նպաստում է նաև 2006 թ. հուլիսի 1-ից ջրամատակարարման և ջրահեռացման սակագների ավելացումը:

Որոշեցին. Բարձրացնել ռեպո տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 4.25%: Տնտեսության զարգացման հեռանկարների պահպանման և նշված ռիսկերի դրսևորման պարագայում Կենտրոնական բանկի խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների ճշգրտումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(29.08.2006)

2006 թվականի սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2006 թվականի օգոստոսի 29-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ Մովսեսյանը, Ա. Նորեկյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչ օգոստոսն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2006 թ. օգոստոսին, հուլիսի համեմատությամբ, գրանցվել է 0.9% գնանկում, իսկ 2005 թ. դեկտեմբերի վերջի համեմատությամբ գնաճը կազմել է 2.7%: Դա համապատասխանում է 12-ամսյա գնաճի ցուցանիշին (7.2%), որը ձևավորել է պարենային ապրանքների՝ 8%, ոչ պարենային ապրանքների գների՝ 5.3% և ծառայությունների սակագների 4.5% աճը:

Պարենային ապրանքների գների բարձր աճի տեմպեր են արձանագրվել հատկապես «Շաքարավազ», «Միրգ» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի գծով՝ համապատասխանաբար 35.2%, 25.2% և 49.2%, իսկ տարեսկզբի համեմատությամբ՝ 30.7%, 7.9% և 8.4%:

Ոչ պարենային ապրանքների գների աճի տեմպերը բարձր են եղել «Ոսկերչական ապրանքներ», «Այգեգործական ապրանքներ», «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» և «Շինանյութեր» ապրանքախմբերի գծով, որոնց աճի տեմպերը տարեսկզբի համեմատությամբ կազմել են համապատասխանաբար 31.9%, 23%, 8.8% և 5.7%:

Տարեսկզբի համեմատությամբ օգոստոսին ծառայությունների սակագների բարձր աճ է արձանագրվել «Կոշիկի վերանորոգման»՝ 5.1%, «Բուժսպասարկման»՝ 6.9% և «Կապի»՝ 10.6%, հոդվածների գծով:

Ներմուծման դոլարային գների աճը 2006 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, կազմել է 20.4%, ընդ որում՝ աճ է գրանցվել սպառողական բնույթի, միջանկյալ սպառման ապրանքների և հումքային ապրանքների գներում:

Ստեղծված իրավիճակում երրորդ եռամսյակի ավարտին 12-ամսյա գնաճը, ըստ ԿԲ գնահատումների, կգերազանցի նպատակային առավելագույն 3% ցուցանիշը:

Արտաքին միջավայր. Արտաքին միջավայրի զարգացումները օգոստոսին հիմնականում շարունակել են տարեսկզբից դրսևորված միտումները: Մասնավորապես, շարունակվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժևորումը. օգոստոսին, նախորդ տարվա օգոստոսի համեմատությամբ՝ շուրջ 5.1%: Պահպանվել են նաև հումքային ապրանքատեսակների, մասնավորապես նավթի գների բարձր աճի տեմպերը՝ 26.8%: Նշված զարգացումները, որպես գնաճային ռիսկեր, նախօրոք մատնանշվել էին և շարունակում են գնաճային ճնշումներ ստեղծել:

Իրական հատված. Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հուլիսին տնտեսության իրական հատվածում շարունակվել են նախորդ ամիսների միտումները, ինչի արդյունքում հունվար-հուլիսին տնտեսական աճը կազմել է 11.6%: Դա հիմնականում պայմանավորվել է շինարարության ծավալների աճի տեմպերի արագացմամբ (արդյունքում հունվար-հուլիսին շինարարության ավելացված արժեքն աճել է 36.6%-ով), ինչպես նաև ծառայությունների ոլորտում դեռևս տարվա սկզբից արձանագրված աճի բարձր տեմպերով (14.6%):

Գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է թողարկման ծավալների 6.8%-ով նվազում՝ պայմանավորված հունիս-հուլիս ամիսներին սովորականից շոգ եղանակի հետևանքով բուսաբուծության որոշ արտադրատեսակների (հացահատիկ, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր և ծիրան) բերքի նվազմամբ[29]: Վերջինս, զուգակցվելով մշակող արդյունաբերության կողմից արտահանմանն ուղղված

[29] *Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է 6.1%-ով, այնինչ հունվար-հունիսին արձանագրվել էր 7.2% իրական աճ: Նշենք, որ 2000-2005 թվականների օգոստոս ամսին գյուղատնտեսությունում արտադրվել է տարվա արտադրանքի մոտ 16%-ը և հունվար-հուլիսի արտադրանքի մոտ 40%-ը: Այսինքն, միայն 2006 թվականի հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ նվազել է մոտ 27%-ով:*

(մասնավորապես՝ Վրաստան) գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ[30], գնաճային ճնշումներ է ստեղծել և՛ արտադրանքի բացթողման գների, և՛ սպառողական շուկայում մանրածախ գների առումով: Մասնավորապես, սպառողական շուկայում արձանագրվել է «Միրգ» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի գների սովորականից ցածր սեզոնային անկում. բանջարեղենի գների նվազումը 2006 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կազմել է 25.1%՝ նախորդ տարվա 35.8%-ի փոխարեն, իսկ մրգի գները նույն ժամանակահատվածում նվազել են 22%-ով՝ նախորդ տարվա 43.8%-ի փոխարեն:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով օգոստոսին և սեպտեմբերին ակնկալվող հարուստ բերքը (բոստանային կուլտուրաների, մրգի որոշ տեսակների և այլնի), երրորդ եռամսյակում սպասվում է գյուղատնտեսական արտադրանքի իրական աճի տեմպերի վերականգնում:

Հուլիսին արդյունաբերության ճյուղի իրավիճակը, ինչպես և ակնկալվում էր, առանձնապես չի փոփոխվել, որի արդյունքում հունվար-հուլիսին արձանագրվել է 1% իրական նվազում՝ պայմանավորված ադամանդագործության, էլեկտրաէներգիայի արտադրության, քիմիական և հանքային արդյունաբերության ենթաճյուղերում դեռևս տարվա սկզբից արձանագրված արտադրության ծավալների անկմամբ:

Արդյունաբերության ճյուղի զարգացումներն արտահայտվել են արտահանման անվանական ծավալների շարունակվող նվազմամբ, ինչը հունվար-հուլիսին կազմել է 2.2%: Վերջինիս նվազումը պայմանավորվել է մեծ կշիռ կազմող երեք ապրանքախմբերի («Պատրաստի սննդի արտադրանք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր») արտահանման ծավալների նվազմամբ: Միաժամանակ, բնակչության եկամուտների, ինչպես նաև ներդրումների նկատմամբ պահանջարկի աճը հանգեցրել է ներմուծման աճի տեմպերի փոքր-ինչ արագացման, ինչը հունվար-հուլիսին կազմել է 20.5%:

Ընդհանուր առմամբ, չնայած ճյուղային միտումների՝ սպասվածից որոշակի շեղմանը, ակնկալվում է, որ տարվա երրորդ եռամսյակում տնտեսության իրական աճը կձևավորվի կանխատեսվածի սահմաններում (12.3%):

Աշխատուժի շուկա. Աշխատուժի շուկայի վարքագիծը, այդ թվում աշխատավարձի աճը, դրսևորվել է կանխատեսվածի շրջանակում: 2006 թվականի հուլիսին, նախորդ տարվա հուլիսի համեմատությամբ, միջին աշխատավարձի մակարդակը իրական արտահայտությամբ ավելացել է մոտ 16.2%-ով (2003-2005 թվականներին միջին տարեկան աշխատավարձի իրական աճը կազմել է 21.7%): Վերջինս զուգակցվել է տրանսֆերտների շարունակական մեծածավալ ներհոսքով. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ հուլիսին տրանսֆերտների աճը կազմել է 48%: Արդյունքում, բնակչության եկամուտների շարունակվող աճը մեծացրել է գնաճային ճնշումները սպառողական շուկայում, ինչպես նաև հանգեցրել ներմուծման աճի տեմպերի արագացմանը:

Համախմբված բյուջե. 2006 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնահատող հարկաբյուջետային ազդակի նախնական փաստացի ցուցանիշը (հաշվարկված հուլիս ամսվա փաստացի ցուցանիշների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տրամադրած՝ օգոստոս, սեպտեմբեր ամիսների նախնական ցուցանիշների վրա) ունեցել է փոքր-ինչ զսպող (0.3%) ազդեցություն՝ ծրագրված չեզոքի փոխարեն: Եկամուտների մասով ակնկալվում է զսպող ազդեցություն՝ ծրագրված ընդլայնողի փոխարեն, որը բացատրվում է ոչ հարկային և կապիտալ եկամուտների մասով առաջացած մոտ 5.5 մլրդ դրամի (նախատեսված չէր նաև ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի եռամսյակային համամասնություններում) և հարկային եկամուտների ակնկալվող մոտ 0.6 մլրդ դրամի գերակատարմամբ: Ծախսերի նախնական փաստացի ցուցանիշը ևս 5.5 մլրդ դրամով ավելի է երրորդ եռամսյակի ծրագրված ցուցանիշից, որը չեզոքացնում է երրորդ եռամսյակում Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին նախատեսված մոտ 5.0 մլրդ դրամ ծախսի չկատարումը: Արդյունքում՝ ծախսերի ազդեցությունը մնում է ծրագրվածին համապատասխան՝ 0.18 զսպող:

Փող և վարկ. Ելնելով անցած յոթ ամիսներին ձևավորված գնաճային ճնշումներից՝ Կենտրոնական բանկն օգոստոսի սկզբին, բարձրացնելով վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով, իրականացրել է զսպողական դրամավարկային քաղաքականություն՝ միաժամանակ ակտիվորեն կիրառելով ներքաշող դրամավարկային գործիքներ: Այդ նպատակով ԿԲ-ն տեղաբաշխել է շուրջ 12 մլրդ դրամ ընդհանուր ծավալով սեփական արժեթուղթ: Արդյունքում՝ փողի բազայի 12-ամսյա աճը (2006 թ. օգոստոսը՝ 2005 թ. օգոստոսի համեմատությամբ) կազմել է 19.3%, այն դեպքում, երբ առաջին

[30] Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղմշակման և ծեռներեցության զարգացման վարչության, ինչպես նաև «ՄՄՊ» ընկերության, «Արեգա» պահածոների գործարանի և Երևանի կոնյակի գործարանի տվյալների:

կիսամյակի վերջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, այդ ցուցանիշն աճել է 32%-ով:

Փողի զանգվածը օգոստոսին, նախորդ տարվա օգոստոսի համեմատությամբ, աճել է 12.9%-ով՝ զգալիորեն զիջելով առաջին կիսամյակի նույն ցուցանիշը (22.2%): Այդուհանդերձ, դրամայնացման գործընթացի պարագայում օգոստոսին ևս պահպանվել են փողի ագրեգատների դրամային բաղադրատարրերի բարձր աճի տեմպերը. շրջանառությունում գտնվող կանխիկն ավելացել է տարեկան 29.9%-ով, իսկ դրամային ավանդները՝ 39.5%-ով (2006 թ. օգոստոսը՝ 2005 թ. օգոստոսի համեմատությամբ):

Ինչ վերաբերում է արտարժութային ավանդներին, ապա ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեքավորման ազդեցությունը բացառելու դեպքում, 2006 թ. օգոստոսին, նախորդ տարվա օգոստոսի համեմատությամբ, կունենանք 4.8% աճ, իսկ այդ գործոնի ազդեցությամբ՝ 11% նվազում:

ԿԲ վարած զսպողական դրամավարկային քաղաքականությունը մասամբ անդրադարձել է նաև տնտեսության վարկավորման ցուցանիշի վրա, որի 12-ամսյա աճի տեմպերը զգալի դանդաղել են (30.3%), այն դեպքում, երբ հունիսին, նախորդ տարվա հունիսի համեմատութամբ, վարկավորման աճը կազմել է 41.5%:

Արծանագրեցին. Կենտրոնական բանկի խորհուրդը տնտեսության զարգացման միտումների շարունակման պարագայում իրատեսական է համարում երկնիշ տնտեսական աճի արձանագրումը, սակայն գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու գործընթացում գնաճային ռիսկերը դրսևորվել են, և դրանց պահպանումը ավելի հավանական է:

Արտաքին միջավայրի ռիսկերից հիմնականում առանձնանում են հումքային ապրանքների՝ մասնավորապես նավթի, մետաղների միջազգային գները, որոնք, կապված աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների հետ, հնարավոր է շարունակեն բարձր աճի տեմպերը և ձևավորեն լրացուցիչ գնաճային ճնշումներ ներքին շուկայում:

Ներքին ռիսկերից թերևս առանձնանում է գյուղատնտեսության ճյուղում արձանագրված անկումը, որը «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Միրգ» ապրանքախմբերի՝ սպասվածից քիչ սեզոնային գնանկման պարագայում գնաճային լուրջ ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում:

Միևնույն ժամանակ, եկամուտների շարունակական աճը, 2006 թ. սկսած, իր ազդեցությունն է թողել ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների աճի վրա, որը դրսևորվել է և, ըստ մեր գնահատումների, կպահպանվի հետագա ժամանակահատվածում:

ԿԲ խորհուրդը կարևորում է նաև այն հանգամանքը, որ մինչև տարեվերջ, հատկապես վերջին ամիսներին սպասվող բյուջետային մեծածավալ ծախսերը գնաճի վրա ունենալու են բարձրացման ուղղությամբ լագային ազդեցություն, ինչը կդրսևորվի արդեն 2007 թվականի առաջին կեսին: Վերջինս, զուգակցվելով վերը նշված գործոնների հետ՝ կհանգեցնի գնաճային զգալի ճնշումների:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածում գնաճը կգերազանցի տարեկան առավելագույնը 3% նպատակային ցուցանիշը:

Որոշեցին. Բարձրացնել վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 4.5%: Տնտեսության զարգացման հեռանկարների պահպանման պարագայում, գնաճային վերոնշյալ ռիսկերը զսպելու նկատառումներից ելնելով, ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների կրկին ճշգրտումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(03.10.2006)

2006 թվականի չորրորդ և 2007 թվականի առաջին երեք եռամսյակների դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2006 թվականի հոկտեմբերի 3-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006 թվականի չորրորդ և 2007 թվականի առաջին երեք եռամսյակների դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց 2006 թվականի անցած ամիսների տնտեսական իրավիճակի, փաստացի գնաճի վերլուծության և 2006 թվականի հոկտեմբերից մինչև 2007 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերի ներկայացումը:

Ըստ ՀՀ ԿԲ կանխատեսումների՝ շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պայմաններում 2007 թվականի սեպտեմբերին, 2006 թվականի սեպտեմբերի համեմատությամբ, գնաճը կկազմի շուրջ 3.3%, 2006 թվականի վերջին, 2005 թվականի վերջի համեմատությամբ՝ 5.6%: Այնուամենայնիվ, 2006 թվականի միջին տարեկան գնաճը չի գերազանցի 3%-ը: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը գնաճի կանխատեսված ցուցանիշի վրա:

2006 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

2006 թվականի սեպտեմբերին, օգոստոսի համեմատությամբ, գրանցվել է 0.3% գնանկում: 12-ամսյա գնաճը կազմել է 5.9%, որին նպաստել է պարենային ապրանքների՝ 6.1%, ոչ պարենային ապրանքների գների՝ 3.3% և ծառայությունների սակագների 4.5% աճը: 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ վերոնշյալ ապրանքախմբերի գնաճը կազմել է համապատասխանաբար 1.1%, 2.4% և 4.4%, իսկ ընդհանուր գնաճը՝ 2.3%

Երրորդ եռամսյակի գնաճի ցուցանիշը ձևավորող գործոնները, ըստ տնտեսության առանձին հատվածների, հետևյալն են.

- Արտաքին հատվածում նավթի միջազգային գների աճը 2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի միջինի համեմատությամբ, կազմել է 13.3%. ընդ որում, հուլիսին նշված ցուցանիշը կազմել է ավելի քան 28%[31]. ներքին տնտեսությունում միայն բենզինի գների աճը գնաճին նպաստել է 0.48 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում միջազգային շուկայում շաքարավազի գնի 38.2% աճը[32] նպաստել է գնաճին 0.51 տոկոսային կետով: Ընդհանուր առմամբ, պայմանավորված համաշխարհային տնտեսությունում գների համընդհանուր մակարդակի բարձրացմամբ, ՀՀ ներմուծվող ապրանքների դոլարային գները երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են 18.4%-ով: Թեև այդ ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվել է (միջինը) 11%-ով, այնուամենայնիվ, ներմուծվող ապրանքների գների նպաստումը սեպտեմբեր ամսվա 12-ամսյա գնաճին կազմել է 1.18 տոկոսային կետ:
- Տնտեսության իրական հատվածում, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում, անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատությամբ արձանագրվել է բուսաբուծության արտադրատեսակների ավելի քան 10%-ով անկում (պայմանավորված բանջարեղենի և մրգի բերքի նվազմամբ): Վերջինս սպառողական շուկայում հանգեցրել է գյուղատնտեսական ապրանքների գների սովորականից բարձր մակարդակի ձևավորմանը, ինչը գնաճին նպաստել է ավելի քան 3 տոկոսային կետով:

[31] *Energy Information Administration, Official Energy Statistics from the US Government, International Financial Statistics Sep-06, International Monetary Fund.*
[32] *Bloomberg, Brazilian raw sugar, International Financial Statistics Sep-06, International Monetary Fund.*

Առաջարկի վերոնշյալ երկու գործոնները, որոնք համաշխարհային պրակտիկայում ընդունված է համարել գնաճի վրա օբյեկտիվորեն ազդող ոչ մոնետար գործոններ, փաստորեն ձևավորել են գնաճի հիմնական մասը: Համախառն պահանջարկի մասով.

- Կապիտալ շինարարության և ծառայությունների աճի բարձր տեմպերը, պայմանավորված բնակարանային շինարարության ծավալների շարունակվող բարձր աճով, ինչպես նաև մետաղագործության և ծառայությունների ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերով, նպաստել են բնակչության եկամուտների ավելացմանը: Մասնավորապես՝ աշխատավարձի իրական աճը 2006 թվականի երրորդ եռամսյակում, 2005 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 20.2%: Եկամուտների աճը, զուգակցվելով մասնավոր տրանսֆերտների զգալի ավելացմամբ (հունվար-օգոստոս ամիսներին՝ 33.2%-ով), հանգեցրել է համախառն սպառման բարձր աճի՝ առաջացնելով գնաճային ճնշումներ:
- Հարկաբյուջետային քաղաքականությունը գնաճի վրա ունեցել է կանխատեսվածից ավելի զսպող ազդեցություն:
- Տնտեսության արտաքին, իրական և հարկաբյուջետային հատվածների պարագայում ձևավորված դրամավարկային ցուցանիշները բավականին մոտ են եղել կանխատեսվածներին: Իրականացված դրամավարկային քաղաքականությունը (վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը, ներքաշող ակտիվ գործառնությունները) որոշ չափով չեզոքացրել է գնաճային ռիսկերը: Երրորդ եռամսյակում ևս տնտեսությունում շարունակվել է դրամայնացման գործընթացը, ինչի վկայությունն է 2006 թվականի սեպտեմբերին, 2005 թվականի սեպտեմբերի համեմատությամբ, դրամային ավանդների՝ 48.5% և կանխիկ դրամի 36.5% աճը:

Տնտեսության առանձին հատվածների զարգացումները և դրանց ազդեցությունը գնաճի վրա ավելի ծավալուն կներկայացվեն 2006 թվականի երրորդ եռամսյակի «Գնաճի հաշվետվությունում»:

2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Արտաքին հատված. Արտաքին միջավայրի հիմնական փոփոխությունը, նախորդ կանխատեսումների համեմատ, վերաբերում է հացահատիկի միջազգային գներին: Ռուսաստանում և Ուկրաինայում հացահատիկի բերքի և դրա արդյունքում արտահանման ծավալների նվազման ռիսկերն ավելի իրատեսական են դարձել: Կանխատեսվում է, որ 2006 թ. չորրորդ եռամսյակում դրանք արդեն կդրսևորվեն, և ՀՀ տնտեսությունում նույնպես կդիտվի հացամթերքի գների որոշակի աճ: Հացահատիկի գների աճը կպահպանվի նաև 2007 թ. առաջին երեք եռամսյակներում, ինչը, բնականաբար, կնպաստի տնտեսությունում ներքին գների աճին:

ԱՄՆ դոլարի վարքագիծը եվրոյի նկատմամբ, նախորդ կանխատեսումների համեմատ, գրեթե չի փոխվել: Հաշվի առնելով, որ Ֆեդերալ պահուստային բանկի տոկոսադրույքները դեռևս չեն բարձրանա, ինչպես նաև առաջիկա մեկ տարվա ընթացքում ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդի բարձր մակարդակը կպահպանվի, ակնկալվում է, որ ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքը կշարունակի ավելանալ հօգուտ եվրոյի:

Ինչ վերաբերում է նավթի միջազգային գներին, ապա, ըստ գնահատումների, 2006 թվականի երրորդ եռամսյակի վերջին գների նվազումը շարունակական չի լինի, քանի որ դա արտահայտում է Մերձավոր Արևելքում քաղաքական լարվածության թուլացման արդյունքում նավթի գների աճի ճշգրտումը: Կանխատեսվում է, որ 2006 թ. չորրորդ և 2007 թ. առաջին երեք եռամսյակներում նավթի գները կունենան կայուն աճի միտում՝ կրելով կառուցվածքային խնդիրների ազդեցությունը՝ ԱՄՆ դոլարի արժեզրկում և նավթի նկատմամբ պահանջարկի աճի տեմպերի գերազանցում առաջարկի աճի տեմպերին:

Արդյունքում, ԱՄՆ դոլարի արժեզրկումը, ինչպես նաև նավթի միջազգային գների աճը ճնշումներ կառաջացնեն տնտեսությունում գների մակարդակի վրա, քանի որ ավելանում են նաև Ռուսաստանի ոչ արտահանելի հատվածում զբաղված մեր հայրենակիցների դոլարային եկամուտները, հետևաբար և ՀՀ ուղարկվող տրանսֆերտների անվանական արժեքը:

Վերոնշյալ զարգացումների արդյունքում կանխատեսվում է, որ ներմուծվող, այդ թվում նաև սպառողական ապրանքների դոլարային գների աճի միտումը կպահպանվի: 2007 թ. առաջին երեք եռամսյակներում սպառողական ապրանքների դոլարային գների աճի միջին տեմպը կպահպանվի 7-8%-ի սահմաններում:

Իրական հատված. 2006 թվականի վերջին եռամսյակում ակնկալվում է տնտեսության ճյուղային ոլորտներում տարվա սկզբից դրսևորված՝ նախորդ ամիսների միտումների շարունակում, ինչի արդյունքում տնտեսական աճը տարվա արդյունքում սպասվում է կանխատեսված 11.4%-ի շրջանակում:

Տնտեսական աճի բարձր մակարդակի ապահովմանը կնպաստի առաջին հերթին կապիտալ շինարարության ոլորտում տարվա սկզբից արձանագրված արագացված աճի տեմպի պահպանումը, ինչպես նաև ծառայությունների ոլորտում ակնկալվող աճի բարձր ցուցանիշը: Այդ մասին են վկայում նաև ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող տնտեսական ակտիվության ինդեքսները:

Ակնկալվում է, որ կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտների զարգացումը շարունակվելու է նաև 2007 թվականին՝ պայմանավորված բնակչության եկամուտների շարունակվող աճով և Հայաստանում զբոսաշրջության զարգացմամբ: Արդյունաբերության ճյուղում 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է ավելացված արժեքի իրական աճ, ինչը տարվա կտրվածքով կչեզոքացնի նախորդ եռամսյակներում արձանագրված անկումը: Ավելին, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվարկվող տնտեսական ակտիվության ինդեքսների, խոշոր ձեռնարկությունները կանխատեսում են 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակտիվության ավելացում, այնինչ միջին չափի ձեռնարկությունների սպասումներն ավելի համեստ են: 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվող աճը կշարունակվի նաև 2007 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում՝ պայմանավորված նոր ծրագրերի գործարկմամբ, որոնք արդյունք են նախորդ տարիներին կատարված ներդրումների:

Չնայած 2006 թվականի առաջին երեք եռամսյակներում գյուղատնտեսության ոլորտում արձանագրված իրական անկմանը, 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է արտադրության իրական ծավալների վերականգնում: 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում կանխատեսվում է արտադրության ծավալների կայուն աճ:

Համախառն պահանջարկի մասով 2006 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է սպառման բարձր աճ, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է բնակչության եկամուտների և մասնավոր տրանսֆերտների շարունակական ավելացմամբ: Ընդ որում, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սպառման աճի ավելի բարձր տեմպեր են արձանագրվելու: 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է սպառման աճի տեմպերի որոշակի դանդաղում և խնայողությունների աճի տեմպերի որոշակի արագացում:

Ինչ վերաբերում է համախառն ներդրումներին, ապա 2006 թվականի չորրորդ եռամսյակում կանխատեսվում է դրանց աճի տեմպերի դանդաղում, այնուհետև, 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում՝ կայունացում:

2006 թ. երեք եռամսյակներում գրանցված ապրանքների և ծառայությունների արտահանման ֆիզիկական ծավալների նշանակալի նվազումն արդեն իսկ ենթադրում է չորրորդ եռամսյակում արտահանման ցուցանիշի նվազման ճշգրտում՝ տարեկան աճի տեմպերի դանդաղման ուղղությամբ: Վերջինս համահունչ է արդյունաբերության ճյուղի՝ տարեսկզբից նկատվող անբարենպաստ զարգացումներին: Ինչ վերաբերում է 2007 թ. առաջին երեք եռամսյակների կանխատեսումներին, ապա արդյունաբերության ճյուղի վերականգնման պայմաններում ակնկալվում է արտահանման ծավալների աճ՝ միաժամանակ հաշվի առնելով նախորդ տարվա առաջին երեք եռամսյակներում գրանցված նվազման բարձր տեմպերը: Ներմուծման ծավալների շարունակական աճը 2006 թ. չորրորդ եռամսյակում նույնպես կպահպանվի, ինչը կպայմանավորվի բնակչության եկամուտների բարձր աճի տեմպերի պահպանմամբ: Ներմուծման աճը կշարունակվի նաև 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում:

Ընդ որում, վերոնշյալ զարգացումների արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացումը կպահպանվի: Արդյունքում, պակասուրդի ավելացումը գնաճի վրա կունենա զսպող ազդեցություն, քանի որ դա կարտացոլվի մի կողմից՝ եկամուտների արտահոսքի ավելացմամբ, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկով:

Աշխատուժի շուկա. Աշխատուժի շուկայում կշարունակվի արձանագրվել աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճ՝ պայմանավորված տնտեսության ճյուղերի զարգացմամբ, ինչի արդյունքում կավելանա իրական աշխատավարձը և աստիճանաբար կկրճատվի գործազրկության մակարդակը: Այնուամենայնիվ, չնայած տնտեսությունում ակնկալվող ներդրումների շարունակվող աճին, արտադրողականության ավելացման ցուցանիշը դեռևս կզիջի իրական աշխատավարձի աճի ցուցանիշը՝ որոշակի գնաճային ճնշումներ առաջացնելով սպառողական շուկայում:

Համախմբված բյուջե. 2006 թվականի չորրորդ եռամսյակում հավանաբար կդրսևորվի նախորդ տարվա պետական բյուջեի կատարման նույն սեզոնայնությունը, այն է՝ ինն ամիսներին չկատարված ծախսերը մեծամասամբ կտեղափոխվեն տարվա վերջին եռամսյակ՝ համախառն պահանջարկի վրա ունենալով ընդլայնող ազդեցություն: Ակնկալվում է ընդլայնող ազդեցություն նաև եկամուտների մասով: Տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն:

2007 թվականին նախատեսվում է ՀՆԱ-ում պակասուրդի 2.3% ցուցանիշ՝ 2006 թվականի համար ծրագրված 2.9%-ի և սպասվող 2.3%-ի փոխարեն: Ընդհանուր առմամբ, հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա զսպող ազդեցություն, իսկ ինչ վերաբերում է 2007 թվականի առաջին երեք եռամսյակներին, ապա նախորդ տարիներին բյուջեի կատարման գործընթացում դրսևորված սեզոնայնության պահպանման դեպքում կարելի է ակնկալել զսպողական ազդեցություն առաջին կիսամյակում և փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն երրորդ եռամսյակում:

Փող և վարկ. Տնտեսության դրամավարկային հատվածի 2006 թվականի առաջին ինն ամիսների փաստացի զարգացումներով, ինչպես նաև տնտեսության իրական, արտաքին և հարկաբյուջետային հատվածների կանխատեսումներով որոշակիորեն ճշգրտվել են մինչև 2007 թվականի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածի դրամավարկային հատվածի կանխատեսումները: Ինչպես բյուջետային մեծածավալ ծախսումները, այնպես էլ դրամայնացման երևույթի արագացումը կհանգեցնեն չորրորդ եռամսյակում փողի ագրեգատների՝ նախորդ կանխատեսումներից ավելի արագ աճի տեմպերի: Կարծանագրվեն կանխիկ դրամի և դրամային ավանդների աճի բարձր տեմպեր, միաժամանակ կդանդաղեն արտարժութային ավանդների և վարկավորման աճի տեմպերը:

Դրամայնացման գործընթացի արագացման պարագայում ԿԲ կողմից դրամի նկատմամբ պահանջարկի բավարարումը կիրականացվի արտարժույթի առքի միջոցով, որն էլ, զուգակցվելով բյուջեի մեծածավալ ծախսումների հետ, տնտեսությունում կառաջացնի իրացվելիության ավելցուկ: Վերջինիս կրճատումը հնարավոր կլինի ԿԲ ակտիվ ներքաշող գործառնությունների իրականացման միջոցով:

2007 թվականի առաջին երեք եռամսյակներում կձևավորվեն փողի ագրեգատների 12-ամսյա բարձր աճի տեմպեր՝ պայմանավորված 2006 թվականի վերջին դրանց մեծածավալ աճով, սակայն այդ աճն ավելի զուսպ կլինի 2006 թվականի համապատասխան ցուցանիշների համեմատությամբ:

Ինչ վերաբերում է վարկավորման աճին, ապա 2007 թվականի առաջին երեք եռամսյակներում կշարունակվի վարկավորված աճի դանդաղ տեմպը՝ պայմանավորված 2006 թվականի առաջին ինն ամիսներին արձանագրված մեծածավալ աճով (մասամբ ԿԲ-ում առևտրային բանկերի ավելցուկային միջոցների հաշվին):

Ամփոփում. ԿԲ խորհուրդը գնահատում է, որ 2006 թ. չորրորդ եռամսյակում կգրանցվի երկնիշ տնտեսական աճ, որը կզուգակցվի ուժեղացող գնաճային ճնշումներով:

Թեև վերջին ժամանակաշրջանում գրանցվել է նավթի միջազգային գների որոշակի նվազում, սակայն դեռևս պահպանվում են արտաքին հատվածից եկող գնաճային ռիսկերը՝ հիմնականում պայմանավորված էներգակիրների և այլ ապրանքների (բազային մետաղներ, շաքարավազ)՝ տարվա ընթացքում ձևավորված միջազգային գների բարձր մակարդակով, ինչպես նաև Ռուսաստանում և Ուկրաինայում հացահատիկի բերքի նվազմամբ:

Շինարարության և ծառայությունների ոլորտների շարունակվող աննախադեպ բարձր աճով պայմանավորված եկամուտների ավելացումը, զուգորդվելով գյուղատնտեսության ոլորտի անկմամբ պայմանավորված գյուղատնտեսական ապրանքների գների աճի հետ, շարունակում է ստեղծել գնաճային ճնշումներ: Հարկաբյուջետային տեսանկյունից՝ մինչև տարեվերջ սպասվող բյուջետային մեծածավալ ծախսերի՝ գնաճի վրա բարձրացման ուղղությամբ լագային ազդեցությունը կդրսևորվի արդեն 2007-ի առաջին կեսին: Թեև, ըստ ՀՀ կենտրոնական բանկի գնահատումների, միջին տարեկան գնաճը չի գերազանցի 3%-ը, այնուամենայնիվ տարեվերջին գնաճի ցուցանիշը կգերազանցի 3% նպատակային ցուցանիշը, և ԿԲ կանխատեսումների (տնտեսական հիմնարար գործոնների և շուկայի սպասումների ներքո) համաձայն՝ կկազմի 5.6%: Ընդ որում, պարենային ապրանքների գները գնաճին կնպաստեն շուրջ 3.8 տոկոսային կետով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.2 տոկոսային կետով, ծառայությունների սակագները՝ 1.7 տոկոսային կետով:

Խորհուրդը միակարծիք է, որ ՀՀ տնտեսությունում արագացել է ապադոլարայնացման երևույթը: Կենտրոնական բանկը պատրաստ է բավարարել դրամի նկատմամբ ավելացած պահանջարկը՝ ներքին արժութային շուկայում արտարժույթ գնելով:


Միաժամանակ, գնաճային ռիսկերը զսպելու նպատակով Կենտրոնական բանկն ակտիվորեն կկրճատի ինչպես իր գործառնությունների, այնպես էլ բյուջեի ծախսումների հետևանքով գոյացած ավելցուկային իրացվելիությունը:

Տնտեսության զարգացման հեռանկարների և գնաճային ճնշումների պահպանման պարագայում Կենտրոնական բանկը կշարունակի գնաճային ճնշումների աստիճանական չեզոքացումը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը 0.25 տոկոսային կետով բարձրացրել է ռեպո տոկոսադրույքը՝ սահմանելով 4.75%:

Տնտեսության զարգացման հեռանկարների պահպանման և նշված ռիսկերի դրսևորման պարագայում ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների կրկին ճշգրտումը:

Գների տարեկան տոկոսային փոփոխություն



2006 թվականի IV եռամսյակի կանխատեսված գնաճը՝ 5.6%

Միջակայք	3%-4%	4%-5%	5%-6%	6%-7%	7%-8%
Հավանականություն	<1	1.1	91	7.8	<1

2007 թվականի III եռամսյակի կանխատեսված գնաճը՝ 3.3%

Միջակայք	մինչև 1%	1%-2%	2%-3%	3%-4%	4%-5%	5%-6%	6%-ից բարձր
Հավանականություն	<1	6	27.6	41.6	21	3.7	<1

ՀՀ ֆինանսական համակարգը 2006 թվականի երրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐ

30.09.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր: 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելացել է 10-ով և կազմել 292:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 14.7%-ով (15.1 մլրդ դրամով) և 30.09.2006 թ. դրությամբ կազմել է 117.4 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է բանկային համակարգի կողմից կանոնադրական հիմնադրամի 14.2 մլրդ դրամով համալրմամբ և եռամսյակի ընթացքում 5.1 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ:

Եռամսյակի ընթացքում կանոնադրական հիմնադրամ են համալրել չորս բանկեր, ընդ որում՝ 12.8 մլրդ դրամը բաժին է ընկել մեկ բանկի, որը միաժամանակ 3.0 մլրդ դրամով նվազեցրել է գլխավոր պահուստը՝ այն ուղղելով կանոնադրական հիմնադրամ: Նշված ժամանակահատվածում երեք բանկեր նախորդ ժամանակաշրջանի շահույթից ընդհանուր 703 մլն դրամի չափով բաշխել են շահաբաժիններ:

Նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալներն աճել են համապատասխանաբար 8.4%-ով և 8.5%-ով, իսկ ռիսկով կշռված ակտիվները՝ 3.4%-ով: Արդյունքում՝ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը աճել է 1.6 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.5 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 35.3% և 31.4%:

Եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի վերոնշյալ արագատեմպ աճի պայմաններում ընդհանուր ակտիվներն ապահովել են 3.7% աճ, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը աճել է 2.3 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 24.3%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 0.6%-ով (2.1 մլրդ դրամով) և 30.09.2006թ. դրությամբ կազմել 364.9 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 8 բանկերում և նվազում՝ 13 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն ավելացել են 15.3%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները նվազել են 7.5%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 5.2 տոկոսային կետով և կազմել 40.7%:

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցներ) ավելացել են 1.0%-ով կամ 2.6 մլրդ դրամով:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորություններն ավելացել են 3.1%-ով (4.6 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները նվազել են 1.9%-ով (2.0 մլրդ դրամով):


Ավանդների աճն ամբողջովին տեղի է ունեցել ֆիզիկական անձանց ավանդների 3.3 մլրդ դրամ աճի արդյունքում (իրավաբանական անձանց ավանդները նվազել են 743 մլն դրամով):

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցներ) դրամային միջոցներն ավելացել են 21.7%-ով (18.7 մլրդ դրամով), իսկ արտարժութային միջոցները նվազել են 9.5%-ով (16.1 մլրդ դրամով):

30.09.2006թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 258.1 մլրդ դրամ, որի 40.5%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբին՝ 33.7%): Իրավաբանական անձանց խնայողություններում դրամային միջոցների ծավալները հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ արդեն գերազանցել են արտարժութային միջոցների ծավալները. իրավաբանական անձանց ընդհանուր ավանդներում 30.09.06թ. դրությամբ ՀՀ դրամով տեղաբաշխված միջոցների կշիռը կազմել է 55.8%, իսկ ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդներում՝ 25.2%: Նախորդ եռամսյակի վերջի դրությամբ վերոնշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 48.6% և 18.1% :

Ոչ ավանդային պարտավորություններում եռամսյակի ընթացքում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. նվազել են բանկերի լորո թղթակցային հաշիվները՝ 36.1%-ով (2.2 մլրդ դրամով), բանկերի (ներառյալ ԿԲ) նկատմամբ այլ պարտավորությունները՝ 8.5%-ով (3.4 մլրդ դրամով), ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 2.6%-ով (0.5 մլրդ դրամով), և աճել են այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 20.9%-ով (2.3 մլրդ դրամով) և այլ պարտավորությունները՝ 11.7%-ով (3.2 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Ընդհանուր պարտավորություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր ավանդների տեսակարար կշիռը գրեթե չի փոփոխվել. աճել է ընդամենը 0.3 տոկոսային կետով և 30.09.2006 թ. դրությամբ կազմել 70.7%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2006 թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվները ավելացել են 3.7%-ով (17.1 մլրդ դրամով) և 30.09.06թ. դրությամբ կազմել 482.3 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 13 բանկերում, իսկ նվազում՝ 8 բանկերում:


Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով ակտիվներն ավելացել են 12.0%-ով (27.5 մլրդ դրամով), իսկ արտարժույթով ակտիվները նվազել են 4.4%-ով (10.4 մլրդ դրամով), որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում ՀՀ դրամով ակտիվների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 4.0 տոկոսային կետով և կազմել 53.4%:

Բանկային համակարգի ակտիվների կազմում խոշոր աճ է արձանագրվել ՀՀ պետական գանձապետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերում կատարված ներդրումներում՝ 13.7% աճ (10.3 մլրդ դրամի աճ), իսկ նվազում՝ բանկերի նոստրո թղթակցային հաշիվներում՝ 24.9% նվազում (12.3 մլրդ դրամի նվազում):

Բանկերի նկատմամբ այլ պահանջներն ավելացել են 19%-ով (2.1 մլրդ դրամով), ՀՀ ԿԲ նկատմամբ պահանջները (ներառյալ ԿԲ-ում թղթակցային հաշիվները)՝ 4.4%-ով (2.0 մլրդ դրամով), կանխիկ դրամական միջոցները՝ 25.4%-ով (6.8 մլրդ դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները՝ 13.8%-ով (1.3 մլրդ դրամով) և այլ ակտիվները՝ 21.5%-ով (3.4 մլրդ դրամով):

Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել են 1.4%-ով (2.9 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի աճով: Ֆիզիկական անձանց վարկերը ավելացել են 2.9%-ով (2.6 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 0.1%-ով (86 մլն դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 4.3%-ով (241 մլն դրամով): 30.09.2006թ. դրությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալը կազմել է 93.4 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերինը՝ 114.4 մլրդ դրամ և բանկի հետ կապված անձանց վարկերինը՝ 5.9 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ակտիվների ծավալները



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Հաշվետու եռամսյակում բանկային համակարգի վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 2.8%-ով (6.4 մլրդ դրամով) և կազմել 238.5 մլրդ դրամ:


Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 8.5%-ով և կազմել 101.3 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները նվազել են 1.1%-ով (ի հաշիվ ռեզիդենտների արտարժութային վարկային ներդրումների նվազման) և կազմել 137.2 մլրդ դրամ: Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռն ավելացել է 2.2 տոկոսային կետով և կազմել 42.5%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 30.9%-ով (3.5 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.3%-ով (2.9 մլրդ դրամով):

Ռեզիդենտների ներդրումներում դրամով տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 8.5%-ով, իսկ արտարժույթով ներդրումները նվազել են 3.9%-ով: Հաշվետու եռամսյակում վարկերի աճը ապահովել են սպառողական, հիփոթեքային, առևտրի և շինարարության ոլորտի վարկերը, որոնք աճել են համապատասխանաբար 1.4%-ով (0.9 մլրդ դրամով), 16.9%-ով (2.9 մլրդ դրամով), 5.6%-ով (2.6 մլրդ դրամով) և 20.2%-ով (1.6 մլրդ դրամով): Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ու կապի, ինչպես նաև ֆինանսական հատվածի վարկերի ծավալները նվազել են:

Վերոնշյալ փոփոխությունները հանգեցրել են բանկային համակարգի վարկային ներդրումների կառուցվածքի փոփոխության:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի «ստանդարտ դասի» ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 1.1 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.4%-ը: 30.06.2006թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.3%-ը, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.4%-ը:

Բանկային համակարգի $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.4 տոկոսային կետով, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը նվազել է 1.4 տոկոսային կետով և 30.09.2006թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 42.3% և 104.5%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2006թ. առաջին ինն ամիսների ընթացքում բանկային համակարգն ապահովել է 13.3 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը գերազանցել է 2005 թվականի նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը 42.5%-ով (ընդ որում՝ երրորդ եռամսյակի ընթացքում համակարգի շահույթը կազմել է 5.1 մլրդ դրամ): Ինն ամիսների ընթացքում շահույթով են աշխատել 20 բանկեր, որոնց ստացած զուտ շահույթը կազմել է 13.3 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատած 1 բանկի վնասը կազմել է 23 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում բանկային համակարգը ստացել է 61.8 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 45.6 մլրդ դրամի ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 16.2 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 50.4%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 25.7% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 23.9%: Տոկոսային եկամուտների 80.6%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 48.4%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 27.4%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 44.7%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 20.0% և 35.3% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 43.9%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 53.6% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպության լիցենզիա են ստացել «Մալաթիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն և «Նորվիկ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերն ավելացել են 7-ով: 30.09.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում

վարկային կազմակերպության լիցենզիա են ունեցել 15 ընկերություններ, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է ինը:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը 2006 թ. առաջին եռամսյակի ընթացքում աճել է 25.3%-ով (2.8 մլրդ դրամով) և կազմել 14.0 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի 2.9%-ն է: Վարկային կազմակերպությունների դրամային ակտիվներն ավելացել են 45.0%-ով, արտարժութային ակտիվները՝ 6.9%-ով, որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է 7.6 տոկոսային կետով և կազմել 55.8%:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 27.3%-ով (1.9 մլրդ դրամով)՝ հիմնականում դրամային վարկերի 1.7 մլրդ դրամ աճի հաշվին: Ինչպես բանկային համակարգի, այնպես էլ վարկային կազմակերպությունների՝ տնտեսությանը տրամադրած վարկերի աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորվել է ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի աճով: Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 42.6%-ով և կազմել 6.5 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերը նվազել են 4.2%-ով և կազմել 2.1 մլրդ դրամ, իսկ վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց և աշխատակիցների վարկերն ավելացել են 7.7%-ով և կազմել 68 մլն դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում աճել է 5.9%-ով՝ կազմելով 1.8 մլրդ դրամ:

2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն ավելացել է 27.2%-ով (2.4 մլրդ դրամով) և կազմել 11.2 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել առևտրի և գյուղատնտեսության ճյուղերում՝ համապատասխանաբար 84.9%-ով (1.0 մլրդ դրամով) և 49.8%-ով (513 մլն դրամով): Վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտի վարկավորմանը՝ 20.4%: Արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 19.6%, սպառողական վարկերինը՝ 15.8%, գյուղատնտեսության վարկերինը՝ 13.8%, հիփոթեքային վարկերինը՝ 6.3%, ֆինանսական հատվածի վարկերինը՝ 7.5%, իսկ մնացյալ այլ ճյուղերինը՝ 16.6%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ավելացել է 1.4 տոկոսային կետով և կազմել 96.3%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 22.6%-ով (1.3 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 6.9 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորվել է չորս վարկային կազմակերպությունների կողմից (որից երկուսը եռամսյակի ընթացքում բացված վարկային կազմակերպություններն են) կանոնադրական հիմնադրամի ընդհանուր 1.3 մլրդ դրամի չափով համալրման փաստով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 28.1%-ով (1.5 մլրդ դրամով)՝ ի հաշիվ իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ համապատասխանաբար 1.3 մլրդ դրամ և 1.1 մլրդ դրամ աճի: Այլ պարտավորությունները (մասնավորապես՝ կանոնադրական կապիտալի համալրման՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ կրեդիտորական պարտքեր հոդվածը) նվազել են 785 մլն դրամով:

2005թ. առաջին ինն ամիսներին վարկային կազմակերպությունների զուտ շահույթը կազմել է 208 մլն դրամ, ընդ որում՝ 8 վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով (ընդհանուր շահույթը կազմել է 585 մլն դրամ) և 7 վարկային կազմակերպություններ՝ վնասով (ընդհանուր վնասը կազմել է 377 մլն դրամ):


2006 թվականի երրորդ եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները 2006 թվականի երրորդ եռամսյակի վերջին կազմել են 76.4 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 65.8 մլն դոլարի փոխարեն: 2006 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 44.6 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 34.0 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:*

2006 սեպտեմբերի վերջի դրությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ղազախստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 20.0% (նախորդ եռամսյակում՝ 16.2 %), ԱՄՆ-ն՝ 16.0 % (նախորդ եռամսյակում՝ 12.4 %), Գերմանիան՝ 11.8 % (նախորդ եռամսյակում՝ 6.2 %):

2006 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ներգրաված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի (2006թ. երկրորդ եռամսյակի վերջին՝ 7.9%) համեմատ աճել է և կազմել 8.1 %: Արտաքին վարկերի մոտ 36.4 %-ը լողացող (LIBOR, EURIBOR) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.0 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը աճել է և կազմել ներգրաված վարկերի 26.4 %-ը՝ նախորդ եռամսյակի վերջի 35.4 %-ի փոխարեն:

1999-2006թթ. ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը ունեցել է հետևյալ դինամիկան



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[33]

2006 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում դադարեցվել է «Ռենեսանս Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի թիվ 0045 և թիվ 0007 լիցենզիաների գործողությունը:

2006 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 17:

2006 թվականի երրորդ եռամսյակում գրանցվել է ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալի կտրուկ աճ (26.3 մլրդ դրամով) և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 5.7 մլրդ դրամ: Այսպիսի աճը ընթացիկ պարտավորությունների նվազման արդյունք է:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորությունները նվազել են 25.7 մլրդ դրամով և երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել 3.5 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված ապահովագրական ընկերություններից մեկում «Վնասների պահուստի» 26.1 մլրդ դրամ նվազմամբ: Ապահովագրական պահուստների մյուս հոդվածների առանձնակի փոփոխություններ չեն արձանագրվել. «Չվաստակած ապահովագրավճարների պահուստը» նվազել է 9%-ով և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել 1.1 մլրդ դրամ, «Կյանքի ապահովագրության պահուստն» աճել է 21%-ով և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 8.1 մլն դրամ, իսկ «Կանխարգելիչ միջոցառումների պահուստ» հաշիվը նվազել է 3.7 մլն դրամով և կազմել 4.9 մլն դրամ: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններում ապահովագրական պահուստների տեսակարար կշիռը 2006 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում նվազել է 57 տոկոսային կետով (հիմնականում «Վնասների պահուստ» հաշվի կտրուկ նվազման հաշվին)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմելով 37%: Ընդհանուր պարտավորություններում 30.09.06թ. դրությամբ 99.5%-ը բաժին է ընկել կարճաժամկետ պարտավորություններին:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներն ավելացել են 7%-ով (639 մլն դրամով) և հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմել 9.2 մլրդ դրամ:

Ակտիվների կազմում խոշոր աճ է արձանագրվել «Դեբիտորական պարտքեր ուղղակի ապահովագրության գծով» (329 մլն դրամ աճ) և «Կարճաժամկետ այլ ֆինանսական ակտիվներ» (223 մլն դրամ աճ) հոդվածներում:

[33] *31.06.2006թ. դրությամբ հաշվարկներում ներառված են 18 ապահովագրական ընկերության ցուցանիշներ, 30.09.2006թ. դրությամբ հաշվարկներում՝ 17 ապահովագրական ընկերության ցուցանիշներ:*

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներում մեծ տեսակարար կշիռ ունեն «Հիմնական միջոցներ» (14.4% տեսակարար կշիռ), «Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր» (25.2% տեսակարար կշիռ), «Ընդամենը կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ» (30.5% տեսակարար կշիռ) և «Դրամական միջոցներ» (17.5% տեսակարար կշիռ) հոդվածները:

Հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը կազմում է 29.7 հազար հատ (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ այն կազմել է 28.3 հազար հատ): Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերով ապահովագրական գումարների մեծությունը երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 3.96 տրլն դրամ, որից 3.86 տրլն դրամը կամ 97.4%-ը վերաապահովագրողների պատասխանատվության մեծությունն է:

30.09.06թ. վերջի դրությամբ ապահովագրավճարների մեծությունը կազմել է 5.1 մլրդ դրամ, որից 3.3 մլրդ դրամը՝ վերաապահովագրությանը փոխանցած ռիսկերի գծով: Ինն ամիսների ընթացքում ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 27.1 մլրդ դրամ, որից 26.9 մլրդ դրամը վերաապահովագրողների բաժինն է (ընդ որում՝ ապահովագրական հատուցումների նշված մեծության 96.1%-ը բաժին է ընկել մեկ ապահովագրական ընկերությանը):

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

30.09.2006թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացրել 18 ընկերություններ: Ընդ որում՝ դրանցից 5-ը, բացի բրոքերային գործունեության լիցենզիայից, ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացվել են պետական պարտատոմսերով, բաժնետոմսերով և այլ արժեթղթերով գործարքներ: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց համար եռամսյակի ընթացքում շուկայի հիմնական գործիք են հանդիսացել դարձյալ պետական պարտատոմսերը, որոնք ընդհանուր գործարքների ծավալում կազմել են շուրջ 98.9%: Բաժնետոմսերով գործարքները կազմել են շուրջ 0.5%, իսկ այլ արժեթղթերով (հիմնականում կորպորատիվ պարտատոմսերով) գործարքները՝ 0.6%:

Արժեթղթերի շուկայի բրոքերների/դիլերների գործունեության շրջանակներում իրականացված գործարքների շրջանառության ծավալները կազմել են 47.9 մլրդ դրամ, որը 11.3%-ով զիջել է երկրորդ եռամսյակի շրջանառության ծավալը: Պետական պարտատոմսերով (ներառյալ ռեպո գործարքները) գործարքների շրջանառության ծավալը հաշվետու եռամսյակում կազմել է 47.3 մլրդ դրամ, այլ արժեթղթերով (կորպորատիվ պարտատոմսեր) գործարքներինը՝ 272 մլն դրամ, բաժնետոմսերով գործարքներինը՝ 258 մլն դրամ, ընդ որում՝ բաժնետոմսերի շրջանառության ծավալի 97%-ը կատարվել է Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պետական պարտատոմսերի շրջանառության ծավալների 38.5%-ը բաժին է ընկել պետական միջին ժամկետայնությամբ պարտատոմսերին, 61.1%-ը՝ պետական երկարաժամկետ պարտատոմսերին, 0.4%-ը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրական փոփոխություններ

2006 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է օրենսդրական բարեփոխումների իրականացման համար օրենքների նախագծման աշխատանքները: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին ընդունվել է ««Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Այդ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված 5-րդ մասը, ըստ որի՝ կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող ապահովագրական կազմակերպությունները չէին կարող Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, ինչպես նաև պետական և տեղական կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն:

Փաստորեն այս դրույթը սահմանափակում էր օտարերկրյա կապիտալի մուտքը ապահովագրության նշված բնագավառները, ինչը չէր բխում Հայաստանի Հանրապետության որդեգրած՝ ազատ շուկայական տնտեսություն ունենալու ռազմավարությունից:

Միևնույն ժամանակ, այս դրույթը համահունչ չէր տնտեսական համագործակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու համաձայնագրի պայմաններին:

Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխությունը պայմանավորված է օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

ՀՀ կենտրոնական բանկը 2006 թվականի երրորդ եռամսյակում մշակել է մի շարք օրենքների նախագծեր:

Մասնավորապես՝

1. ՀՀ կառավարության 2005 դեկտեմբերի 9-ի թիվ 2200-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կառավարության 2006թ. գործունեության միջոցառումների ծրագրի» 142-րդ կետի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկը մշակել է և ՀՀ կառավարություն է ներկայացրել ***««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը***: Նախագիծը սահմանում է «գնաճշում», արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն իրականացնող անձ, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձ, արտարժույթի սակարկություններ իրականացնող անձ հասկացությունները, ինչպես նաև նպատակ ունի վերացնելու օրենքի գործողության ընթացքում ի հայտ եկած թերությունները:

Նախագծի համաձայն՝ գնաճշում է համարվում ցանկացած ապրանքի (գույքի), ծառայության, գույքի օգտագործման, աշխատանքի կատարման կամ աշխատավարձի և (կամ) դրան հավասարեցված վճարումների գնի, արժեքի կամ վարձատրության չափի հայտարարումը, ամրագրումը, սահմանումը կամ որևէ ձևով այլ անձանց հայտնելը:

Նախագծում սահմանվել է արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն իրականացնող անձանց, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց, արտարժույթի սակարկություններ իրականացնող անձանց գործունեությունը կարգավորող նոր հոդված: Համաձայն այդ հոդվածի՝ արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն և արտարժույթի առուվաճառք իրականացնող անձինք պետք է լինել իրավաբանական անձինք:

««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ միաժամանակ ներկայացվել է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այդ նախագծով փոփոխությունների կատարումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից վերահսկողություն իրականացնելիս (հսկիչ գնումների ձևով) պատասխանատվություն չնախատեսելու հետ կապված հարաբերությունների կարգավորմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար ավելի խիստ պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով առաջարկվում է սահմանել առանց համապատասխան լիցենզիայի՝ փոխանակման կետի գործունեությամբ զբաղվելու դեպք հասկացությունը, ինչը պայմանավորված է նման իրավախախտումների դեմ արդյունավետ պայքար մղելու անհրաժեշտությամբ և նպատակ ունի առանձնացնելու առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի փոխանակման կետի ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու զանցակազմը և հանցակազմը՝ այդ իրավախախտումների համար նախատեսելով ավելի խիստ պատասխանատվության միջոցներ:

2. ***ՀՀ կենտրոնական բանկը մշակել է նաև «Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը***: Այն մշակվել է Եվրոմիության օրենսդրության հիման վրա և էապես տարբերվում է գործող «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքից: Առաջարկվող նախագծի հիմնական նորամուծությունները հետևյալն են.

1. ***Ապահովագրության դասակարգում (ապահովագրության տեսակներ, դասեր և ենթադասեր):*** Տրվել է ապահովագրության դասակարգումը ըստ տեսակների և դասերի (ենթադասերի)՝ համահունչ Եվրոմիության անդամ երկրներում կիրառվող մոտեցումներին: Այն թույլ է տալիս առավել հստակեցնել լիցենզավորման և վերահսկողության գործընթացները՝ առանձնացված մոտեցում ցուցաբերելով առանձին դասերով ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների համար:
2. ***Կյանքի և ոչ կյանքի ապահովագրական գործունեությունների տարանջատում:*** Առաջարկվել է մոտեցում, ըստ որի՝ ապահովագրական ընկերություններին արգելվում է միաժամանակ իրականացնել կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն:
3. ***Ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարում:*** Ներառվել են ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները, որոնք համահունչ են

լավագույն միջազգային փորձին, մասնավորապես համապատասխանում են եվրոպական օրենսդրությանը և ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի հիմնական սկզբունքներին:

4. ***Աութսորսինգի խնդիր:*** Սահմանվել է աութսորսինգի գաղափարը, ինչը թույլ է տալիս ապահովագրական ընկերություններին իրենց որոշ գործառույթներ (մասնավորապես՝ հաշվապահական հաշվառում, ակտուարի գործառույթներ, ակտիվների կառավարում և այլն) փոխանցել մեկ այլ ընկերության, և սահմանվել են այդ ընկերության նկատմամբ պահանջներ և վերահսկողության մեխանիզմներ:

5. ***Ապահովագրական միջնորդներ:*** Առաջարկվել են ապահովագրական միջնորդության կարգավորման հստակ մեխանիզմներ, որոնք լիովին համահունչ են միջազգային լավագույն փորձին և համապատասխանում են եվրոպական համապատասխան դիրեկտիվների պահանջներին: Մասնավորապես՝ ըստ նախագծի, ապահովագրական միջնորդներ կարող են լինել թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձինք: Հստակեցվել են նաև ապահովագրական միջնորդության սահմանները, որոնց որոշ մասի (ռիսկային) իրականացման համար ապահովագրական միջնորդների համար նախատեսվում են որոշակի նորմատիվային պահանջներ:

6. ***Ապահովագրական գաղտնիք:*** Ներմուծվել է ապահովագրական գաղտնիքի գաղափարը, սահմանվել են երրորդ անձինք, որոնց վրա չեն տարածվում ապահովագրական գաղտնիքի սահմանափակումները:

7. ***Ապահովագրական ընկերությունների լուծարում:*** Տրվել են ապահովագրական ընկերությունների լուծարումը կանոնակարգող դրույթներ:

8. ***Պատժամիջոցներ:*** Վերանայվել են պատժամիջոցները: Սահմանվել են ոչ թե կոնկրետ պատժամիջոցներ, այլ պատժամիջոցի առավելագույն սահմաններ. կոնկրետ պատժամիջոցի կիրառումը և չափը սահմանում է վերահսկողը, ըստ էականության:

9. ***Վերակազմակերպում:*** Կանոնակարգվել է նաև ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացը:

3. ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նաև ***«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը*** և դրա ընդունմամբ պայմանավորված՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի *նախագծի անհրաժեշտությունը կապված է հետևյալ հանգամանքների հետ.*

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, և կենտրոնական բանկի կողմից իրականացվող միջոցառումներն ուղղվում են այդ խնդրի իրագործմանը:

Օրենքի 4-րդ հոդվածի հստակեցումից բխող՝ գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը ճկունության և կանխատեսելիության առավել բարձր մակարդակ է պահանջում, որի ապահովման համար առանցքային ուղենիշը գնաճի կանխատեսումներն են՝ երկարաժամկետ հատվածի համար: Վերջինիս ապահովման անհրաժեշտությունից է բխում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունը՝ կապված գնաճի նպատակադրված մակարդակի ապահովման, ինչպես նաև գնաճի կանխատեսումների գործընթացի իրավական հիմքերը ՀՀ միջնաժամկետ ծրագրերի կազմման և իրականացման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերում ներառելու հետ:

Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի տեսանկյունից, գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո էլ ավելի է կարևորվում ՀՀ կենտրոնական բանկի հաշվետվելիության և թափանցիկության բարձր մակարդակի ապահովումը:

4. ՀՀ կենտրոնական բանկը մշակել է ***«Կենսաթոշակային բարեփոխումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը***: Նախագիծը կարգավորում է նոր ներդրվող կենսաթոշակային համակարգի հետ կապված հարաբերությունները: Սահմանվում են կենսաթոշակային համակարգի հետևյալ բաղադրիչները՝

- ծերության նվազագույն սոցիալական նպաստ.
- բազային կենսաթոշակ.
- պարտադիր կուտակային կենսաթոշակ.
- կամավոր կուտակային կենսաթոշակ:

Օրենքով սահմանվում են նաև հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նշանակվող կենսաթոշակների հետ կապված հարաբերություններ:

Նախագծով սահմանվում են նոր կենսաթոշակային համակարգի կառավարումը, դրա գործունեության վերահսկողության համակարգը, ինչպես նաև նոր կենսաթոշակային համակարգի կիրարկման համար անհրաժեշտ որոշակի ենթակառուցվածքների ստեղծումը:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2006 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- Բանկերում արդյունավետ և անկախ ներքին հսկողության ապահովման և կատարելագործման, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին համապատասխանության նպատակով փոփոխություններ են իրականացվել «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կարգում: Փոփոխություններով առավել նշանակալի է դարձել բանկի խորհրդի դերը ներքին հսկողության իրականացման գործընթացում, ընդլայնվել և հստակեցվել են վերջինիս իրավասությունները, ինչպես նաև բանկի ներքին աուդիտի իրավասությունները, սահմանվել են բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին ընթացակարգերի նկատմամբ նվազագույն պահանջներ:
- Փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 2002թ. նոյեմբերի 5-ի թիվ 347 որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում: Մասնավորապես՝ թույլատրվել է ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպություններին իրենց անունից թողարկել և իրավաբանական անձանց միջև տեղաբաշխել պարտատոմսեր:

Ապահովագրական գործունեությանն առնչվող կարգավորման դաշտում մշակվել է.

- «Ապահովագրական սակագների հիմնավորման կարգի» նախագիծը, որի նպատակն է ապահովագրողի ֆինանսական կայունության ապահովումը, ապահովագրական շուկայում չհիմնավորված ցածր սակագների կիրառման բացառումը:
- «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, լրացման և ներկայացման կարգն ու ժամկետները» կանոնակարգի նախագիծը, որի նպատակն է ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ ԿԲ որոշակի պարբերականությամբ ներկայացվող տեղեկատվության հիման վրա ապահովագրական գործունեությանը առնչվող ռիսկերի բացահայտումը, ապահովագրական շուկայի վերլուծության իրականացումը և նրանց գործունեության վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը:
- Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման գնահատման համար որակավորման հարցաշարեր, որը հաստատվել է ՀՀ ԿԲ նախագահի կարգադրությամբ:
- «Ապահովագրական ընկերության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, դրանց ձևավորման և հաշվարկման կարգը», ինչպես նաև «Ապահովագրական պահուստների տեսակների և ձևավորման կարգը»՝ ելնելով ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերություններ ունենալու և նորմատիվային դաշտը միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու անհրաժեշտությունից:

2006 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են.

- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և դրա կիրառման հրահանգը», որի նպատակն է ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման համապատասխանեցումը հաշվապահական հաշվառման ստանդարտներին և միջազգային լավագույն փորձին:
- «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 10.05.2006թ, N190-Ն որոշմամբ: Վերոնշյալ փոփոխությամբ ՀՀ տարածքում գործող

ապահովագրական ընկերություններին հնարավորություն է տրվում նվազեցնելու ձևավորված ապահովագրական պահուստները՝ համաձայն վերոհիշյալ կարգի հուսալի ճանաչված վերաապահովագրողների մասնակցության չափով:

- «Ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման կարգը», որը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 454 Ն որոշմամբ: Վերոնշյալ կարգի հիմնական նպատակն է ապահովագրության պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի՝ վերաապահովագրողին փոխանցման գործընթացի կանոնակարգումը:

ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցման փուլում են գտնվում.

- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և դրա կիրառման հրահանգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 124 Ն որոշմամբ, որի նպատակն է ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման համապատասխանեցումը հաշվապահական հաշվառման ստանդարտներին և միջազգային լավագույն փորձին:
- «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման, ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջները և որակավորման ստուգման կարգը և ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը:

Արժեթղթերի շուկայի կարգավորում.

- 2006 թվականի երրորդ եռամսյակում սկսվել են կորպորատիվ արժեթղթերի երկմակարդակ պահառության համակարգի ձևավորման աշխատանքներ, որի նպատակով իրականացվել են Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի «(85) Արժեթղթերի պահառության գործունեություն» վերնագրի ներքո միավորված կանոնների նախագծման աշխատանքներ:
- Միևնույն ժամանակ, իրականացվել են 2006 թվականի երկրորդ եռամսյակում մշակված Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի նոր խմբագրությամբ շարադրված «(66.3) Մասնագիտացված անձանց հաշվետվություններ» վերնագրի ներքո միավորված կանոնների և «(112.1բ) Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում» վերնագրի ներքո միավորված կանոններում փոփոխությունների և լրացումների լրամշակման աշխատանքներ: Արդյունքում, «(112.1բ) Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում» վերնագրի ներքո միավորված կանոններում փոփոխությունները և լրացումները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ գրանցման: Այս կարգում կատարված փոփոխությունների և լրացումների նպատակն է Կենտրոնական դեպոզիտարիային իրավունք վերապահել սահմանելու էլեկտրոնային կապի միջոցներով տեղեկությունների փոխանցման կարգեր, որոնք հիմնականում ուղղված են լինելու ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև բարձր վարկանիշ ստացած ձեռնարկությունների պարտատոմսերով ռեպո գործարքներ կնքելիս արժեթղթերի փոխանցումների համար անհրաժեշտ տեղեկատվության՝ ՍԻ-ԲԻ-Է3-ՆԵԹ ցանցի միջոցով ներկայացմանը: Բացի այդ, անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կանոններում կատարվել են մի շարք տեխնիկական շտկումներ՝ կապված ռեեստրի վարման պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների հետ:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի 2006թ. դրամավարկային ծրագրի՝ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են վճարային համակարգերի կարգավորման և հսկման, անկանխիկ վճարումների զարգացման աշխատանքներ: Ի կատարումն դրամավարկային ծրագրով ամրագրված խնդիրների, մշակվել է «Անկանխիկ վճարումների զարգացման միջոցառումների ծրագիրը»: Հաշվի է առնվել ոչ միայն վճարահաշվարկային, այլև հարակից բնագավառներում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, որոնց համալիր և ամբողջական կիրառումը թույլ կտա ապահովել անկանխիկ վճարումների զարգացումը: Նախատեսվել է նշված ծրագրի շրջանակներում, այլ գերատեսչական մարմինների աջակցությամբ, իրականացնել անկանխիկ վճարային գործիքների խրախուսման, ինչպես նաև այդ գործիքների սպասարկմանն ուղղված համապատասխան ենթակառուցվածքի ներդրման հետ կապված խնդիրների լուծման աշխատանքներ:

Վճարահաշվարկային բնագավառում ՀՀ ԿԲ մյուս ուղղվածությունը արժեթղթերով գործառնությունների իրականացման արդյունավետ մեխանիզմների մշակումն է: Մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով բարձր վարկանիշ ունեցող առևտրային արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների իրականացումը ապահովելու նպատակով մշակվել են մի շարք փաստաթղթեր՝ ուղղված իրավական դաշտի կարգավորմանը:

Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող բորսայական գործառնությունների վերջնահաշվարկի ընթացքում գործառնական ռիսկերը նվազեցնելու և այդ ընթացակարգը ավտոմատացնելու համար վերամշակվել են համապատասխան վճարային հաղորդագրություններ /ֆորմատներ/, որոնք ապահովում են կատարված գործառնությունների վերջնահաշվարկի իրականացման նպատակով ձևավորված զուտ դիրքերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը ՀՀ կենտրոնական բանկ:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի օրենսդրական ակտերի՝ տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերին համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացը: Այդ թվում՝ տրամադրվել է AMEX միջազգային քարտային համակարգին անդամակցելու թույլտվություն, որի արդյունքում VISA և MasterCard միջազգային քարտային համակարգերի քարտերի հետ համատեղ ՀՀ տարածքում կարող են տրամադրվել և սպասարկվել AMEX միջազգային քարտեր:

Դիտարկելով ցուցանիշները, որոնք բնութագրում են վճարահաշվարկային բնագավառը 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում, կարելի է նշել, որ թե՛ եռամսյակի ընթացքում, թե՛ նախորդ ժամանակահատվածի համեմատ վճարային գործիքներով և վճարային համակարգերով արձանագրվել է բնականոն աճ:


Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 1691 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 615077), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 1225 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը 280523: 2006թ. Անկանխիկ վճարումների ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 1.1 անգամ (192 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.03 անգամ (15260-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.19 անգամ (203 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.04 անգամ, որը կազմել է 11840:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 19.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 4383: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3165 մլն ՀՀ դրամով (քանակը՝ 185-ով) այդ թվում՝ 1145 մլն ՀՀ դրամը պայմանավորվել է բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների աճով:

2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև

վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 35.12%-ը, քանակի 45.42%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.18%-ով (3.6 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.54%-ով (7777 -ով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 38163 մլն ՀՀ դրամի 789433 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 2814 մլն ՀՀ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 60 մլն ՀՀ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 36 մլն ՀՀ դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 24 մլն ՀՀ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 190232, որը երկրորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 1.08 անգամ (14128 քարտով):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ


2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 217, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 145 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 78.74%-ը և քանակի 96.16%-ը: Նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 16.27% (130 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 4.3%-ով (11153-ով): Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են մոտ 67.46%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 90.67%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 174-ով՝ կազմելով 4215, իսկ ծավալը՝ 2110 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 15079 մլն ՀՀ դրամ: Այդ թվում՝ բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումները կազմել են 5366 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 0.14 մլն ՀՀ դրամով և կազմել է 2.3 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 18.7 մլն ՀՀ դրամով և կազմել 189 մլն. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.076%-ը և ծավալի 0.92%-ը (206 փոխանցում՝ 8980 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.06%-ը և ծավալի 0.78%-ը (171 փոխանցում՝ 7645 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



ՀԱՄԱԽԱՌՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը:Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 13.9%-ը (նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 2.5 անգամ) և քանակի 0.49%-ը (նախորդ եռամսյակի համեմատ պահպանվել է գրեթե նույն մակարդակը):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 148 փոխանցում՝ 2264 մլն ՀՀ դրամ ծավալով (2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 906 մլն ՀՀ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 5.5 մլն ՀՀ դրամով և կազմել է 15.3 մլն ՀՀ դրամ: 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 4002 մլն ՀՀ դրամ ծավալով 25 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	էլեկտրոնային		Թղթային				ԿԲ միջոցով	
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2005								
I եռ..	429654	158131	150806	5188	20993	471	601453	163790
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.44	96.54	25.07	3.17	3.49	0.29	100	100
II եռ.	515 359	207 423	123 228	6 062	74 161	901	712 748	214 386
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.31	96.75	17.29	2.83	10.40	0.42	100	100
III եռ.	524899	219123	153970	8315	60841	909	739710	228347
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.96	95.96	20.81	3.64	8.23	0.40	100	100

IV եռ.	716214	242062	154294	8951	72601	942	943109	251955
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	96.07	16.36	3.55	7.70	0.37	100	100
Ընդամենը	2186126	826739	582298	28516	228596	3223	2997020	858478
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.94	96.30	19.43	3.32	7.63	0.38	100	100
2006								
I եռ.	855565	215711	70193	8984	53645	757	979403	225452
տեսակարար կշիռը վճարումներում (%)	87.35	95.68	7.17	3.98	5.48	0.34	100	100
II եռ.	829977	258599	86905	8913	106179	1171	1023061	268683
տեսակարար կշիռը վճարումներում (%)	81.13	96.25	8.49	3.31	10.38	0.44	100	100
III եռ.	965029	269752	144908	9466	115703	1305	1225640	280523
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.74	96.16	11.82	3.37	9.44	0.47	100	100

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 7 գործակալ և 14 դիլեր բանկեր, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Եռամսյակի ընթացքում համակարգի կողմից պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 520 հանձնարարական՝ 16014 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 1996 մլն ՀՀ դրամով: Այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 7889 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 8124 մլն ՀՀ դրամի փոխանցում: Ընդ որում գանձապետական պահառու համակարգի կողմից պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 493 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 290 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի տեղաբաշխման և 203 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 253 հանձնարարական՝ 42420 մլն ՀՀ դրամ ծավալով (2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 2 անգամ): Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 26567 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց՝ 15853 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Ակտիվացել են պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված գործառնությունները, որոնք կազմել են 108476 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 70660 մլն ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 32680 մլն ՀՀ դրամ ծավալով, գրավադրում՝ 5136 մլն ՀՀ դրամ ծավալով): DVP- սկզբունքով կատարված առք ու վաճառքի 532 գործառնությունների դիմաց վճարվել է 57270 մլն ՀՀ դրամ:

ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՇՈՒԿԱ

2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 18 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 14 նոր ավտոմատ գանձման մեքենաներ, և 2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 156: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվում է 117 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 71 POS տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 1236 POS տերմինալ, այդ թվում՝ 266-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 81:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնես բանկ	+				
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+				
Հայներարտբանկ	+	+			
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ			+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
«ԲՏԱ» ինվեստ բանկ	+				
Զարգացման բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+		+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
«ԻԹԲ» Միջազգային առևտրային բանկ	+				
էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	+		+		
Արցախբանկ	+				
Կասկադ Բանկ	+				
Առէկսիմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+			

Եռամսյակի վերջի դրությամբ գործող «Արքա» քարտերի քանակը 2006թ. երկրորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 1.09 անգամ (6758 քարտով) և կազմել 82447: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 1.07 անգամ (7370 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.07 անգամ (5485 քարտով) և կազմել 83676, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.17 անգամ (1446 քարտով) և կազմել 9916:

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.23 անգամ (7219 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.1 անգամ (69555):

Շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերով եռամսյակի ընթացքում իրականացվել է 358275 գործառնություն՝ 12318 մլն ՀՀ դրամ ծավալով: «Արքա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.25 անգամ (2490 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.08 անգամ (26546-ով):


VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 16593 մլն ՀՀ դրամ (266586 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 4155 մլն ՀՀ դրամ ծավալով 50164 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.2 անգամ (2749 մլն ՀՀ դրամ ծավալով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 1.56 անգամ (1494 մլն ՀՀ դրամ ծավալով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 114408 գործառնություն՝ 5097 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 486 մլն ՀՀ դրամով:

Եռամսյակի ընթացքում շրջանառության մեջ գտնվող մեկ «Արքա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 1.4 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 5 հազար ՀՀ դրամով և կազմել է 34 հազար ՀՀ դրամ:

2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ «Արքա» քարտեր սպասարկող մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկման ենթակա «Արքա» քարտերի քանակը կազմել է միջինը 705 քարտ:

«Արքա» քարտերի զարգացման դինամիկան



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2006 թ. երրորդ եռամսյակում)

Սարքեր	Ընդամենը գործարքների ծավալը (մլն դրամ)	Այդ թվում «Արքա» քարտերով ծավալը (մլն դրամ)	Ընդամենը գործարքների քանակ	Այդ թվում «Արքա» քարտերով քանակ
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	26898.0	9047.4	647594	287521
այդ թվում՝ անկանխիկ	371.0	67.6	15927	8532
POS – տերմինալների միջոցով	10992.0	3270.4	138287	70754
այդ թվում՝ անկանխիկ	2430.0	469.8	43666	14204
Իմպրինտերների միջոցով	273.0	0	3552	0
այդ թվում՝ անկանխիկ	13.0	0	66	0
Ընդամենը	38163.0	12317.8	789433	358275
այդ թվում՝ անկանխիկ	2814.0	537.4	59659	22736

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, CONTACT և այլ համակարգերի: Ընդհանուր առմամբ, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը անդամակցում են 12 միջազգային համակարգերի:

Համակարգեր	WESTERN UNION	MONEY GRAM	ANELIK	UNISTREAM	BISTRAYA POCHTA	INTEREXPRESS	CONTACT	LIDER	MIGOM	PRIVAT MONEY TRANSFER	STB Expres	Travelex	STEFI	Armenian Express
Մասնակից բանկերի քանակը	15	1	5	3	5	2	3	3	3	2	1	-	-	1
Մասնակից կազմակերպությունների քանակը							1					1	1	1
Մասնաբաժինը ստացումների ծավալում %	11.75	1.66	13.51	46.90	11.99	1.94	7.02	0.46	2.51	0.35	-	0.14	0.23	1.15

2006թ. երրորդ եռամսյակում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 95241 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 356281), որը 8.2 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.12 անգամ (21667 մլն ՀՀ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 267 հազ. ՀՀ դրամ. 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 26 հազ. ՀՀ դրամով:

2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1787 մլն ՀՀ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 372 մլն ՀՀ դրամի փոխանցում: Վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.19 անգամ (286 մլն ՀՀ դրամով). մեկ փոխանցման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 126 հազ. ՀՀ դրամ:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները 2006թ. երրորդ եռամսյակի ընթացքում կազմել են՝ ծավալը՝ 417 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 74348 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 5.6 մլն ՀՀ դրամ. նախորդ ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.3 մլն ՀՀ դրամով: SWIFT -ի միջոցով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են մոտ 49 մլրդ ՀՀ դրամ. մեկ վճարման միջինը կազմել է 1.6 մլն ՀՀ դրամ:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2006 թ. հունվար - սեպտեմբերին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար - հուլիս*	*Հունվար - օգոստոս*	*Հունվար- սեպտեմբեր*	*2006թ.հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը՝ 2005թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	1094797.8	1371093.4	1720063.0	112.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%, աճողական)*				105.1
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1]	979.2	1225.3	1536.2	109.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	355379.1	411203.9	468010.6	98.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3594.2	4102.8	4530.6	94.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	198127.5	294645.6	370568.0	100.0
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	385175.5	453610.5	536273.5	110.9
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	240302.1	303017.9	393803.0	139.6
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	846824.9	990444.3	1143663.7	111.5[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	836609.3	971869.7	1116007.1	111.9[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	60863	61077	61561	120.2[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1208.0	1208.9	1209.5	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	90.0	89.9	89.8	
Գործազրկության մակարդակը (%)	7.4	7.4	7.4	

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար - հուլիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – օգոստոս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – սեպտեմբեր* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2006թ. հունվար – սեպտեմբերը 2005թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB)*	522.5	595.6	699.4	99.1
Ներմուծում *(CIF)*	1132.1	1315.6	1508.7	119.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	609.6	720.0	809.3	144.9

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	102.5	97.8	100.3	99.1
Փետրվար	100.2	99.2	100.1	101.5
Մարտ	100.1	97.2	102.2	100.2
Ապրիլ	100.3	103.3	101.6	103.3
Մայիս	102.4	107.1	100.1	98.0
Հունիս	98.8	97.7	100.0	83.2
Հուլիս	99.3	100.0	100.1	83.9
Օգոստոս	99.1	99.7	100.5	83.2
Սեպտեմբեր	99.7	99.2	100.3	92.8
2006 թ. հունվար-սեպտեմբերը 2005 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	102.0	100.4	107.1	114.4

IV. Գնաճ

Ժամանակաշրջան	2004	2005	2006	2006
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.5	5.4	2.5	2.5
Փետրվար	-0.6	-0.7	0.2	2.7
Մարտ	0.3	-0.9	0.1	2.8
Ապրիլ	1.2	-0.9	0.3	3.1
Մայիս	1.1	0.1	2.4	5.6
Հունիս	-0.1	-1.4	-1.2	4.3
Հուլիս	-2.5	-4.5	-0.7	3.6
Օգոստոս	-2.4	-1.4	-0.9	2.7
Սեպտեմբեր	-0.7	0.9	-0.2	2.3
Հոկտեմբեր	0.1	0.1		
Նոյեմբեր	0.8	1.1		
Դեկտեմբեր	2.3	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	-0.2		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	7.0	0.6		

V. Բնականոն գնաճի[1] փոփոխությունները

Ցուցանիշ	2004	2005	2006
	Նախորդ ամսվա նկատմամբ, %		
Հունվար	0.65	0.71	0.39
Փետրվար	0.05	-0.37	0.00
Մարտ	0.03	-0.26	0.06
Ապրիլ	0.05	-0.26	0.12
Մայիս	0.04	-0.08	0.07
Հունիս	-0.13	-0.10	-0.01
Հուլիս	-0.50	-0.42	-0.06
Օգոստոս	-0.31	-0.28	-0.04
Սեպտեմբեր	-0.30	0.29	0.02
Հոկտեմբեր	-0.16	0.03	
Նոյեմբեր	-0.05	0.17	
Դեկտեմբեր	0.30	0.29	
	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %		
Հունվար	4.45	0.72	0.79
Փետրվար	5.60	1.07	1.18
Մարտ	6.37	0.71	1.38
Ապրիլ	6.39	0.13	1.61
Մայիս	6.23	-0.74	2.49
Հունիս	5.41	-0.57	2.26
Հուլիս	6.71	-0.78	3.20
Օգոստոս	6.90	-0.52	3.29
Սեպտեմբեր	6.02	0.26	2.67
Հոկտեմբեր	5.67	0.32	
Նոյեմբեր	4.39	0.47	
Դեկտեմբեր	0.55	0.52	

VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ*
	Նախորդ ամսվա նկատմամբ, %
Բնականոն գնաճ, *այդ թվում՝*	**2.67**
Տավարի միս	0.44
Համակարգչային վճարովի ուսուցում[1]	0.28
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների՝ կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.12
Ծառայություններ ախտորոշման կենտրոնների	0.11
Վճարովի ուսումնական հաստատություն (քոլեջ, վարժարան)	0.10
Ծառայություններ ատամնաբուժական, ատամների պրոթեզավորման	0.10
Ծառայություններ բժշկական լաբորատորիաների (ռենտգեն նկար)	0.10
Ավտոմեքենա «Ժիգուլի-2107»	0.08
Բնական գազ	0.08
Լվացքի փոշի ավտոմատ մեքենաների համար	0.07

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ ներքին պարտքային ստեղծումը
	վերանստանվող տեսակի պարտքային գործիքներ	պետության պարտքային գործիքներ և վերանստանվող այլ պարտավորություններ	ընդամենը	հիմնադրամի դրությամբ վճարման ենթակա հիմնադրամ	հիմնադրամի դրությամբ վճարման ենթակա այլ	ՕԻԿ-երի միջոցներ հիմնադրամ	ՕԻԿ-երի միջոցներ հիմնադրամ	ընդամենը	
2005									
Դեկտեմբեր [2]	0	5677	5677	21966	865	27	112	22970	**-17294**
2006									
Հունվար	0	5650	5650	35261	879	22	113	36275	**-30625**
Փետրվար	0	5584	5584	32763	867	11	113	33754	**-28170**
Մարտ [2]	0	5398	5398	27157	575	11	113	27857	**-22459**
Ապրիլ	0	5147	5147	37592	3184	11	112	40899	**-35752**
Մայիս	0	5000	5000	43876	572	11	107	44566	**-39567**
Հունիս [2]	0	4875	4875	39235	550	11	106	39901	**-35026**
Հուլիս	0	4802	4802	33688	531	11	106	34336	**-29534**
Օգոստոս	0	4784	4784	28606	512	0	101	29219	**-24435**
Սեպտեմբեր [2]	0	4538	4538	29321	489	0	117	29927	**-25389**

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:
[2] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05[5]	Հ - 06	Փ - 06	Մ - 06[5]	Ա - 06	Մ - 06	Հ - 06[5]	Հ - 06	Օ - 06	Ս - 06[5]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***214731***	***214812***	***212725***	***213485***	***216311***	***238232***	***251646***	***234033***	***246417***	***274633***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-14153***	***-27422***	***-25664***	***-24394***	***-32199***	***-53364***	***-52531***	***-28931***	***-29405***	***-43541***
Կառավարություն	-17294	-30625	-28170	-22459	-35752	-39567	-35026	-29534	-24435	-25389
Բանկեր	4227	7584	8533	10620	11939	13949	12471	9887	12251	10624
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	0	0	0	0	1631	3720	1674	1618	3329	1130
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-7701	-3601	-1250	-1300	0	0	0	-2000	-500	0
Հակադարձ ռեպո (-)	0	-591	-2062	0	-513	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	-947	-1617	-1121	-1505	-2425	-2423
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-21483	-23534	-24573	-29078	-27327	-26332	-23908	-23358	-29246	-34956
Զուտ այլ ակտիվներ	20396	19153	18547	16523	18941	-1415	-6067	14075	12024	6181
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***195487***	***187768***	***189881***	***188876***	***183434***	***184974***	***196363***	***207106***	***216590***	***228454***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***200578***	***187391***	***187061***	***189091***	***184112***	***184869***	***199115***	***205102***	***217012***	***231092***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	155275	142257	143056	141266	143454	145795	154389	165490	173849	182931
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	22258	22418	22694	22425	19230	17173	21774	18537	21724	28697
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)	22278	21652	20659	24645	20630	21150	22274	20355	20447	18691
Այլ հաշիվներ	768	1064	652	755	798	751	678	719	992	773
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	655	1052	613	643	613	611	631	719	912	750
Այլ հաշիվներ (արտարժույթով)	113	13	39	112	184	140	47	1	80	24
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***82***	***-2087***	***760***	***2826***	***21921***	***13413***	***-17613***	***12384***	***28216***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13269***	***1758***	***1270***	***-7806***	***-21164***	***833***	***23600***	***-474***	***-14136***
Կառավարություն	-	-13331	2454	5712	-13294	-3814	4540	5492	5099	-954
Բանկեր	-	3357	948	2087	1319	2011	-1479	-2584	2365	-1628
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-4100	-2351	50	-1300	0	0	2000	-1500	-500
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր		2052	1038	4505	-1751	-995	-2423	-550	5888	5710
Զուտ այլ ակտիվներ	-	-1243	-607	-2024	2418	-20355	-4652	20142	-2050	-5843
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-7720***	***2113***	***-1005***	***-5442***	***1540***	***11388***	***10744***	***9484***	***11864***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13187***	***-330***	***2030***	***-4979***	***757***	***14246***	***5987***	***11909***	***14080***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13018	799	-1791	2189	2341	8594	11101	8359	9082
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	160	276	-269	-3195	-2058	4602	-3237	3187	6973
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)		-626	-993	3987	-4016	521	1123	-1918	91	-1756
Այլ հաշիվներ	-	297	-412	103	43	-47	-73	41	272	-219
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	397	-438	30	-29	-2	20	88	193	-162
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-100	26	73	72	-45	-93	-46	79	-56
(տոկոսային փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***0.04***	***-1.0***	***0.4***	***1.3***	***10.1***	***5.6***	***-7.0***	***5.3***	***11.5***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-93.8***	***6.4***	***4.9***	***-32.0***	***-65.7***	***1.6***	***44.9***	***-1.6***	***-48.1***
Կառավարություն	-	-77.1	8.0	20.3	-59.2	-10.7	11.5	15.7	17.3	-3.9
Բանկեր	-	79.4	12.5	24.5	12.4	16.8	-10.6	-20.7	23.9	-13.3
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր		9.6	4.4	18.3	-6.0	-3.6	-9.2	-2.3	25.2	19.5
Զուտ այլ ակտիվներ	-	-6.1	-3.2	-10.9	14.6	-107.5	-328.8	332.0	-14.6	-48.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-3.9***	***1.1***	***-0.5***	***-2.9***	***0.8***	***6.2***	***5.5***	***4.6***	***5.5***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-6.6***	***-0.2***	***1.1***	***-2.6***	***0.4***	***7.7***	***3.0***	***5.8***	***6.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	8.4	0.6	-1.3	1.5	1.6	5.9	7.2	5.1	5.2
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	0.7	1.2	-1.2	-14.2	-10.7	26.8	-14.9	17.2	32.1
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)		-2.8	-4.6	19.3	-16.3	2.5	5.3	-8.6	0.4	-8.6
Այլ հաշիվներ	-	38.7	-38.7	15.8	5.7	-5.9	-9.7	6.1	37.9	-22.1

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:

[2] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները:

[3] ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար:

[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[5] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05	Հ - 06	Փ - 06	Մ - 06	Ա - 06	Մ - 06	Հ - 06	Հ - 06	Օ - 06	Ս - 06
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18584**	**23303**	**18359**	**11422**	**10142**	**12737**	**7792**	**10872**	**18786**	**9524**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	89535	99275	93370	94447	74764	78043	74528	80744	86600	74413
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-64663	-69449	-68882	-77425	-59513	-59991	-61357	-63635	-61500	-58063
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-6289	-6524	-6129	-5601	-5109	-5315	-5379	-6237	-6315	-6826
ԶՆԱ	**201896**	**199523**	**202659**	**216026**	**214294**	**209763**	**218019**	**215453**	**214952**	**222382**
Կառավարություն	22262	19237	19237	21160	22112	21732	21594	21762	19837	21549
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	71555	71059	70956	75682	63408	56555	64145	60760	65254	77011
Պահանջներ ԿԲ նկատմամբ	83454	82833	82797	87598	77747	73662	78784	75606	82808	92350
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-11899	-11775	-11840	-11916	-14339	-17107	-14639	-14846	-17555	-15339
Տնտեսություն	188500	188328	192105	201581	211493	215743	219036	219296	220333	225510
Ձեռնարկություններ	98715	97609	99139	103291	108610	110014	109512	108364	107660	111828
Դրամով	41041	41228	42045	43075	46168	47259	48389	48069	48547	49954
Արտարժույթով	57616	56330	57042	60164	62407	62721	61088	60260	59078	61726
Արժեթղթեր	59	52	52	52	35	35	35	35	35	148
Տնային տնտեսություններ	83098	82797	85233	91205	94655	96636	100969	102572	103346	103633
Դրամով	29408	28877	28683	30024	30916	33106	35807	37431	40333	42931
Արտարժույթով	53690	53921	56549	61182	63739	63530	65162	65141	63013	60702
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	141	136	122	233	162	188	236	251	180	182
Դրամով	86	81	76	180	110	135	183	201	134	133
Արտարժույթով	55	54	47	53	51	53	54	50	46	50
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6546	7786	7611	6852	8067	8905	8319	8110	9147	9866
Դրամով	4945	6089	6003	5574	6655	7645	6954	7064	7988	8691
Արտարժույթով	1602	1697	1608	1278	1413	1260	1366	1046	1159	1175
Զուտ այլ ակտիվներ	-80420	-79100	-79640	-82398	-82719	-84267	-86756	-86365	-90472	-101688
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3481	3506	3469	3647	3458	3465	3549	3628	3735	3842
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	2136	4019	3415	2335	1836	1964	2481	2814	2906	2477
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-386	-2227	-1919	-1084	-262	-204	-382	-696	-756	-432
Ներդրումներ փայաբաժիններում	479	497	497	513	589	590	600	608	614	620
Միջբանկային պահանջներ	5139	4968	5350	5136	5517	8146	8988	8666	4921	4332
Այլ ակտիվներ	38693	39823	42942	42780	43196	47643	50161	52695	51881	51375
Միջբանկային պարտավորություններ	-4568	-4519	-4812	-4646	-5403	-8062	-8845	-8336	-4833	-4032
Թողարկված պարտատոմսեր	-519	-522	-526	-530	-529	-4795	-4704	-4701	-4530	-4310
Կապիտալ հաշիվներ	-95087	-95835	-97573	-99506	-99887	-100470	-102653	-104633	-106267	-117846
Այլ պարտավորություններ	-29786	-28811	-30482	-31043	-31235	-32544	-35952	-36410	-38141	-37712
ԱՎԱՆԴՆԵՐ	**220480**	**222826**	**221018**	**227447**	**224437**	**222499**	**225811**	**226325**	**233738**	**231906**
Դրամով ավանդներ	79836	75380	77156	80000	79504	80002	84564	87137	89849	103410
Ցպահանջ ավանդներ	57095	52884	53789	55857	55595	56719	61139	63015	63849	73953
Ժամկետային ավանդներ	22741	22496	23368	24142	23909	23284	23425	24122	26000	29458
Ավանդներ արտարժույթով	140644	147446	143862	147448	144933	142497	141247	139188	143889	128496
Ցպահանջ ավանդներ	58244	63990	59472	66935	67687	67143	68527	67017	75572	62247
Ժամկետային ավանդներ	82401	83456	84389	80512	77246	75354	72720	72171	68316	66249

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05[6]	Հ - 06	Փ - 06	Մ - 06[6]	Ա - 06	Մ - 06	Հ - 06[6]	Հ - 06	Օ - 06	Ս - 06[6]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***233314***	***238115***	***231084***	***224907***	***226454***	***250969***	***259438***	***244905***	***265202***	***284157***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***132245***	***116533***	***121625***	***133563***	***131359***	***107637***	***111321***	***135787***	***131660***	***121238***
Կառավարություն	4968	-11388	-8933	-1298	-13641	-17834	-13432	-7773	-4598	-3840
Տնտեսություն	188522	188349	192126	201601	211513	215761	219053	219313	220350	225525
Ձեռնարկ. և կազմակերպ.	98715	97609	99139	103291	108610	110014	109512	108364	107660	111828
որից՝ կուտակված տոկոսներ	851	908	843	958	985	1009	912	986	1028	1009
Տնային տնտեսություններ	83119	82819	85253	91225	94674	96655	100986	102589	103362	103649
որից՝ կուտակված տոկոսներ	1260	1388	1362	1430	1355	1434	1462	1504	1495	1409
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	141	136	122	233	162	188	236	251	180	182
որից՝ կուտակված տոկոսներ	1	1	1	1	1	1	1	0	0	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6546	7786	7611	6852	8067	8905	8319	8110	9147	9866
որից՝ կուտակված տոկոսներ	20	17	16	19	21	22	17	17	25	20
Զուտ այլ ակտիվներ	-61245	-60429	-61568	-66740	-66513	-90290	-94300	-75754	-84092	-100447
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***224802***	***207189***	***208809***	***210910***	***212696***	***215970***	***229466***	***241503***	***252893***	***276876***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***365559***	***354648***	***352709***	***358470***	***357813***	***358606***	***370759***	***380692***	***396862***	***405395***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	144311	130758	131039	130268	132579	135356	144270	153647	162132	172716
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	57750	53935	54402	56500	56208	57330	61770	63734	64760	74702
որից՝ կուտակված տոկոսներ	20	27	38	28	34	47	26	40	62	34
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	22741	22496	23368	24142	23909	23284	23425	24122	26000	29458
որից՝ կուտակված տոկոսներ	297	303	304	326	370	363	312	341	361	404
Արտարժույթով ավանդներ	140757	147459	143900	147560	145117	142636	141294	139189	143969	128520
Ցպահանջ [5]	58356	64002	59511	67047	67871	67283	68574	67018	75652	62271
որից՝ կուտակված տոկոսներ	7	13	17	9	18	25	9	16	24	8
Ժամկետային	82401	83456	84389	80512	77246	75354	72720	72171	68316	66249
որից՝ կուտակված տոկոսներ	621	638	635	679	720	712	681	694	669	680
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***4801***	***-7031***	***-6177***	***1547***	***24515***	***8469***	***-14533***	***20297***	***18955***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-15711***	***5092***	***11938***	***-2204***	***-23722***	***3684***	***24466***	***-4127***	***-10422***
Կառավարություն	-	-16356	2455	7634	-12342	-4194	4402	5660	3175	758
Տնտեսություն	-	-172	3777	9475	9912	4249	3292	260	1036	5176
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1106	1530	4152	5319	1404	-502	-1148	-704	4168
որից՝ կուտակված տոկոսներ	-	56	-64	115	26	25	-98	74	42	-19
Տնային տնտեսություններ	-	-301	2435	5972	3449	1981	4331	1603	774	287
որից՝ կուտակված տոկոսներ	-	128	-26	68	-75	79	28	41	-8	-86
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-5	-13	110	-71	26	48	15	-71	2
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	1240	-175	-759	1215	837	-585	-210	1037	719
որից՝ կուտակված տոկոսներ	-	-3	-1	3	2	1	-5	0	8	-5
Զուտ այլ ակտիվներ	-	817	-1140	-5171	227	-23777	-4010	18546	-8338	-16356
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-17613***	***1619***	***2101***	***1786***	***3274***	***13496***	***12037***	***11390***	***23983***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-10911***	***-1939***	***5761***	***-657***	***793***	***12153***	***9932***	***16170***	***8533***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-13553	281	-771	2311	2777	8914	9377	8485	10583
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3815	466	2098	-292	1121	4441	1964	1026	9942
որից՝ կուտակված տոկոսներ	-	7	11	-10	6	12	-21	15	22	-28
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	-245	872	774	-233	-625	141	697	1879	3457
որից՝ կուտակված տոկոսներ	-	6	1	22	44	-7	-52	29	21	43
Արտարժույթով ավանդներ	-	6702	-3558	3659	-2443	-2481	-1343	-2105	4780	-15449
Ցպահանջ	-	5646	-4492	7536	824	-588	1291	-1556	8635	-13382
որից՝ կուտակված տոկոսներ	-	6	4	-8	9	7	-16	7	8	-16
Ժամկետային	-	1056	933	-3877	-3267	-1892	-2633	-549	-3855	-2067
որից՝ կուտակված տոկոսներ	-	17	-4	45	41	-8	-32	13	-25	11

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***2.1***	***-3.0***	***-2.7***	***0.7***	***10.8***	***3.4***	***-5.6***	***8.3***	***7.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-11.9***	***4.4***	***9.8***	***-1.6***	***-18.1***	***3.4***	***22.0***	***-3.0***	***-7.9***
Կառավարություն	-	-329.2	21.6	85.5	-950.6	-30.7	24.7	42.1	40.8	16.5
Տնտեսություն	-	-0.1	2.0	4.9	4.9	2.0	1.5	0.1	0.5	2.3
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1.1	1.6	4.2	5.1	1.3	-0.5	-1.0	-0.6	3.9
Տնային տնտեսություններ	-	-0.4	2.9	7.0	3.8	2.1	4.5	1.6	0.8	0.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-3.7	-9.8	90.2	-30.6	16.4	25.7	6.2	-28.1	1.2
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	18.9	-2.2	-10.0	17.7	10.4	-6.6	-2.5	12.8	7.9
Զուտ այլ ակտիվներ	-	1.3	-1.9	-8.4	0.3	-35.7	-4.4	19.7	-11.0	-19.4
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	-	***-7.8***	***0.8***	***1.0***	***0.8***	***1.5***	***6.2***	***5.2***	***4.7***	***9.5***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	-	***-3.0***	***-0.5***	***1.6***	***-0.2***	***0.2***	***3.4***	***2.7***	***4.2***	***2.2***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-9.4	0.2	-0.6	1.8	2.1	6.6	6.5	5.5	6.5
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-6.6	0.9	3.9	-0.5	2.0	7.7	3.2	1.6	15.4
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	-1.1	3.9	3.3	-1.0	-2.6	0.6	3.0	7.8	13.3
Արտարժույթով ավանդներ	-	4.8	-2.4	2.5	-1.7	-1.7	-0.9	-1.5	3.4	-10.7
Ցպահանջ	-	9.7	-7.0	12.7	1.2	-0.9	1.9	-2.3	12.9	-17.7
Ժամկետային	-	1.3	1.1	-4.6	-4.1	-2.4	-3.5	-0.8	-5.3	-3.0

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:

[2] ՁԱՄ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ՁԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի ՁԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2005	2006								
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	674.2	680.4	668.0	674.7	680.0	744.8	761.1	726.5	755.9	817.1
Համախառն միջազգային պահուստներ	759.7	766.1	753.6	760.3	765.6	787.4	803.7	812.1	841.5	902.7
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	10.4	5.5	18.5	13.4	18.6	12.4	12.5	22.0	21.8
Արտարժույթ [2]	749.5	755.7	748.2	741.8	752.2	768.8	791.3	799.6	819.6	880.8

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով և կուտակման սկզբունքով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2005 [4]	2006									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Վարկեր [1]											
Իրավաբանական անձանց											
ՀՀ դրամով	16.3	15.9	16.5	15.7	15.3	15.5	14.4	15.1	14.9	11.7
ԱՄՆ դոլարով	13.5	12.8	13.6	14.2	14.2	13.9	13.2	13.5	14.1	14.3
Ֆիզիկական անձանց										
ՀՀ դրամով	22.0	21.5	21.4	21.5	20.9	21.0	21.7	21.6	20.7	20.8
ԱՄՆ դոլարով	20.3	22.7	22.7	22.4	22.6	22.4	22.6	22.6	22.4	22.1
Ավանդներ [1]											
Իրավաբանական անձանցից											
ՀՀ դրամով	6.5	6.1	5.9	5.1	5.5	6.5	4.5	5.2	5.5	5.3
ԱՄՆ դոլարով	5.2	3.8	5.2	3.4	4.0	4.5	4.5	3.8	3.7	2.6
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամով	6.4	6.8	5.9	5.4	5.7	5.9	6.8	5.6	6.4	6.8
ԱՄՆ դոլարով	4.4	4.7	4.7	3.7	4.9	4.7	5.5	5.1	5.7	5.0
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.5	3.5	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.25	4.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.5
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	12.0	12.0	7.0	7.0	7.0	7.0	7.5
ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի եկամտաբերությունը [2,3]	4.3	4.3	4.3	4.7	5.1	5.4	5.4	5.1	5.3	5.6
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	-	-	4.1	4.3	4.7	4.9	4.9	4.9	5.0	5.0
Պետական միջնաժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	-	4.9	4.9	4.9	-	-	6.1	-	-	6.0

[1] *Հաշվարկված են որպես մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջի) ներգրավված/տեղաբաշխված միջոցների միջին կշռված տոկոսադրույք:*

[2] *Ներառված են բոլոր ժամկետայնության արժեթղթերը:*

[3] *Ներկայացված են առաջնային շուկայում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունները:*

[4] *Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ[1]	Տոկոսադրույք	Վարկի ծավալ[1]	Տոկոսադրույք
2005				
Հունվար	9850	1.75	-	-
Փետրվար	19070	1.75	-	-
Մարտ	23910	1.75	-	-
Ապրիլ	16540	1.75	-	-
Մայիս	7250	1.75	-	-
Հունիս	6950	1.75	-	-
Հուլիս	5900	1.75	-	-
Օգոստոս	12150	1.39	-	-
Սեպտեմբեր	5400	1.0	-	-
Հոկտեմբեր	13480	1.0	-	-
Նոյեմբեր	16900	1.0	-	-
Դեկտեմբեր	14250	1.0	-	-
2006				
Հունվար	10300	1.0	-	-
Փետրվար	5400	1.0	-	-
Մարտ	4700	1.0	-	-
Ապրիլ	1300	1.0	-	-
Հուլիս	6000	1.0	-	-
Օգոստոս	20200	1.0	-	-
Սեպտեմբեր	24400	1.5	-	-

[1] *Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Ռեպո համաձայնագրերի ծավալը[1]	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայնագրերի ծավալը[1]	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2005				
Հունվար	-	-	2017.5	4.5
Մարտ	-	-	2535.5	3.75
Ապրիլ	-	-	2194.4	3.75
Մայիս	-	-	2008.0	3.75
Հունիս	-	-	6469.8	3.75
Հուլիս	-	-	6022.7	3.75
Օգոստոս	-	-	1279.7	3.0
Սեպտեմբեր	-	-	704.1	3.0
2006				
Հունվար	-	-	590.4	3.5
Փետրվար	-	-	2058.6	4.0
Ապրիլ	2104	4.0	511.7	4.0
Մայիս	10 217	4.0	-	-
Հունիս	7 717	4.0	-	-
Հուլիս	6994	4.0	-	-
Օգոստոս	8503	4.25	521.2	4.25
Սեպտեմբեր	6930	4.50	-	-

[1] *Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(հազար ԱՄՆ դոլար)

ժամկետ	Արտարժույթի տրամադրման սվոփի ծավալը[1]	Միջին կշռված տոկոսադրույքը	Արտարժույթի ներգրավման սվոփի ծավալը[1]	Միջին կշռված տոկոսադրույքը
2005				
Հունիս	2300	0.54	-	-
2006				
Ապրիլ	2100	-0.8	-	-
Մայիս	1500	-1.1	-	-
Հուլիս	2000	-1.4	-	-
Օգոստոս	4000	-1.1	-	-
Սեպտեմբեր	-	-	-	-

[1] *Մարումները հանված չեն:*

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ցուցանիշ	Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը									
	մինչև 7 օր		8 – 14 օր		15 – 28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
Հունվար	1540.76	3.81	3693.61	4.54	2119.73	4.35	875.58	4.89	**8229.68**	**4.39**
Առավելագույն տոկոսադրույք		5.00		6.00		6.00		6.00		**6.00**
Նվազագույն տոկոսադրույք		3.00		3.50		3.50		4.00		**3.00**
Ստանդարտ շեղում		0.77		0.69		0.60		0.74		**0.76**
Փետրվար	2812.91	3.55	2385.79	3.79	267.40	4.00	516.25	4.10	**5982.35**	**3.71**
Առավելագույն տոկոսադրույք		4.50		4.50		4.00		4.50		**4.50**
Նվազագույն տոկոսադրույք		3.00		3.00		4.00		4.00		**3.00**
Ստանդարտ շեղում		0.51		0.35		-		0.20		**0.44**
Մարտ	3089.72	3.36	2560.94	3.39	1581.79	3.62	403.42	4.32	**7635.86**	**3.47**
Առավելագույն տոկոսադրույք		4.00		4.00		4.00		4.50		**4.50**
Նվազագույն տոկոսադրույք		3.00		3.00		3.50		4.00		**3.00**
Ստանդարտ շեղում		0.38		0.37		0.20		0.27		**0.40**
Ապրիլ	5326.67	3.71	4089.75	3.71	1171.26	3.99	305.70	4.47	**10893.38**	**3.76**
Առավելագույն տոկոսադրույք		4.50		4.50		4.50		5.00		**5.00**
Նվազագույն տոկոսադրույք		3.00		3.20		3.25		4.00		**3.00**
Ստանդարտ շեղում		0.39		0.34		0.27		0.50		**0.39**
Մայիս	7912.50	4.30	4181.06	4.40	1426.32	4.61	675.19	4.51	**14195.06**	**4.37**
Առավելագույն տոկոսադրույք		5.00		5.00		5.00		5.00		**5.00**
Նվազագույն տոկոսադրույք		3.75		3.50		3.75		4.00		**3.50**
Ստանդարտ շեղում		0.32		0.32		0.32		0.42		**0.51**
Հունիս	10223.73	4.89	6148.81	5.13	1968.08	5.29	670.00	5.87	**19310.61**	**5.04**
Առավելագույն տոկոսադրույք		6.00		7.00		6.00		6.00		**7.00**
Նվազագույն տոկոսադրույք		4.00		4.00		4.10		5.50		**4.00**
Ստանդարտ շեղում		0.57		0.55		0.59		0.26		**0.59**
Հուլիս	5761.45	4.99	3827.12	5.26	1012.10	5.45	508.00	6.04	**11108.68**	**5.17**
Առավելագույն տոկոսադրույք		6.00		6.00		6.75		6.50		**6.75**
Նվազագույն տոկոսադրույք		4.00		4.75		5.00		5.75		**4.00**
Ստանդարտ շեղում		0.52		0.32		0.60		0.25		**0.49**
Օգոստոս	5607.88	4.75	2812.74	4.87	2120.00	5.20	1942.58	4.81	**12483.20**	**4.86**
Առավելագույն տոկոսադրույք		6.00		6.00		6.00		5.75		**6.00**
Նվազագույն տոկոսադրույք		4.25		4.25		5.00		4.25		**4.25**
Ստանդարտ շեղում		0.41		0.32		0.29		0.44		**0.41**
Սեպտեմբեր	8059.51	5.20	8484.73	5.35	1654.93	5.20	401.03	5.91	**18600.20**	**5.28**
Առավելագույն տոկոսադրույք		6.25		6.25		6.00		6.00		**6.25**
Նվազագույն տոկոսադրույք		4.50		4.75		5.00		5.65		**4.50**
Ստանդարտ շեղում		0.36		0.29		0.34		0.16		**0.34**
Ընդամենը	50385.12	4.51	38434.55	4.68	13321.61	4.72	6297.74	4.97	**108439.02**	**4.62**
Առավելագույն տոկոսադրույք		6.25		7.00		6.75		6.50		**7.00**
Նվազագույն տոկոսադրույք		3.00		3.00		3.25		4.00		**3.00**

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 05	Հ - 06	Փ - 06	Մ - 06	Ա - 06	Մ - 06	Հ - 06	Հ - 06	Օ - 06	Ս - 06
1	446.77	-	449.22	450.60	-	-	427.12	-	413.33	395.89
2	447.84	-	449.05	450.65	-	445.61	426.57	-	412.54	-
3	-	-	448.95	450.65	450.50	445.50	-	418.52	411.77	-
4	-	453.27	-	-	450.78	445.61	-	418.28	410.20	394.52
5	449.11	452.26	-	-	451.15	446.26	426.37	-	-	393.63
6	451.91	-	448.75	451.10	451.36	446.91	425.09	418.03	-	393.56
7	454.58	-	448.84	451.87	451.36	-	423.49	417.67	408.09	393.16
8	458.15	454.82	448.90	-	-	-	421.68	-	406.13	392.55
9	456.11	454.77	449.64	453.13	-	-	418.94	-	402.63	-
10	-	454.49	449.82	452.92	451.57	446.75	-	417.99	399.66	-
11	-	453.46	-	-	451.57	446.40	-	417.71	397.97	391.48
12	452.86	453.43	-	-	451.41	445.70	418.18	417.71	-	389.33
13	451.37	453.72	450.67	453.16	451.25	-	417.19	417.21	-	387.74
14	449.79	-	450.93	452.94	451.25	-	417.19	417.40	398.08	386.09
15	446.39	-	451.21	452.80	-	443.43	418.03	-	397.45	386.09
16	444.21	455.92	450.98	452.51	-	442.14	420.93	-	398.07	-
17	-	455.22	450.52	450.94	450.98	440.05	-	417.40	401.24	-
18	-	454.91	-	450.94	450.15	438.41	-	417.05	401.24	386.00
19	445.29	453.32	-	-	450.06	437.34	421.68	417.27	-	385.22
20	447.09	451.51	450.40	449.87	449.46	-	420.64	417.46	-	384.53
21	448.98	-	450.34	449.67	448.81	-	419.83	417.71	400.92	-
22	448.98	-	450.63	449.36	-	437.37	419.04	-	399.88	384.03
23	446.25	447.58	450.71	449.06	-	436.89	418.48	-	399.39	-
24	-	446.91	451.10	449.38	-	435.28	-	417.45	398.22	-
25	-	446.80	-	-	448.03	433.87	-	417.33	397.76	384.03
26	446.25	446.86	-	-	447.36	432.70	418.48	417.57	-	383.50
27	447.49	447.31	450.86	449.55	446.53	-	418.66	416.87	-	383.00
28	447.83	-	450.68	449.77	446.14	-	418.71	416.11	397.53	382.00
29	448.51	-	-	450.09	-	431.04	418.79	-	397.36	381.50
30	450.19	449.10	-	451.08	-	429.55	418.79	-	396.96	-
31	-	449.19	-	450.92	-	427.56	-	415.32	396.54	-
ժամանակահատվածի վերջ	450.19	449.19	450.68	450.92	446.14	427.56	418.79	415.32	396.54	381.50
ժամանակահատվածի միջին	449.36	451.74	450.11	451.00	449.99	439.73	420.63	417.40	401.87	387.89

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	Մնացորդը 30.06.06թ. դրությամբ	Փոփոխություններ					Մնացորդը 30.09.06թ. դրությամբ
		Գործառնությունների հաշվին	Գների փոփոխությունների հաշվին	Փոխարժեքի փոփոխությունների հաշվին	Այլ ճշտումներ	Ընդհանուր փոփոխություններ	
Ակտիվներ	**197.8**	**11.95**	**0.0**	**2.6**	**0.0**	**14.5**	**211.05**
Ուղղակի ներդրումներ արտերկրներում	7.6	0.4	0.0	0.9	0.0	1.3	7.6
Բաժնետիրական կապիտալ	6.3	0.4		0.9		1.3	7.6
Վերաներդրված շահույթ	1.32						
Այլ կապիտալ		196.5					
Պորտֆելային ներդրումներ	4.2	0.1	0.0	0.0	0.0	0.1	4.3
Բաժնետոմսեր	0.45	0.0		0.0		0.1	0.5
Պարտքային պարտավորություններ	3.73	0.08	0.00	-0.04	0.00	0.04	3.77
Պարտատոմսեր	3.22	0.07		-0.04		0.03	3.25
Դրամական շուկայի գործիքներ	0.51	0.01		0.00		0.01	0.52
Այլ ներդրումներ	186.03	11.39	0.00	1.69	0.00	13.07	199.11
Վարկեր	21.86	-7.07	0.00	0.91	0.00	-6.16	15.70
Երկարաժամկետ	2.45	0.26		0.02		0.28	2.73
Կարճաժամկետ	19.41	-7.33		0.88		-6.44	12.97
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	161.89	18.45	0.00	0.74	0.00	19.20	181.09
Կանխիկ դրամական միջոցներ	38.52	21.17		0.20		21.37	59.89
Ավանդներ	123.37	-2.72	0.00	0.55	0.00	-2.17	121.20
Երկարաժամկետ	3.07	1.09		0.00		1.09	4.17
Կարճաժամկետ	120.30	-3.81		0.55		-3.27	117.04
Այլ ակտիվներ	2.28	0.00	0.00	0.04	0.00	0.04	2.31
Երկարաժամկետ							
Կարճաժամկետ	2.28	0.00		0.04	0.00	0.04	2.31
Պարտավորություններ	**254.30**	**48.72**	**0.00**	**4.48**	**-0.02**	**53.19**	**307.79**
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	75.81	30.10	0.00	1.60	0.00	31.70	107.52
Բաժնետիրական կապիտալ	64.41	13.87		0.00		13.87	78.28
Վերաներդրված շահույթ	7.31	16.23		1.60		17.83	25.14
Այլ կապիտալ	4.09	0.00		0.00		0.00	4.09
Պորտֆելային ներդրումներ	13.46	-0.01	0.00	-0.02	0.00	-0.01	13.74
Բաժնետոմսեր	3.46	-0.01		0.00		-0.01	3.45
Պարտքային պարտավորություններ	10.00	0.00	0.00	-0.02	0.00	0.00	10.29
Պարտատոմսեր	10.00	0.00		0.00		0.00	10.00
Դրամական շուկայի գործիքներ	0.00	0.31		-0.02		0.29	0.29
Այլ ներդրումներ	165.03	18.63	0.00	2.90	-0.02	21.50	186.53
Վարկեր	65.01	12.09	0.00	1.38	0.00	13.47	78.49
Երկարաժամկետ	40.98	14.61		2.43		17.04	58.03
Կարճաժամկետ	24.03	-2.52		-1.05		-3.57	20.46
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	93.88	5.81	0.00	1.43	-0.02	7.22	101.10
Երկարաժամկետ	8.81	0.19		0.73		0.91	9.73
Կարճաժամկետ	85.07	5.62		0.70	-0.02	6.30	91.38
Այլ պարտավորություններ	6.14	0.72	0.00	0.09	0.00	0.81	6.95
Երկարաժամկետ							
Կարճաժամկետ	6.14	0.72		0.09		0.81	6.95
Զուտ ներդրումային դիրքը	**-56.47**	**-36.76**	**0.00**	**-1.89**	**0.02**	**-38.65**	**-96.73**

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

մլն ԱՄՆ դոլար

	2006 II եռամսյակ						2006 III եռամսյակ					
		Արտարժույթ						Արտարժույթ				
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Այլ	Ընդամենը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Այլ	Ընդամենը
Ակտիվներ	**7.3**	**147.3**	**32.4**	**6.2**	**4.7**	**190.5**	**1.2**	**145.9**	**53.9**	**7.0**	**2.3**	**209.1**
Կապիտալի արժեթղթեր	-	5.8	0.0	0.9	0.0	6.7	-	6.4	0.0	1.0	0.0	7.4
Պարտքային արժեթղթեր	0.0	3.3	0.4	0.0	0.0	3.7	0.0	3.4	0.4	0.0	0.0	3.8
Կանխիկ դրամական միջոցներ	-	30.4	5.2	2.7	0.2	38.5	-	50.1	5.6	3.8	0.4	59.9
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	5.8	15.5	0.5	0.0	0.1	16.1	0.9	13.6	1.2	0.0	0.1	14.8
Ավանդներ	0.0	90.4	26.1	2.5	4.3	123.4	0.0	70.6	46.6	2.2	1.8	121.2
Այլ	1.6	1.8	0.1	0.1	0.0	2.0	0.3	1.8	0.1	0.0	0.0	2.0
Պարտավորություններ	**91.4**	**148.4**	**11.9**	**0.8**	**1.6**	**162.9**	**104.5**	**153.2**	**13.5**	**1.1**	**0.4**	**168.2**
Կապիտալի արժեթղթեր	67.9	-	-	-	-	0.0	81.7	-	-	-	-	0.0
Պարտքային արժեթղթեր	0.0	10.0	0.0	0.0	0.0	10.0	0.3	4.1	0.0	0.0	0.0	4.1
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	2.4	61.6	2.3	0.0	1.1	65.0	5.9	71.5	1.1	0.0	0.0	72.6
Ավանդներ	11.7	72.4	9.1	0.4	0.3	82.2	16.0	74.9	9.5	0.5	0.2	85.1
Այլ	9.5	4.4	0.5	0.4	0.3	5.7	0.6	2.7	2.8	0.6	0.2	6.4
Զուտ դիրք*	**-84.1**	**-1.2**	**20.5**	**5.3**	**3.0**	**27.6**	**-103.3**	**-7.3**	**40.4**	**5.9**	**1.9**	**40.9**

** Ի տարբերություն փողի զանգվածում ՀՀ առևտրային բանկերի ՀԱՄ-ի, այստեղ ներառված են նաև ՀՀ առևտրային բանկերի «Կապիտալի արժեթղթերը»՝ պարտավորությունների մասում, ոչ փոխարկելի արտարժույթը և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվներն ու պարտավորությունները:*

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

հազար ԱՄՆ դոլար

	2005 թվական											
	I եռ.			II եռ.			III եռ.			Հունվար-սեպտեմբեր		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	79605	14895	64710	124181	21543	102637	163535	17610	145925	367320	54048	313272
ԱՄՆ	17690	4739	12951	16322	11180	5142	24982	5719	19263	58994	21638	37356
Գերմանիա	3592	992	2600	3948	1398	2550	4298	1591	2707	11838	3980	7858
Մեծ Բրիտանիա	2350	928	1421	2409	765	1644	2851	640	2211	7610	2333	5277
Շվեյցարիա	2927	1092	1835	3042	398	2644	1365	337	1028	7334	1826	5508
Ֆրանսիա	996	454	542	1428	296	1132	1872	1096	776	4297	1846	2450
Թուրքիա	143	1516	-1373	285	2315	-2030	284	2148	-1865	712	5980	-5268
ԱՄԷ	2720	2331	389	670	1964	-1295	695	1419	-724	4085	5714	-1630
Ուկրաինա	823	1801	-978	1380	1670	-290	1745	1108	637	3948	4578	-631
Այլ երկրներ	14462	9058	5404	20369	12120	8249	18369	8794	9574	53200	29972	23227
Ընդամենը	125308	37806	87501	174033	53648	120384	219996	40462	179534	519336	131917	387419

հազար ԱՄՆ դոլար

	2006 թվական											
	I եռ.			II եռ.			III եռ.			Հունվար-սեպտեմբեր		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	99985	18488	81497	161408	24752	136657	223498	33517	189981	484891	76756	408135
ԱՄՆ	20277	2923	17354	21897	3713	18184	28452	3088	25364	70627	9725	60903
Գերմանիա	2272	1251	1021	3098	1463	1635	2828	3312	-484	8199	6027	2172
Մեծ Բրիտանիա	2226	472	1753	2742	926	1816	1921	545	1376	6889	1944	4946
Շվեյցարիա	2022	1080	941	1544	676	869	1623	359	1264	5189	2115	3074
Ֆրանսիա	1270	447	823	1853	811	1042	1487	1199	288	4609	2457	2153
Թուրքիա	290	1646	-1356	302	1324	-1022	342	2094	-1752	934	5064	-4130
ԱՄԷ	551	2395	-1845	888	1914	-1025	613	1582	-969	2052	5891	-3839
Ուկրաինա	1325	1093	232	1698	1638	60	2262	1444	818	5285	4175	1110
Այլ երկրներ	17476	8233	9244	20854	9893	10962	21618	12054	9563	59948	30180	29769
Ընդամենը	147694	38029	109665	216287	47110	169177	284644	59194	225450	648625	144333	504291

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2006 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ)

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.06	*31.06.06*	*31.12.05*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամական միջոցներ	647,231	636,344	269,956
Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	282,903,159	286,363,231	203,034,141
ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք	60,154,009	62,189,715	63,808,889
Ներդրումային արժեթղթեր			
- առևտրային նպատակներով պահվող ներդրումներ	21,158,016	2,172,659	-
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	31,368,626	42,230,050	1,301
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	-	135,171,386
Այլ ակտիվներ արտարժույթով	2,796,208	1,126,658	422,267
	399,027,249	**394,718,657**	**402,707,940**
Ակտիվներ ՀՀ դրամով			
Վարկեր և այլ պահանջներ	13,069,061	13,609,596	11,949,866
Ներդրումային արժեթղթեր			
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	19,852,164	20,061,336	8,077,077
Հիմնական միջոցներ	6,325,245	6,073,500	6,088,280
Ոչ նյութական ակտիվներ	53,148	61,472	77,914
Օտարման ենթակա հիմնական միջոցներ	1,941	1,372	1,393
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	587,178	592,691	325,472
	39,888,737	**40,399,967**	**26,520,002**
Ընդամենը ակտիվներ	**438,915,986**	**435,118,624**	**429,227,942**
Պարտավորություններ			
Արտարժույթով պարտավորություններ			
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	26,844,539	31,076,528	31,206,005
- ԱՄՀ	64,332,929	71,720,058	79,411,892
- Հայաստանի կառավարություն	33,265,008	18,498,528	39,493,293
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	1,721,446	1,899,269	1,990,006
Այլ պարտավորություններ արտարժույթով	775,959	20,255,220	101,068
	126,939,881	**143,449,603**	**152,202,264**
ՀՀ դրամով պարտավորություններ			
Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ	182,930,857	154,389,243	155,274,723
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	31,826,788	23,146,155	30,359,201
- ԱՄՀ	51,820,453	57,001,058	59,199,628
- Հայաստանի կառավարություն	29,321,959	39,245,726	21,993,849
Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով	1,165,064	1,046,925	1,199,662
Թողարկված արժեթղթեր	34,961,289	23,908,331	21,482,856
ՀՀ դրամով այլ պարտավորություններ	181,627	151,996	149,996
	332,208,037	**298,889,434**	**289,659,915**
Ընդամենը պարտավորություններ	**459,147,918**	**442,339,037**	**441,862,179**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,870,486	9,870,486	9,870,486
Կուտակված շահույթ / (վնաս) և այլ պահուստներ	(42,936,655)	(29,925,136)	(22,604,723)
ՀՀ կառավարության ներդրում ՀՀ կենտրոնական բանկի կապիտալում	12,734,237	12,734,237	-
Ընդհանուր կապիտալ	**(20,231,932)**	**(7,220,413)**	**(12,634,237)**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	**438,915,986**	**435,118,624**	**429,227,942**

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 5-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2006 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[1] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցների մեծությունները:

Վերլուծությունում դիտարկվել են վեց ժամանակաշրջաններում.

1) *ՀՀ-ում գործող բոլոր բանկերի[2] (30.09.00թ.՝ 31 բանկ, 31.12.01թ.՝ 30 բանկ, 30.06.03թ.՝ 22 բանկ, 30.06.04թ.՝ 20 բանկ, 30.06.05թ. և 30.06.06թ.՝ 21 բանկ) վարկային ներդրումների և ավանդների ծավալներն ու աճի միտումները:*
2) *30.06.06թ. դրությամբ գործող 21 առևտրային բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալներն ու աճի միտումները:*

Վարկային ներդրումների և ներգրավված միջոցների աճի միտումները դիտարկվում են ըստ յուրաքանչյուր ժամանակահատվածում ՀՀ-ում գործող բոլոր բանկերի համընդհանուր ցուցանիշների և ըստ ներկայումս գործող 21 բանկերի համընդհանուր ցուցանիշների համեմատության, որպեսզի պատկերը լինի առավել իրատեսական և ամբողջական: Այսպես՝ դիտարկվող ժամանակաշրջաններում գործող բանկերի քանակը համադրելի չէ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային համակարգը «լքած» բանկերի ավանդների և վարկերի մի մասը, տեղափոխվելով այլ բանկեր, մնացել է համակարգի ներսում, անհրաժեշտ է դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում համեմատել ՀՀ-ում առկա բոլոր բանկերի համընդհանուր ցուցանիշները: Միևնույն ժամանակ, լուծարվող բանկերում զգալի ծավալի վատորակ վարկեր դուրս են գրվել և չեն մնացել համակարգի ներսում, ու միայն բոլոր բանկերի ցուցանիշների համեմատությունը չի կարող լիովին արտահայտել ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի համընդհանուր վարկային ներդրումների և ավանդների կայուն աճի միտումները: Այս առումով, համեմատվում են նաև ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 21 բանկերի համընդհանուր ցուցանիշները հինգ ժամանակաշրջաններում:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ տարածքում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 236%-ով, իսկ եթե ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները համեմատվում են 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների հետ, ապա աճը կազմում է 133% (*տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1*): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում դրսևորել են կայուն աճի միտումներ, ինչը չի կարելի ասել յուրաքանչյուր ժամանակահատվածում գործող բոլոր բանկերի համընդհանուր վարկային ներդրումները համեմատելիս. մասնավորապես 30.09.00-31.12.01թթ. ժամանակահատվածում արձանագրվել է վարկային ներդրումների նվազում *(տե՛ս աղյուսակ 1 և հավելված 1.5–1.7)*: Սա հիմնականում պայմանավորված է բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչված բանկերի վատորակ վարկերի դուրսգրումներով:

Աղյուսակ 1. Բանկերի տրամադրած վարկերի ծավալները

---


* Ð»ÕÇÝ³ÏÝ»ñÇ ï»ë³Ï»ïÝ»ñÁ Ï³ñáÕ »Ý ãÑ³ÙÁÝÏÝ»É ÐÐ Ï»Ýïñá Ý³Ï³Ý µ³ÝÏÇ å³ßïáÝ³Ï³Ý ¹Çñùáñáß Ù³ÝÁ:

[1] ÈÔÐ-ÇÝ í»ñ³µ»ñáÕ ïíÛ³ÉÝ»ñÁ ï³ñ³Ýç³ïí³Í ã»Ý ÐÐ Ù³ñ½³ÛÇÝ ïíÛ³ÉÝ»ñÇó, ¨ ÈÔÐ áõ ÐÐ ï³ñ³ÍùÝ»ñÇ ïíÛ³ÉÝ»ñÁ ¹Çï³ñÏí³Í »Ý Ñ³ÙÁÝ¹Ñ³Ýáõñ Ñ³Ù³ï»ùëïáõÙ:

[2] §´áÉáñ µ³ÝÏ»ñ¦ ³ñï³Ñ³Ûïáõ ÃÛáõÝÁ í»ñ³µ»ñáõÙ ¿ ¹Çï³ñÏíáÕ Ûáõñ³ù³ÝãÛáõñ Å³Ù³Ý³Ï³Ñ³ïí³Íáõ Ù ÐÐ-áõÙ ·áñÍáÕ µáÉáñ ³é¨ïñ³ÛÇÝ µ³ÝÏ»ñÇÝ:

	30.09.00 (հազար դրամ)	31.12.01 (հազար դրամ)	30.06.03 (հազար դրամ)	30.06.04 (հազար դրամ)	30.06.05 (հազար դրամ)	30.06.06 (հազար դրամ)	30.09.00-30.06.06 (%)	30.06.05-30.06.06 (%)
Բոլոր բանկերը	96933303	87004070	91163755	124386546	159043302	225326643	133	42
30.06.06թ. դրությամբ գործող բանկերը	67143742	74703547	90146752	124386546	159043302	225326643	236	42


Գծապատկեր 1



30.06.05-30.06.06թթ. ժամանակահատվածում բանկային համակարգի վարկային ներդրումների քանակը ավելացել է 17%-ով և կազմել 299.6 հազար, ընդ որում՝ 30.06.06թ. Երևանին բաժին է ընկել ակտիվների քանակի 28%-ը (30.06.05թ. Երևանին բաժին է ընկել ակտիվների քանակի 30%-ը):

Բոլոր մարզերում հիմնականում արձանագրվել է վարկային ներդրումների աճ, ընդ որում՝ առավել արտահայտված աճ է արձանագրվել վերջին երեք տարիներին (*տե՛ս գծապատկեր 2*):

Գծապատկեր 2




** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել:*

Հաշվետու տարում (30.06.05-30.06.06թթ.) բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ. Երևանում՝ 42% աճ (45.2 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացյալ 10 մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն ավելացել են 41%-ով (21.1 մլրդ դրամով): Այսպես՝ և՛ Երևանում տեղաբաշխված վարկերը, և՛ ՀՀ մնացյալ 10 մարզերում ու ԼՂՀ-ում տեղաբաշխված ընդհանուր վարկերն ավելացել են գրեթե հավասարաչափ, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը գրեթե չի փոփոխվել՝ կազմելով 67.8% (*տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2*):

Հաշվետու տարում (30.06.05-30.06.06թթ.) վարկային ներդրումների միջին աճի տեմպը (42% աճ) գերազանցել է ԼՂՀ-ն, Սյունիքի, Տավուշի, Արմավիրի և Կոտայքի մարզերը (*տե՛ս հավելված 1.7):*


Գծապատկեր 3



1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ,

Ընդհանուր առմամբ, 2000-2006թթ. վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 70%-ի շրջանակներում: Բացառություն է 31.12.01 թ., երբ Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել է՝ պայմանավորված այդ ժամանակաշրջանում Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով (որն հետագայում դարձյալ նվազել է) և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ (*տե՛ս գծապատկեր 4*):

Գծապատկեր 4



Երևանում 30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումներն ավելացել են 127%-ով, ընդ որում՝ վարկերի աճը հիմնականում ապահովվել է վերջին երեք տարիներին: Ըստ ներկայումս գործող բանկերի՝ նշված աճը 30.09.00-30.06.06թթ. ժամանակաշրջանում կազմել է 247%, ընդ որում՝ 30.06.03-30.06.04թթ. Երևանում վարկային ներդրումներն ավելացել են 37%-ով, 30.06.04-30.06.05թթ.՝ 24%-ով, իսկ 30.06.05-30.06.06թթ.՝ 42%-ով:

Հաշվետու տարում ՀՀ 10 մարզերում (բացառությամբ Երևանի) և ԼՂՀ-ում վարկերի ընդհանուր աճի 80%-ը ապահովվել է սպառողական, արդյունաբերության և առևտրի ճյուղերում վարկային ներդրումների աճի արդյունքում: Արդյունաբերության ճյուղի վարկավորման համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել Սյունիքի (էներգետիկայի վարկերի աճ) և Կոտայքի (սննդի արդյունաբերության աճ) մարզերում: Առևտրի վարկերի համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել ԼՂՀ-ում, իսկ սպառողական վարկերի՝ Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերում:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ ընդհանուր վարկային ներդրումների ծավալներում (բոլոր բանկերը) 30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում արձանագրվել են հետևյալ փոփոխությունները. արդյունաբերության ճյուղում վարկային ներդրումների ծավալներն ավելացել են 35%-ով, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 210%-ով, գյուղատնտեսության ճյուղում՝ 67%-ով, շինարարության ճյուղում՝ 270%-ով, առևտրի ճյուղում՝ 365%-ով, սպառողական վարկերը (ներառյալ հիփոթեքայինը)՝ 326%-ով, իսկ այլ ճյուղերի ընդհանուր վարկերը նվազել են 5%-ով *(տե՛ս հավելված 1.5)*: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է գյուղատնտեսության, առևտրի և սպառողական վարկերի աճ:

Հաշվետու տարվա (30.06.05-30.06.06թթ.) ընթացքում.

- արդյունաբերության վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Տավուշի և Վայոց ձորի մարզերի,
- գյուղատնտեսության վարկերը նվազել են Երևանում, ԼՂՀ-ում, Արարատի և Լոռու մարզերում, իսկ մյուս մարզերում արձանագրվել է աճ,
- շինարարության վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց ձորի, Լոռու և Սյունիքի մարզերի,
- տրանսպորտի և կապի վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց ձորի և Տավուշի մարզերի,
- առևտրի և սպառողական (ներառյալ հիփոթեքային) վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության՝ 30.09.00-30.06.2006 թթ. ժամանակաշրջանում ընդհանուր վարկային ներդրումներում արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը զգալի նվազել է, իսկ առևտրի և սպառողական ոլորտի վարկերինը՝ էապես աճել *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2 . Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%

	30.09.00	31.12.01	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6
Շինարարություն	2	3	4	4	4	4
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2
Առևտուր	11	17	20	21	22	22
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6
Սպառողական վարկեր	18	14	21	27	31	34
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6

30.06.2006 թ. դրությամբ ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի հիմնականում բնեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում ընդհանուր վարկերի 3%-ը) *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերը մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են բաշխված.

ամենամեծ տեսակարար կշիռն ունի Արմավիրի մարզը (18%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց ձորի մարզը (3%):

Հատկանշական է, որ Երևանում, գյուղատնտեսության վարկերից հետո, ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական վարկերը՝ 65% (նախորդ տարի՝ 60%): Սպառողական վարկերի 32%-ը կազմում են հիփոթեքային վարկերը՝ 16 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Հաշվետու տարում Երևանում սպառողական (ներառյալ հիփոթեքային) վարկերի տեսակարար կշռի ավելացումը ամբողջովին պայմանավորված է հիփոթեքային վարկերի աճով, որի 10.7 մլրդ դրամ աճի 9.8 մլրդ դրամը բաժին է ընկել Երևանին: Ամենամեծ կենտրոնացվածությունն ունի հիփոթեքային վարկավորումը՝ 93%-ը Երևանում (30.06.05թ.՝ 96%):

Մնացած բոլոր ճյուղերի վարկավորման տեսակարար կշիռը Երևանում նվազել է:

Վարկային ներդրումների ժամկետայնության առումով հատկանշական է, որ 30.06.05-30.06.06թթ. ժամանակաշրջանում, կարճաժամկետ վարկերի համեմատությամբ, երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) ապահովել են ավելի արագատեմպ աճ, որի արդյունքում ընդհանուր վարկերում վերջիններիս տեսակարար կշիռը կտրուկ ավելացել է՝ 13 տոկոսային կետով, և կազմել 65%: Եթե 30.06.05թ. միայն Երևանում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզում էին գերակշռում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռները, ապա 30.06.06թ. միայն Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի և Արմավիր մարզերում են երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռները փոքր-ինչ զիջել կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռներին (*տե՛ս հավելված 1.3*): Երկարաժամկետ վարկերի տեսակարար կշռի ավելացմանը էապես նպաստել է նաև հիփոթեքային վարկերի աճը:

30.09.00թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում կարճաժամկետ (մինչև 1 տարի) վարկերը կազմել են 53%, 31.12.01թ. դրությամբ՝ 41 %, 30.06.03թ. դրությամբ՝ 50%, 30.06.04թ. դրությամբ՝ 53% և 30.06.05թ. դրությամբ՝ 52%:

Հաշվետու տարում (30.06.05-30.06.06թթ. ժամանակահատվածում) վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 7.9 տոկոսային կետով և 30.06.06թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 59.0%-ը (*տե՛ս հավելված 1.4*): Վայոց ձորի մարզում արձանագրվել է արտարժութային վարկերի տեսակարար կշռի աճ, իսկ մնացած մարզերում և ԼՂՀ-ում՝ նվազում: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևան քաղաքում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզերում ըստ արժույթի տեսակի վարկային ներդրումների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արժութային վարկերի տեսակարար կշիռները՝ ըստ ժամանակահատվածների

%

Վարկեր	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	*Ընդամենը*
Արտարժույթով 30.09.00թ.	88	46	85	84
Արտարժույթով 31.12.01թ.	82	83	75	82
Արտարժույթով 30.06.03թ.	65	92	90	71
Արտարժույթով 30.06.04թ.	65	67	72	68
Արտարժույթով 30.06.05թ.	67	55	74	67
Արտարժույթով 30.06.06թ.	59	39	64	59

Աղյուսակ 3-ից երևում է, որ ընդհանուր վարկային ներդրումներում ՀՀ դրամով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կայուն աճի միտում ունի, որը վկայում է ներկայումս ՀՀ դրամի նկատմամբ ինչպես վարկառուների, այնպես էլ վարկատուների վստահության բարձրացման մասին:

Հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[3] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և 30.06.06 թ. դրությամբ կազմել 34% (ընդհանուր վարկերի կառուցվածքում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերը գերակշռում են միայն ԼՂՀ-ում (53 %)) (*տե՛ս հավելված 1.1*): Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերի 68%-ը բաշխվել է Երևան քաղաքում, 8%-ը՝ ԼՂՀ-ում (*տե՛ս հավելված 1.2*): Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 24%-ով, իսկ 30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը)՝ 256%-ով (*տե՛ս հավելվածներ 1.5 և 1.7*):

[3] *öáùñ ¨ ÙÇçÇÝ µÇ½Ý»ëÁ Ý»ñ³éáõÙ ¿ ³ÛÝ Çñ³í³µ³Ý³Ï³Ý ³ÝÓ³Ýó ¨ ³ÝÑ³ï Ó»éÝ³ñÏ³ï»ñ»ñÇÝ, áñáÝó ³ßË³ïáÕÝ»ñÇ Ãí³ù³Ý³ÏÁ Ï³½ÙáõÙ ¿ ÙÇÝã¨ 100 ³ßË³ïáÕ:*


Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը հաշվետու տարում նվազել է, սակայն դեռևս բավականին բարձր է՝ 30.06.06թ. ժամանակահատվածում ըստ մարզերի տատանվել է 10%-32%-ի սահմաններում (30.06.05թ.՝ 19%-48%-ի)՝ վկայելով ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորությունը: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում բարձր է Տավուշի (32%) և Արագածոտնի (30%) մարզերում, իսկ միջազգային ծրագրերի շրջանակներում վարկեր չեն տրամադրվել ԼՂՀ-ում (*տե՛ս հավելված 1.1*):

Հաշվետու տարում միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի ծավալները նվազել են 4%-ով, իսկ 30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը)՝ աճել 62%-ով (*տե՛ս հավելվածներ 1.5 և 1.7*):

Միջազգային ծրագրերով ստացված վարկերը հատկացվել են հիմնականում Երևանին, Արմավիրի, Լոռու և Արարատի մարզերին (*տե՛ս գծապատկեր 5*):

Գծապատկեր 5

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ մարզերի



1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ,


Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռն աճել է 0.5 տոկոսային կետով՝ 30.06.06թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի 1.5%-ը (*տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 6*):

Համակարգի ընդհանուր ժամկետանց վարկերի 73 %-ը բաժին է ընկնում միայն Երևանին, այն դեպքում, երբ Երևանն ընդհանուր վարկային ներդրումներում ունի 68% տեսակարար կշիռ (*տե՛ս հավելված 1.2*):

30.09.00թ. դրությամբ 31 բանկերի ընդհանուր վարկերի մեջ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 14%, 31.12.01թ. դրությամբ՝ 9%, 30.06.03թ. դրությամբ՝ 2.7%, 30.06.04թ. դրությամբ՝ 1.6%, 30.06.05թ. դրությամբ՝ 1.0%, ինչը վկայում է ներկայումս վարկերի որակի բարձրացման մասին:

Գծապատկեր 6

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր վարկերում



Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.06թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 13 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի ընդամենը 3.8%-ը:

30.06.05-30.06.06թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 81%-ով (3.8 մլրդ դրամով), ընդ որում՝ խոշոր աճ է արձանագրվել արդյունաբերության, առևտրի ճյուղերի վարկերում և սպառողական վարկերում:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	*Վարկերի ծավալ*				*Տեսակարար կշիռ (%)*			
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06
Արդյունաբերություն	717895	497017	1371292	2203405	23	36	29	26
այդ թվում՝ սննդի	591431	313166	741669	1152500	14	30	16	14
Գյուղատնտեսություն	268669	312495	536673	1045803	14	14	11	12
Առևտուր	53991	110849	270017	1235345	5	3	6	15
Շինարարություն	120900	88759	112000	192884	4	6	2	2
Սպառողական	492011	864447	1584248	2396334	40	25	34	28
Այլ ճյուղեր	324007	314835	831509	1434126	14	16	18	17
Ընդամենը	1977473	2184827	4705739	8507896	100	100	100	100

Հաշվետու տարում (30.06.05-30.06.06թթ.) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ավելացել են վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալները, ընդ որում՝ զգալի մեծացել են Կոտայքի, Լոռու, Շիրակի և Արարատի մարզերում տեղաբաշխած միջոցների տեսակարար կշիռները և նվազել Երևանի վարկավորման տեսակարար կշիռը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի

	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4


2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[4]

30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ներգրավված միջոցները ՀՀ և ԼՂՀ տարածքներում ավելացել են 163%-ով (166.7 մլրդ դրամով) և կազմել 269.0 մլրդ դրամ, ընդ որում՝ 194%-ով (84.2 մլրդ դրամով) ավելացել են ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները և 140%-ով (82.5 մլրդ դրամով)՝ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները (*տե՛ս հավելված 1.5*):

Ներկայիս գործող բանկերի ներգրավված միջոցները նշված ժամանակահատվածում աճել են 289%-ով (199.9 մլրդ դրամով). 291%-ով (94.9 մլրդ դրամով) աճել են ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները և 288%-ով (105.0 մլրդ դրամով)՝ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները (*տե՛ս հավելված 1.6*):

Ըստ ընդհանուր ներգրավված միջոցների տարածքային բաշխվածության՝ նկատվում է կենտրոնացվածության բարձր մակարդակ. ներգրավված միջոցների 83%-ը բաժին է ընկնում Երևանին, 6%-ը՝ ԼՂՀ-ին և մնացյալ 11%-ը բաշխված է 10 մարզերի միջև: Ընդ որում՝ 30.06.05թ. Երևանին բաժին էր ընկնում ներգրավված միջոցների դարձյալ 83%-ը, իսկ 30.09.00թ.՝ 84%-ը: 30.06.06թ. դրությամբ՝ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների 89%-ը, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների 77 %-ը բաժին է ընկնում Երևանին (*տե՛ս հավելված 2.2*):

Գծապատկեր 7



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.06 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 222.8 մլրդ դրամ:*


30.09.00-30.06.06 թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Հաշվետու տարում, բացառությամբ Սյունիքի մարզի, մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ավանդների ծավալներն ավելացել են, ընդ որում՝ ավանդների կտրուկ աճ է արձանագրվել ԼՂՀ-ում՝ պայմանավորված իրավաբանական անձանց հաշիվների աճով, իսկ Սյունիքի մարզում ավանդների կտրուկ նվազումը դարձյալ

[4] *Ü»ñ·ñ³íí³Í ÙÇçáóÝ»ñÁ Ý»ñ³éáõÙ »Ý ÙÇ³ÛÝ ýÇ½ÇÏ³Ï³Ý ¨ Çñ³í³µ³Ý³Ï³Ý ³ÝÓ³ÝóÇó Ý»ñ·ñ³íí³Í óå³Ñ³Ýç (Ý»ñ³éÛ³É µ³ÝÏ³ÛÇÝ Ñ³ßÇíÝ»ñÁ) ¨ Å³ÙÏ»ï³ÛÇÝ ³í³Ý¹Ý»ñÁ:*

պայմանավորված է իրավաբանական անձանց հաշիվների ավելացմամբ (*տե՛ս գծապատկեր 7*):

Եթե 30.06.05թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում էին 3 մարզերում, ապա 30.06.06թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են 6 մարզերում: Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 4 տոկոսային կետով՝ կազմելով 47% (*տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 8*):


Գծապատկեր 8



30.06.06թ. Երևանին բաժին էր ընկնում ընդհանուր ֆիզիկական անձանց ավանդների 89%-ը և ընդհանուր իրավաբանական անձանց ավանդների 77%-ը. 30.06.05թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 91%-ը և 78%-ը, իսկ 30.09.00թ.՝ 83%-ը և 85%-ը: 30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում ֆիզիկական անձանց ավանդների կենտրոնացվածությունը Երևանում աճել է, իսկ իրավաբանական անձանց ավանդների կենտրոնացվածությունը՝ նվազել:

Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է 1 տոկոսային կետով և կազմել 41%, իսկ ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը կազմել է 59% (30.09.00թ. դրությամբ ժամկետային ավանդներին բաժին է ընկել ընդհանուր ներգրավված միջոցների 63%-ը, իսկ ցպահանջ ավանդներին՝ 37%-ը): Բացառությամբ ԼՂՀ-ի, ինչպես նաև Արմավիրի, Վայոց ձորի և Շիրակի մարզերի, մյուս բոլոր մարզերում ցպահանջ ավանդների ծավալները գերազանցում են ժամկետային ավանդների ծավալները (*տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 9*):

Գծապատկեր 9




30.06.06թ. Երևանին բաժին էր ընկնում ընդհանուր ցպահանջ ավանդների 85%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 80%-ը, ընդ որում՝ 30.06.05թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 82%-ը և 84%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (64 %) կազմում են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է բոլոր մարզերում, իսկ ժամկետային միջոցների գերակշիռ մասը (64 %) կազմում են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը դարձյալ արտահայտված է գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի և ԼՂՀ-ի (*տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կազմում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը աճել է 8 տոկոսային կետով՝ 30.06.06թ. դրությամբ կազմելով ընդհանուր ներգրավված միջոցների 34%-ը. 30.09.00թ. դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24 %-ը, իսկ 30.06.05թ. դրությամբ՝ 26%-ը: Դրամով ավանդների տեսակարար կշիռը զիջում է արտարժույթով ներգրավված ավանդների տեսակարար կշռին Արմավիրի մարզում, Շիրակի մարզում, Սյունիքի մարզում, ԼՂՀ-ում և Երևանում (*տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 10*):

Գծապատկեր 10



Հատկանշական է, որ 30.09.00թ. միայն ԼՂՀ-ում, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում ներգրավված միջոցների կազմում մեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում դրամով ներգրավված միջոցներին, 30.06.03թ.՝ միայն Տավուշի մարզում, 30.06.04թ.՝ Արարատի, Կոտայքի, Տավուշի մարզերում, 30.06.05թ. հինգ մարզերում, իսկ 30.06.06թ.՝ յոթ մարզերում արդեն իսկ գերակշռում են դրամով ներգրավված միջոցները (*տե՛ս գծապատկեր 10*):


Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.06թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 41%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 76%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (*տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11*):

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.06թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ծավալները 19%-ով գերազանցել են վարկային ներդրումների ծավալները (30.06.05թ.՝ 45%-ով): Սակայն գրեթե բոլոր մարզերում վարկային ներդրումների ծավալները գերազանցել են ներգրավված միջոցների ծավալները: Միայն

Սյունիքի մարզում, ԼՂՀ-ում և Երևանում ավանդների ծավալները գերազանցել են վարկերի ծավալները: Այս առումով, մարզերի համար վարկավորման հիմնական աղբյուր է հանդիսանում Երևանը: Միևնույն ժամանակ, կարևորելով միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի նշանակությունը, հարկ է նշել, որ մարզերում ընդհանուր վարկերում էական դեր ունեն նաև վերոնշյալ վարկերը (*տե՛ս գծապատկեր 11*):


Գծապատկեր 11



* *Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.06թ. ներգրավված միջոցները կազմել են 222.8 մլրդ դրամ և վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 138.6:*

Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով կարելի է նշել, որ հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[5] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են և 30.06.06թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 888 մլն դրամ և 744 մլն դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 12)*:

Գծապատկեր 12




Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 485 մլն դրամ և 459 մլն դրամ, իսկ 30.06.05թ.՝ համապատասխանաբար 852 մլն դրամ և 587 մլն դրամ:

[5] ¶ÉË³Ù³ë³ÛÇÝ ·ñ³ë»ÝÛ³ÏÝ»ñÁ ¹Çïí»É »Ý áñå»ë Ù³ëÝ³×ÛáõÕ:

Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ դրսևորել են աճի միտումներ՝ 30.06.06թ. դրությամբ կազմելով համապատասխանաբար 80 հազար դրամ և 67 հազար դրամ (*տե՛ս հավելված 3 և գծապատկեր 13*):

Գծապատկեր 13



Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 27 հազար դրամ և 25 հազար դրամ, իսկ 30.06.05թ. դրությամբ՝ 69 հազար դրամ և 47 հազար դրամ:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.06թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 133%-ով (ըստ ներկայումս գործող բանկերի ցուցանիշների՝ 236% աճ) և կազմել 225.3 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Ինչ վերաբերում է ըստ մարզերի վարկային ներդրումների կենտրոնացվածությանը, ապա պետք է նշել, որ թեպետ 30.06.00-30.06.06թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 1.6 տոկոսային կետով, այնուամենայնիվ դեռևս վարկային ներդրումների կենտրոնացվածությունը Երևանում բարձր է (67.8%), ընդ որում՝ 2000թ-ից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

2. Ավանդները (բոլոր բանկերը) ավելացել են 163%-ով (ըստ ներկայումս գործող բանկերի ցուցանիշների՝ 289% աճ) և կազմել 269.0 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ինչ վերաբերում է ըստ մարզերի ավանդների կենտրոնացվածությանը, ապա 30.06.00-30.06.06թթ. ժամանակահատվածում Երևանում ավանդների կենտրոնացվածությունը նվազել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 83% և 2000թ-ից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

3. Նշված ժամանակահատվածում վարկերի աճն ուղեկցվել է վարկերի որակի նկատելի բարելավմամբ. 30.09.00թ. ժամկետանց վարկերը կազմում էին ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.06թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի ընդամենը 1.5%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը (1.9%) Շիրակի մարզը (1.4%) և Կոտայքի մարզը՝ (1.3%)):

4. Դիտարկվող ժամանակահատվածում ըստ տնտեսության ճյուղերի ընդհանուր վարկային ներդրումների կշիռներում զգալի նվազել է արդյունաբերության ճյուղի վարկավորման տեսակարար կշիռը և աճել են առևտրի և սպառողական վարկերի տեսակարար կշիռները (ընդ որում՝ վերոնշյալ միտումները դրսևորվել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում):

30.06.05-30.06.06թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում աճել են և՛ վարկային ներդրումների, և՛ ավանդների մեծությունները, բացառությամբ Սյունիքի մարզի, որտեղ արձանագրվել է ավանդների նվազում: Վարկային ներդրումների աճի տեմպը (41.7% աճ) 2.5 անգամ գերազանցել է ավանդների աճի տեմպը (16.4% աճ): Վարկային ներդրումների աճի տեմպը գերազանցել է ավանդների աճի տեմպը Երևանում, Արմավիրի, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերում, իսկ մնացած 6 մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է հակառակ պատկերը:

2. Հատկանշական է, որ ՀՀ 10 մարզերում (բացառությամբ Երևանի) և ԼՂՀ-ում վարկերի 21.1 մլրդ դրամ ընդհանուր աճի 80%-ը ապահովվել է սպառողական, արդյունաբերության և առևտրի ճյուղերում վարկային ներդրումների աճի արդյունքում:

3. Երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) ապահովել են ավելի արագատեմպ աճ՝ 76%, քան կարճաժամկետ վարկերը՝ 4% (այս պատկերն է եղել Երևանում և ՀՀ բոլոր մարզերում): Նշվածի արդյունքում ընդհանուր վարկերում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 13 տոկոսային կետով և կազմել 65%:

4. ՀՀ դրամով տրամադրված վարկերը ապահովել են ավելի արագատեմպ աճ՝ 75%, քան արտարժույթով տրամադրված վարկերը՝ 25% (այս պատկերն է եղել ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց ձորի մարզի): Նշվածի արդյունքում ընդհանուր վարկերում դրամային վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 8 տոկոսային կետով և կազմել 41%:

5. Ավանդների աճը հիմնականում ապահովվել է ֆիզիկական անձանց ավանդների աճի հաշվին, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 5 տոկոսային կետով՝ 30.06.06թ. կազմելով ընդհանուր ավանդների 47%-ը (բացի Արագածոտնի մարզից և ԼՂՀ-ից, ՀՀ մյուս բոլոր մարզերում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ):

6. Դրամային ավանդների աճը (52% աճ) զգալի գերազանցել է արտարժութային ավանդների աճը (4% աճ), որի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 8 տոկոսային կետով՝ 30.06.06թ. կազմելով ընդհանուր ավանդների 34%-ը (բացառությամբ Կոտայքի և Տավուշի մարզերի, ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է դրամային ավանդների առաջանցիկ աճի տեմպ):

30.06.06թ. դրությամբ

Դրամով ներգրավված միջոցների ծավալները գերազանցել են արտարժույթով ներգրավված միջոցների ծավալները ՀՀ յոթ մարզերում, իսկ արտարժույթով վարկերի ծավալները գերազանցել են դրամով վարկերի ծավալները բոլոր մարզերում (ԼՂՀ-ում՝ հակառակը):

Ժամկետային ավանդների ծավալները գերազանցել են ցպահանջ ավանդների ծավալները ԼՂՀ-ում, և երեք մարզերում՝ Արմավիրի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում:

Բացառությամբ Արմավիրի, Տավուշի, Շիրակի և Վայոց ձորի մարզերի, ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) գերազանցել են կարճաժամկետ վարկերի մեծությունը:

Ըստ վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքի՝ կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր է արդյունաբերության, գյուղատնտեսության ճյուղերի և սպառողական վարկերում.

Արդյունաբերության ճյուղ. այս ճյուղում Սյունիքի և Կոտայքի մարզերը կենտրոնացվածություն են դրսևորում. տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 58%-ը և 40%-ը հատկացված է արդյունաբերության ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. Արագածոտնի և Տավուշի մարզերում տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 41%-ը և 31%-ը հատկացված է գյուղատնտեսության ճյուղին:

Սպառողական վարկեր. բոլոր մարզերում բավականին բարձրացել է սպառողական վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 23-59%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերը (51 - 59%):

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունի Վայոց ձորի մարզը, որտեղ տրամադրված վարկերի 12%-ը հատկացված է այս ոլորտին:

Շինարարության ճյուղ. համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունի ԼՂՀ-ն, որտեղ տրամադրված վարկերի 11%-ը հատկացված է այս ճյուղին:

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրված վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ: Ամենամեծ տեսակարար կշիռն ունի Գեղարքունիքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի ընդամենը 2%-ն է հատկացված այս ճյուղին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
13.95 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2006